ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՍՏԻՊԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1860

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՅՔ.

ԱՄՍԱՑԵՑՈՒԱԾ 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՈՒԽՏԱՒՈՐՔ. (Շարունակութիւն) Մկրտիչ Վարդանեանց: 179—210
ՆԱՊՕԼԵՕՆ ՄԵԾԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Շարունակութիւն).
Մկրտիչ Վարդանեանց: . . . . . 210—235
ՀԱՑՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ, կամ Սուրբ Թարգմանիչներու
դարը. (Շարունակութիւն). Ս. Նազարեանց: . . 236—256
ՄԱՀՈՒԱՆ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ՕՐԻՈՐԴԻ ՓԱՆԵԱՆՑ.
Ս. Նազարեանց: . . . . . 257—257

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1860.



ՍԵՊՏԵՄԲԵՐ 1860 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՈՒԽՏԱՒՈՐՔ.

(Շարունակութիւն.)

2. ՄԵՒՈՒԵԱՑ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ

ԵՒ

ԿԱԽԱՐԴԱՑ ՆԱՒԸ։

Բաղմօրա քաղաքումը հայրս մի փոքրիկ խանութ ունէր։ Ո՛չ ունէաը էր նա և ոչ չքաւոր. իւր գործումը միշտ ղեղչ գոլով, կրկեր չէր ապահնում կոյր բադղին և յաջողութեանը, վախենալով որ շատին ցանկացողը շատ անգամ իւր ունեցածն էս կորուսանումէ։ Մէնծ ջանքով գտատիպարակեց ինձ, և ցանկանալով, որ մի օր նորան օգնական լինիմ, ինձ միշտ իւր գործին էր զբաղեցնում։ Երբ որ տատն և ուխը տարիս լրացաւ, հայրս առաջին անգամ վըստահացաւ մի ծանրակշիռ առ և արտաքին ձեռնարկութիւն առնել, և հազար ոսկի գահեկան ծոլով ուղարկեց օտար աշխարհ, վա-

ձառաք (ապրանք) պնելու համար: Ա՛յս բանիկ յետոյ իսկոյն մեռաւ նա. հաւանական է որ վիշալը և անհանդստութիւնը իսկական պատճառն էին նորա անակնկալ մահուն, և այդ մահը առաւել բաղդ էր նորա համար, քան թէ անբաղդութիւն, այն պատճառով, որ մի քանի շաբաթ յետոյ բոթուելից լուր առացանք որ այն նաւը, որի մէջ դրանվուածքը հօրս բոլոր հարստութիւնը, ծովի մէջ խորասոյզ է եղած: Ա՛յս անյաջողութիւնը ամենևին ձնշեց ոչ իմ երիտասարդական աշխոյժը: Հօրս բոլոր մնացած կարասիքը առձեռն պատրաստ ալծամթով ծախեցի և դնացի հետաւոր աշխարհ բաղդ որոնելու. իմ հետ առայ միայն իմ ծեր ծառան, որ ամենևին չէր կամենում բաժանվել ինձանից, պատրաստ էր իմ հետ մանուկից լինել ցաւի և ուրախութեան:

Կալսօրայի նաւահանդստում վարձեցինք նաւ և յաջողակ հողմով ճանապարհ ընկանք դէպ ի Հնդկաստան: Տասն և հինգ օր հանդիստ և հանդարտ նաւելուց յետոյ, մի օր նաւապետը յայտնեց որ ծովի վերայ սոսկալի փոթորիկ է բարձրանալու: Նա մեծ ծապէս շփոթված էր երևում, մանաւանդ այն պատճառով, որ այդ ճանապարհը գրեթէ անծանօթ էր նորան, և նա չգիտէր թէ վերահաս փոթորկի երեսից ինչպէս պէտք էր պաշտպանութիւն դտանել:

Վերայ հասաւ պայծառ, բայց ցուրտ երեկոն, և նաւապետը կարծումէր թէ սխալվել էր փոթորկի մասին: Յանկարծ մեր մօտից անցաւ մի նաւ, որ յառաջուց ամենևին աեսած չէինք. խառնաղնդոր աղաղակներ, լերք հայհոյանք և սարսափելի ձիչ լսվեցաւ նորա տախտակամածի վերայ: Ա՛յս իրողութիւնը ինձ զարմանալի թուեցաւ, մանաւանդ այն մասին, որ ամենեքեան առհասարակ պիտոյ էր զգուշանային փոթորկից: Նաւապետը, որ այն րոպէին իմ մօտ կանգնած էր, դիտակի պէս դունատվեցաւ: «Իմ նաւը անպատճառ կը կորչի. այս նաւը մահ է գուշակում»: Ա՛յն ինչ ես կամենում այս կեղտուր խօսքերի մեկնութիւնը հարցանել, յանկարծ նաւաստիները լացով ու աղաղակով վազեցին եկան նաւապետի առաջև և ասացին. «Տես, այժմ մեք կորած ենք»:

Նաւապետը կամելով նոցա սիրտը փոքր ինչ մխիթարել սկսաւ ուրանից հոգիշահ խրատներ կարդալ. բայց ամեն բան զուր էր: Յանկարծ փոթորիկը բարձրացաւ և կէս ժամ չանցած, մեր նաւը սկսաւ ձարձառվիլ և ներս թողուլ շատ ու շատ ջուր,

որ չէինք կարողանում ջուհանով դուրս թափել: Ուրիշ հնար վրկութեան չտեսանելով, շտապեցինք մի թիակալար նաւակ յած թողուլ, և հազիւ թէ մեր ոտքը դրել էինք նորա մէջ, և ահա մեր նաւը աչքերիս առաջև ընկղմուեցաւ և տարաւ իւր հետ իմ բոլոր հարստութիւնքը, և ես աշխարհիս երեսին ողորմելի աղքատ մնացի: Բայց սորանով չլցվեցաւ իմ տարաբաղդութեան չափը: Փոթորիկը հետ չհետէ աւելի սաստկանում էր, ծովը եռ էր գալիս. հնար չկար նաւը կառավարելու. ես և իմ ծառան հրաժարական ողջոյն տուեցինք իրեար և խոստացանք, ինչ ևս պատահէր, մինը միւսից չբաժանվիլ: Վերջապէս լոյսը սկսաւ ծագել և փոթորիկը ևս առաւել զայրացաւ մինչև այն աստիճան, որ նաւակը գլխիվայր շրջվեցաւ: Ես յետուհետև իմ ճանապարհորդակիցքս չտեսայ և ուշաթափ եղայ: Երբ որ խելքս վերաս եկաւ, ինքս տեսայ ինձ հաստատուիմ ծառայիս գրկի մէջ, որ յաջողութեամբ ուղղել էր նաւակը և ինձ նորա մէջ էր դրել:

Փոթորիկը հանդարտած էր. մեր նաւի հետքն անգամ չէր ճնայել, բայց հեռուից մի այլ նաւ էր երևում, դէպ ի ուր տանում էին մեզ ալիքը: Երբ որ մօտեցանք նորան, խնդացանք, որ այդ նոյն իսկ նաւն էր, որ անցեալ գիշեր արագութեամբ մեր կողմից անցաւ, և նաւապետի ու նաւաստիների վերայ առհասարակ ահ ու սարսափ ձգեց: Այդ նաւի վերայ նայելով, մտմտինս դողդողում. նաւապետի նախազգուշակութեան շուտով կատարվիլը և նաւի արտաքին զարհուրելի կերպարանքը սոսկացնում էին. ինչպէս երևում էր, նա միանգամայն զօրաւոր պիտոյ է լինէր. թէև շատ մօտեցանք նորան, բայց ոչ մի հոգի չտեսանք նորա վերայ: Կարճ աղազակով օգնութիւն խնդրեցինք, բայց ոչ ոք չպատասխանեց մեզ: Սակայն այդ նաւը մեր ազատութեան մի հատ հնարը լինելով, դորա համար ևս շատ գոհ էինք Աստղիկից:

Նաւի քամահիկ երկայն չուան էր կախ ընկած. ինչքան հասանում էր մեր կարողութիւնը, քաշշումէինք թիակները, որ շուտով մօտենանք նորան. վերջապէս հասանք. և ես սկսայ բարձր ձայնով գանչել. բայց պատասխան չստացայ. նաւի մէջ խոր լռութիւն էր տիրել: Ձուանի վերայ փոթածթվելով բարձրացայ նաւի վերայ:

Բայց ինչ սարսափելի տեսարան բացվեցաւ աչքիս առաջև. բոլոր տախտակամածը արիւնով շաղախած էր և երեսունի չափ մեռած մարդիկ այս տեղ և այն տեղ ցրիւ ընկած: Մինչեն կայմի

մեռ կանդնած էր մի մարդ, պատռտական հագուստով, մերկացուցած թոռը ձեռին. ճահաճի մէջ զարկած մի մեծ բևեռ որով ամբացրած էր նա կայմի վերայ. կենդանութեան նշան չկար նորա վերայ:

Երկիւղչէց անշարժ, շուարած մնացի տեղումն, և հազիւ համարձակվումէի շունչ առնուլ: Վերջապէս ընկերս ևս բարձրացաւ նաւի վերայ և իմ պէս զարմացած մնաց տեղումը: Ոչ մի ադամորդի չէր երևում. ամեն տեղ ընկած էին զարհուրելի մեռելներ: Երկիւղածութեամբ աղօթելով և Աստուածն օգնական կանչելով մեզ, վերջապէս համարձակվեցանք յառաջ գնալ և գնել նաւը. ամեն քայլափոխում մեր աչքերը չորս կողմ էինք դարձուցանում, որպէսզի հանդիպելու չէինք մի նոր սարսափելի տեսարանի. բայց ամեն բան, ինչպէս յառաջ, անփոփոխ էր, ամենայն ինչ անկենդան և անշարժ էր բայ ի մեզ երկուքիցս և մշտածուփ համատարած ծովից: Չէինք համարձակվում բարձր ձայնով խօսել, վախենալով մի գուցէ կայմին բևեռած նաւապետը դարձուցանէ մեր վերայ իւր աղօտ և պլշած աչքերը կամ թէ մեռելներից մինը իւր գլուխը բարձրացնէ: Աստեցանք սանդուղքին, որ տանում էր նաւի տորմին յարկը, կանդնեցանք նորա վերայ. էինք կարողանում մինը միւսին խօսք ասել, թէև շատ ցանկանում էինք իմանալ մեր միտքը յայտնել:

«Պարոն, ասաց վերջապէս հաւատարիմ Ծառաս, այս տեղ սարսափելի եղեռնագործութիւն է կատարվել. բայց եթէ չարագործները տորմին յարկումն են, դարձեալ փոյթ չէ. պատճառ, լաւ է նոցա ձեռքն ընկնել, քան թէ մեռելների հետ միասին տանջամահի վերայ մնալ»: Ես հաւանեցայ նորա ասածին, և միասին ցած իջանք:

Ամեն տեղ խորին լռութիւն էր տիրել, և բայ ի մեր ոտնաձայնից և ծովի ալիքների խառնուրդենից ոչինչ չէր լսվում: Աստեցայ կայմ դրանը, ականջս ծակին դրեցի, բայց այս տեղ ևս ոչինչ չլսեցի: Բացեցի դուռը. կայմ մէջ մեծ անկարգութիւն էր. հագուստներ, ղէնքեր, զանազան անօթներ ուր ասես ցրիւ էին ընկած: Երևեցաւ որ, փորը լինչ յառաջ, նաւապետը իւր սորտադրածները հետ միասին կեր ու խում էր արել. պատճառ, խնջոյքի միջոցին դուռ ևս սեղանի վերայ էր: Ոտից խուց մեռ դալով, բոլոր նկուքին յարկը գնեցինք և գտանք այն տեղ մեծադին ապրանք, շատ

կերպանակ, ակնուանդպարիս, շաքար, եւն: Ընդայման ուրախու-
թիւն զգայի մէջս. ինձ այնպէս կը թուէր, որ կարող եմ սիրել
նաեւ, միանգամայն անտեր գառներով նոյնան: Իրրահիմ ծառայ
ինձ հասկացուց որ մեք, ինչպէս երեւոյթը, պիտոյ է շատ հեռի
լինէինք ափից, եւ առանց մեսերի օգնականութեանը, կարող չէինք
յամաք հասանել:

Նաւի մէջ շատ կերակրի պաշար կար. այժմս փոքր ինչ կաղ-
դուրեցինք կերակրով, ըմպելիքով, յետոյ նորից դնացինք տախտա-
կամածի վերայ: Առեղինների վերայ նայելով, մարմինները փշաքաղ
էին լինում:

Կամենում էինք ծովը ձգել նորանց. բայց ի՞նչպէս մեզնեմ մեր
ահն ու սարսափը, երբ տեսանք, որ անհնարին էր տեղերից շար-
ժել նորանց: Նորա այնպէս ամրացած էին տախտակների վերայ,
որ մեք կամենայինք բաժանել նորանց եւ ծովը ձգել, դարձ հասար
պիտոյ էր բոլոր տախտակամածը քանդել, բայց մեք չունէինք այդ
մասին հարկաւոր եղած գործիները: Նմանապէս անհնարին էր
նաւապետը կայմից ազատել, եւ ոչ նորա կարկամած ձեռքից հա-
նել թուրը: Ամբողջ օրը տխուր ու տրտում անցուցինք, մտա-
ծելով մեր ապագայ վիճակի վերայ: Եղեկոյան պահուն հրամայեցի
Իրրահիմին, որ երթայ նեղքին յատկը եւ այն տեղ փոքր ինչ քնէ,
եւ ինքս միայն տախտակամածի վերայ, կարծելով, դուցէ մեր մտիկ
մի նաւ անցանէր եւ ես խնդրէի նորա մէջ գառներիցից, օգնու-
թիւն հասուցանել մեզ, եւ կամ թէ մի ուրիշ հնար գառնէի ազա-
տութեան:

Ուրախութիւնը ծագեցաւ. առագաների վերայ նայելով կարծեցի թէ
ծո տան եւ մի ժամն էր. այդ միջոցին քունս տարաւ անել եւ
չկարողանալով արթուն մնալ, ընկայ մի տակառի հետեւ եւ քնեցի:
Սակայն այս քունը աւաւել նման էր թմրութեան. պատճառ, ես
լսում էի ինչպէս ծովի ալիքը զարկուում էին նաւի կողքին եւ կամ ինչ-
պէս հողմը սուլում էր առագաների եւ պարանների միջով: Յան-
կարծ ականջիս հասաւ մարդերի ազաղակ եւ նոցա ահաձայնը. թէեւ
շատ ջանք արեցի, բայց չկարողացայ քնից սթափել, որ տեսանէի
այդ եկաւորները. առաւ թէ մի անյայտ զօրութիւն կաշկանդել էր
անդամներս: Զայները, քանի գնում էր, առաւել առատանում էր.
թուում էր թէ ուրախ ամբոխը սիրել էր նաւին: Խօսողների մէջ
պարզ լսում էի մեծաւորների հրամայական ձայները. վերջապէս լսեցի

ինչպէս նոքա պարզուէին առ ապաստանեալը և ուղղուէին նաւի պատրանքները։

Փոքր առ փոքր ամենայն ինչ միթեպայտ մնքուտն, և ես այնպէսի խոր քնի մէջ ընկայ, որ երեխայութեանս օրերը անգամ չէր պատահել ինձ. և զարթեցայ այն ժամանակ, երբ որ ծագեցաւ արեգակը և իւր բոցափայլ ճառագայթներով այրեց երեսս։ Օգտմանալով աչքս չորս կողմ դարձուցի. երեկեան զիշերի անցքը, թէ նաւը, թէ մեռելները, թէ տեսածս և թէ լսածս, ի խօսքով, բոլորը երեւոյթը ինձ մի երազ։ Այլայլեցայ, որ ես նաւի մէջն եմ, և ամեն բան է, ինչպէս յառաջ։ Մեռելները անշարժ տարածած էին տախտակամածի վերայ. անշարժ կանգնած էր նաւապետը, կայմին բեւեռած։ Գնացի Իբրահիմ ծառայիս մօտ։

Իբրահիմը լսի մէջ նստած, խորին մտածմունքի մէջ էր։

«Աւազ, ակը իմ, ասայ նա, հազարապատիկ առաւել լաւ էր մեզ ծովի անդունդքի մէջ մեռանել, քան թէ այս կախարդած նաւուն պատապարվիլ և զիշեր անցուցանել»։ Ես հարցրեցի նորա պատմութեան պատճառը և նա պատմեց ինձ յետագայ անցքս.

«Ես փոքր ինչ ժամանակ հանգստացած էի, ասայ նա, յանկարծ լսեցի վերևուէն տախտակամածի վերայ ոտնաձայները և վազվզոց։ Ակզբում կարծեցի թէ այդ մեռածը դուս էկը. բայց յետայ պարզ լսեցի գոնե քսան մարդու ոտնաձայն. լսեցի որ նորա ազազակումէին և իրեար հայհոյումէին. վերջապէս մի մարդ պինդ պինդ ոտք կոխելով տանդուդքից վայր իջաւ և մտաւ խուցը։ Այդ միջոցին ես միանգամայն ուշաթափ եղայ, բայց ժամանակ առ ժամանակ ուշս վերաս էր գալիս, և արթնութեանս մէջ տեսայ այն մարդը, որ բեւեռած էր կայմին։ Նստաւ նա սեղանի առաջև տաղտկելով և զինի խմելով. նորա հետ միասին նստած էր մի սարսիշ մարդ, խակապէս նա, որ կարմիր հագուստով, մեռած ընկած էր նաւապետի մօտ. դորա միասին էլ ու խում էին առնում։»

Այսպէս պատմեց Իբրահիմը։ Այս լսելով, շատ պիտին էր երևակայել, սիրելի բարեկամք, թէ որպիսի տարնտապով լցուած պիտոյ է լինէր իմ հոգին։ Այս տակտի հանդէսը ոչ ցնորական տեսիլք էր և ոչ երազ, այլ խիստ երևոյթ։ Ես ինքս ականջս լսեցի մեռելների տանձաբաձակ անոտակութիւնը։ Տակտի բան էր այսպիսի ճառագայթոտ հոգեկիրների հետ միասին լինել։

Երկար ժամանակ մտածելուց յետոյ, վերջապէս ասաց Աբրահիմը. «Ես հա՛ իմ կարծիքն այդ մասին. հանգուցեալ մեծ հայրս ինձ ուսուցել է մի աղօթք, որ ազատում է ամէն ոչխարի զօրութենից և ամէն կերակ կախարդութիւնից։» Եւ անմիապէս Աբրահիմը կարծում թէ այն ծանր թմրութիւնը, որ եկաւ մեր վերայ, բնական չէր. և որպէս զի գալոց դիշերը ազատվինք նորանից, խրատ տուեց ջերմեռանդ սրտով կարդալ Գ՚ուրանը և աղօթք առնել։ Ես հաւանեցայ Աբրահիմի առաջարկութեանը. թէև մարգարէի օգնութիւնը շատ վստահ էինք, բայց և այնպէս ահով դողով ապաստանէինք դիշերի հասանելուն։

Սատափսի խոյն մեզ կար մի փոքրիկ մառան. ահա այն տեղ մտադիր էինք թաքչելու։ Այդ մառանի դուռը տեղ տեղ ծակեցինք, որ այն ծակերից կարողանանք տեսանել, թէ ի՞նչ են առնում խոյի մէջ. յետոյ մտանք մառանի մէջ, դուռը ներսից պինդ փակեցինք, և Աբրահիմը մառանի չորս խորշերում գրեց Սարգարէի անունը։ Այսպէս ապահովեցինք դիշերի սոսկալի տեսարանին։

Տաճն և մի ժամուն մեզ դարձեալ քունս սկսաւ տանել. այս նկատելով Աբրահիմը, խրատ տուեց ինձ կարդալ Գ՚ուրանի հոգեշահ խնամանները, և աղօթք առնել։ Ես կատարեցի նորա ասածը, և քունը թռաւ աչքիցս։ Յանկարծ նաւի վերայ եղած մարդիկը վեր կացան։ Ահան պարանները քաշելն, սահմանակամճի վերայ վազվզելն, և շատ պարզապէս կարելի էր որոշել ամէն մէնի ձայնը։ Չանի մի րոպէ տագնապով ապասելուց յետոյ, լսեցինք, որ ամէնքս դէպքից դէպ ի խուճն են գալիս։ Այն ժամանակ Աբրահիմը սկսաւ կարդալ այն խօսքերը կախարդութեան ընդդէմ, որ ուսել էր իւր մեծ հօրից.

«Գարշելի ոգիք, գեհենի որդիք,
Դեւք, յուշկապարիկք և այլք ամէնքիդ։
Յարաչեցք և քաշեցք, փնացեք ի բաց,
Զի մեր ապաւէն և յոյսն է Աստուած։»

Ճշմարիտն ասեմ, ես այնքան շատ չէի հաւատում այդ խօսքերի զօրութեանը, և երբ լսեցի որ խոյի դուռը բացվեցաւ, մանչերս փուշ փուշ եղան և մտրմինս ծակոտվեցաւ։

Մենք տեսանք ինչպէս ներս մտաւ մի բարձրահասակ, վայելուչ և զեղեցիկ դէմքով մարդ, նոյնը, որ բևեռած էր կայմին։ Ան-

կառին ցցված էր բևեռը, թափանցած ուղեղի միջով: Մերկա-ցուցած թուրը, որ նա յառաջ ձեռին ունէր բռնած, այժմ դրած էր պատուի մէջ: Նորա հետևից մի ուրիշ մարդ էր գալիս ոչ այնքան շքեղ հագուստով. դորան ևս տեսել էի մեհենների մէջ:

Սաւոպեսի — հասանականն է որ նա պիտոյ է լինէր — երեսը դունաթափ էր, մօրուքը սև և խիտ, հայեցուածքը վայրենի: Ոտի ամեն խորշերը ուշադրութեամբ զննեց. բայց մեր մատանի մտից անցանելով, մեր վերայ աննկատ ուշ չդարձուց: Երկուքը նստած սեղանի առաջև, որ դրած էր ոտի մէջ տեղում, բարձր ձայնով, դրեթէ աղաղակելով խօսում էին իրեար հետ. բայց մեք չդիտելով այն լեզուն, նորա ստամոքսից բան չհասկացանք: Նորա խօսակցութիւնը հետ դէմ տեսել աղմկալից էր դառնում: վերջ ամենայնի նաւապետը բռնցի (մուշտիով) այնպէս պինդ զարկեց սեղանին, որ բոլոր խուցը դողաց: Յետոյ տեղից վեր կացաւ, սուրը վերկայեց, և երկուքը միասին դուրս դնացին խցից:

Նորա դնալուց յետոյ մեք ազատ շունչ առանք. բայց տակաւին չվերջացաւ մեր երկիւղը: Տախտակամածի վերայ առաւել և առաւել աստիճանութեամբ աղմուկը և շփոթը. լսելութեան ոտնաձայն, աղաղակ, շտապ ծիծաղ և դորդոջոց. մեզ թուում էր որ տախտակամածը մեր դլխի վերայ պիտոյ է փուլ գար: Ընտանեկի էր դրդրոյը: Վերջապես լսվեցան զինքի շառաչիւնք և յաղթութեան աղաղակներ: Յանկարծ ամեն բան լռվեցաւ:

Վրանի մի ժամից յետոյ մեք հանդարտութիւն առանք վեր դնալու, և տեսանք որ ամեն բան ստացել էր իւր առաջին կերպարանքը. մեհենները դարձեալ իւրեանց տեղերում պատկած, անշարժ և կաշկանդած էին:

Այս կերպով քանի մի օր անցուցինք նաւի մէջ, միշտ դէպ ի արևելք նաւելով. ըստ երևութին ամբ մեզանից չէ պիտոյ հեռի լինել. բայց ինչպէս նկատեցինք, առաւօտները միշտ յառաջ էինք երթում, իսկ գիշերները յետ էինք դառնում: պատճառ, սրբը ծագելուն միշտ մի և նոյն տեղումն էինք դտանում: Գիշերները ամբ կողմից վչում էր քամին, և մեհենները նորա ընդդէմ պարզելով առագաստները յետ էին դարձուցանում նաւը, որ միևնոյն յաջողակ հողմով յառաջ էր դնում:

Այս անվերջ ձանձրալի հոդդութեանը առարտ տալու համար մեք յետոյայ հնարը դործ դրեցինք. գիշերը վերայ չհասած,

բոլոր առագաստները ժողովեցինք և իւրաքանչիւր առագաստի վերայ ամրացուցինք մի մի հատ մագաղաթ, որի վերայ գրած էին մարգարէի անունը, պէսպէս աղօթքներ Ղուրանից քաղած, այլև այն աղօթքը, որ Աբրահիմը իւր պապից ուսել էր. յետոյ, ըստ սովորութեան, փակվեցանք մեռանելումը և ահով դողով սպասում էինք թէ ինչ կը լինի: Մեզ թուում էր, որ այն գիշեր աղաղակը, ոռնաձայնը և առհասարակ շփոթը սաստիկ էր, քան թէ միւս անգամներ. բայց միւս առաւօտ տեսանք որ առագաստներին ոչնչ մոտեցել չէ ձեռքով, և ինչպէս թողել էինք, այնպէս կար ամեն բան: Ընդհակառակ սկսանք ցերեկով պարզել առագաստները, և գիշերի դէմ ժողովել. այս հնարով մեր նաւը խաղաղ և հանդարտ միշտ յառաջ էր գնում: Այս կերպով առ փոքր փոքր յառաջանալով, այս հինգ օրի մէջ բաւական մեծ ճանապարհ էինք կատարել:

Վեցերորդ օրը, առաւօտուն հեռուից տեսանք ափը և գոհացանք Աստուծուց և մարդարէից մեր հրաշալի սպատութեան համար: Այն օրը և հետևեալ գիշերը միշտ ու միշտ մտածելով ափին, եօթներորդ առաւօտուն արդէն կարողացանք մօտից պարզ նկատել մի քաղաք:

Մեծ դժուարութեամբ խարիսխ ձգեցինք և կանգնեցանք ծովի մէջ: Իսկոյն մի թիավար մակոյկ իջուցինք դէպ ի ծովը, նստանք նորա մէջ և ամենայն զօրութեամբ քաշուռմէինք թիերը, որ շուտով հասանենք ցամաքին: Ահա ժամից յետոյ մոտանք մի գետի բերան, որ խառնվում էր ծովի հետ և ոտք կոխեցինք ցամաքի վերայ:

Քաղաքի դրան մօտ հարցրեցինք թէ ուր ենք գտանվում մեք: Մեզ լսաց տուեցին, որ մի Հնդկական քաղաքի մէջ ենք, ոչ հեռի այն քաղաքից, ուր մտադիր էի նաւով երթալ: Գնացինք հասարակաց իջևանը, և այն տեղ հանգստացանք մեր տաժանական և վատաբաղդիկ ճանապարհորդութենից: Ամեն տեղ հարց ու փորձ էի առնում, արդեօք չկար այդ քաղաքում մի դիւթ, որ կարողանար կախարդական զօրութիւնը քակել: Ինձ տարան մի հեռաւոր փողոց, ուր կար մի աղքատիկ անակ. դուռը թակեցի և ներս մտայ: Ուղեցոյցս պատուիրեց ինձ որոնել իմաստուն Մուլէին:

Ներս որ մտայ, մի սպիտակամօրուք և մեծաքիթ ծերունի նկատ առաջս և հարցրեց թէ ինչ կամէի: Ես նորան ասացի, որ իմաստուն Մուլէին կամենում էի տեսանել: «Ես եմ այն մարդը,

որ դու ցանկանուս էիր տեսանել» պատասխանեց նա: Ա՛յն ժամա-
նակ ես պատմեցի նորան դէպքից ետաճ բոլոր անցքը, և խնդրեցի
որ ցոյց տար ինձ թէ ի՞նչ կերպով կարող էի ազատել նաւը մեռե-
ղների ձեռքից:

Նորունին ասաց. երևի, նաւը կախարդած է ի պատիժ մի
ծանր չարագործութեան, որ կատարվել էր ծովի վերայ: Նորա
կարծիքով նաւը այն ժամանակ միայն կարող էր ազատվել կախար-
դական կապանքից, եթէ վերայի մեռելները դէպ ի ցամաք բերվէին:
Ասաց, ինչպէս փորձով ստուգեցի, ոչինչ հնարքով կարելի չէր մե-
ռելները տեղերից շարժել, եթէ ոչ նոցա հետ միասին քակելով նո-
ցա տակի տախտակը. ուրեմն հարկաւոր էր բոլոր տախտակամածը
քանդել: Ուրբան խելքս հասանուսմ, երևի, Աստուած ինքը պար-
գևել է այս նաւը, միջի բոլոր ապրանքով: Ասաց ես, որբան կա-
րևի է, պէտք է ծածուկ պահեմ այս գաղտնիքը:

Մուէյը իւր աշխատութեան համար շատ չափաւոր վարձ
պահանջեց, և խոստացաւ իւր ծառաներով գալ և օգնել ինձ,
մեռելները նաւից դուրս հանելու: Ասաց ես մեծ վարձ խոստացայ
նորան այդ աշխատութեան համար. յետոյ վեր կալանք հինգ տա-
սաւոր, շատ կացիններ, սղոցներ, և դնացինք դէպ ի նաւ: Ա՛նա-
պարհին Մուէյը շատ գովեց մեր հնարագիտութիւնը, այսինքն
առագաստների ժողովելը և նոցա վերայ աղօթքներ գրելը Ա՛ստ-
ծոյ: Նա ասաց որ այդ մի հատ հնարք էր ազատութեան:

Վեռ ևս շատ կանուխ էր, երբ որ հասանք նաւին. անյա-
պաղ սկսանք աշխատել, և մի ժամի մէջ արդէն չորս դիակ (մե-
ռած մարմինք) իջուցինք նաւակի մէջ: Երկու ապտաւոր նաւան
նաւակի մէջ, որ մեռելները տանեն դէպ ի ափը և այն տեղ հողի
մէջ թաղեն. բայց շուտ յետ դարձան նորա և ասացին որ մեռե-
ները դեռևին դիպած չդիպած, իսկոյն հող դարձան, և այդ կեր-
պով ազատեցին աշխատութենից նոցա համար գերեզման փորել:
Մենք անդադար վաստակում էինք թէ կտրելով և թէ սղոցելով
այն տախտակները, որոնց վերայ պատկած էին մեռելները, և երև-
կոյեան պահուն արդէն ամենքը դէպ ի ափ տարվեցան և առաջինի
պէս հող դարձան: Նաւի վերայ միայն նաւապետը, բևեռած
կայմին. բայց որբան աշխատեցինք, — ամենևին հնար չէինք գտա-
նում դուրս հանել նորա ճակատի մէջ ցցած բևեռը: Յաւելի էր
ինձ կայմը կտրել, նորա հետ միասին դէպ ի ցամաք տանելու նա-

սպասի մարմինը։ Վ՚երջապէս Մուշէյը գտաւ դորա դիւրին հնարը և ինձ սպատեց այդպիսի նշանաւոր զբօսանքից։ Սպասաւորներից մինին ուղարկեց ցամաք և պատուիրեց որ այն տեղից մի ամանով հող բերէ։ Երբ որ հողը բերեցին, Մուշէյը ափի մէջ առաւ նորանից և սկսաւ մեռելի դլխին ցանել խորհրդաւոր խօսքեր կարդալով։ Ականջները աչքերը բացեց, պտտից ծանր ձախ քարշեց և ձախտի խոցից աղբիւրի պէս բղխումէր արիւնը։ Այն ժամանակ դիւրաւ հանեցինք բևեռը և նաւապետը ընկաւ մի սպասաւորի ձեռքի վերայ։

Երբ որ ուշը վերան եկաւ, հարց արեց նա. «Ո՞վ է նա, որ ծովափին հասցրեց ինձ և իմ նաւը»։ Մուշէյը մատով ցոյց տուեց իմ վերայ, և ես մօտեցայ նորան։ «Ո՞ր հակաշ եմ քեզանից, ով անճանաչ, ասաց նա, դու ազատեցիր ինձ երկարատև տանջանքից։ Ահա չիստուն տարի է, որ իմ մեռած մարմինը աստանդական շրջումէր ծովի վերայ. իսկ հոգիս պատապարտված էր ամեն դիշեր մարմնիս մէջ մտանել։ Այժմ իմ դլուխը դիպաւ հողի, և Թողութիւն գտած հոգիս կարող է խաղաղութեամբ դառնալ դէպ ի իւր հարքը։»

Ես նորան հարցրեցի թէ ի՞նչ կերպով ընկել է նա այդ սոսկալի վիճակի մէջ, որից մեք ազատեցինք նորան. և նա մեզ պատմեց յետագայ պատմութիւնս.

«Չիստուն տարի յառաջ Ալժիր քաղաքի մէջ ես մի հարուստ «և անուանի ոճի էի։ Իմ ազահութիւնը ստիպեց ինձ առևտուր «մեծ հարստութեան ցանկալ։ Պատրաստեցի, զինաւորեցի մի նաւ «և դարձայ ծովային աւազակ։ Վաճառի տարի շարունակ յառաջ «տանելով այս անպտուղ արուեստը, յանկարծ մի օր նաւիս մէջ «ընդունելի մի դարվիշ (մահմեդական աղքատ կրօնաւոր), որ իւր «չքաւորութեան պատճառով չէր կարող իւր ճանապարհի ծախքը «վճարել։ Ես և իմ նաւաստիները առհասարակ խստամիտ և վայ«վենաբարոյ լինելով, ոչ թէ միայն ակնածութիւն չունէինք այդ «բարեպաշտ անձնից, այլ մանաւանդ միշտ ծաղր ու կատակ էինք «առնում դորա վերայ։ Մի օր դարվիշը յանդիմանեց ինձ իմ չա«րագործութեան և ամօթալի վարքի համար։ Ես և նաւուղեղս «(նաւապետի կառավարողը) նստած խոյի մէջ դինի էինք խմում. «ես ալբեցայ, և բարկութիւնս ևս առաւել սաստկացաւ։ Չկա«րացի տանել, որ մի խեղճ դարվիշ համարձակվէր անդոնել ինձ,

«որ Աուլթանին անգամ նկելու չէի։ Խոզին վեր կացայ տեղէցս,
«քարշաքարշ տարայ նորան տախտակամածի վերայ և այն տեղ
«գլխնակովս մոլթեցի։ Գալվիշը վերջին շունչը փչելուն անիծեց
«ինձ և իմ բոլոր ստորագրեալքը, ասելով. Ուր գտանէք գանգամայն և
«ապրէք, այլ ընտանութեան վրայ երբէք, ինչ էլ եղած լինի,
«Երբը որ մեռաւ գալվիշը, նորա մարմինը ծովը ձգեցինք, արհա-
«մարհելով նորա սպառնալիքը և նզովքը։ Բայց նորա անէծքը
«նոյն իսկ գիշերին կատարվեցաւ մեր գլխին։ Իմ ստորագրեալնե-
«րի մի մասը ինձանից ապստամբեցաւ. ամենքս զէնքի վազեցինք,
«կատաղաբար միմեանց վերայ յարձակվեցանք, սաստիկ կոտորած
«եղաւ երկու կողմից. ինձ պաշտպանողները յաղթվեցան և մինչև
«վերջին հոգին սպանվեցաւ. ես մնացի միայն. Թշնամիներս ինձ ա-
«ռան և կապին բևեռեցին. բայց յաղթողներն էս մեռան այն խո-
«ցերից, որ մեր զէնքից էին ստացել. այսպէս, իմ նաւը ամենիս
«համար մի լայնարձակ դագաղ դարձաւ։

«Սահը և թմրութիւնը շրջեցաւ մեր անդամները. բայց
«նոյն գիշերային ժամուն, երբ որ գալվիշին ծովն էինք ձգել, մեք
«վերստին կենդանութիւն էինք ստանում։ Բայց մեր վերայ կեն-
«դանութիւնը ոչ մինչ խորհուրդ չունէր, բայց եթէ գոյնել և խօ-
«սել այն բանը միայն, մինչ որ գոյնել և խօսել էինք այն օրհասա-
«կան գիշերին, երբ որ գալվիշի անէծքը հասաւ մեր գլխին։

«Ես կերպով չիսուն տարի մի և նոյն տեղում չետ ու յա-
«ռաջ նաւարկեինք, ոչ մեռանել էինք կարողանում և ոչ ապրել։
«Ձէինք կարողանում ցամաք հասանել. երբ որ ծովի վերայ փոթո-
«րիկ էր բարձրանում,— մոլեգին ցնծութեամբ և ուռուցիկ առա-
«գաստներով նաւարկեինք, կարծելով որ մեր նաւը կը զարկվի մի
«խութքի կամ ժայռի, կը կոտրանվի, և մեր վաստակած գլուխը
«գոնէ ծովի յատակումը կը դնդչի հողին. բայց, աւաղ, մեր յոյսը
«զուր էր միանգամայն։ Մեր նաւը իւր միջի բոլոր կահ ու կարա-
«սիքով ողջ և անվնաս էր մնում։ Ես յաճ կը մեռանիմ ես։ Գալ-
«ձեալ կրկնում եմ, — ընդհակառակ եմ քեզանից, ով իմ ազատիչ։
«Երէկ նաւիս մէջ գտանված հաստատութիւնը կարող է վարձա-
«տրել քեզ այն բարերարութեան փոխարէն, որ դու ինձ արեցիր,
«ասա ուրեմն Թող ամենը լինի քո սեփական. նաւս լի է պէսպէս
«մեծագին վաճառքներով. քեզ եմ ընծայում դորանց որպէս նշան
«իմ երախտագիտութեան։»

Ընչ որ ասաց նաւապետը, խոնարհեցրեց գլուխը և փչեց հոգին։ Քոպէ չանցած, նորա մարմինը փոշի դարձաւ իւր ընկերների նման։ Մենք ժողովեցինք այդ հողը, լցուցինք մի անօթի մէջ, տարանք ափը և այն տեղ թաղեցինք։

Վնասի քաղաք, և նաւս կարկատելու համար վարձեցի գործաւորները, և քանի որ նորա նաւս նորոգուէին, նորա մէջ գտանւած վաճառքը փոխեցի այլ վաճառքի հետ։ Ընտտապէս վարձատրեցի Մուէյլին, վարձեցի նաւաստիները, նորից նստայ նաւ և դարձայ հայրենիքս։ Չանազան նաւահանգիստներ էի մտանում, վաճառում իմ ունեցած ապրանքը և չունեցածս գնում էի։ Մեծ մարգարէն օրհնեց իմ ամեն ձեռնարկութիւնքը, և գործս միշտ յաջողակ էր։ Ինն ամիս անցանելուց յետոյ, նաւապետի թողած հարստութիւնը առատացրով կրկնապատկեցի և դարձայ իմ մայրենի քաղաքը Խալսօրա։

Այրենակիցս զարմանում էին իմ յաջողութեան և հարստութեան վերայ. ամենքը կարծում էին թէ ես գտել եմ այն գոհարները գաշտը, որ իւր ճանապարհորդութեան մէջ յիշում Ինդբադը [1]։ Ես էի աշխատում դիւրահաւանների կարծիքը ջրել և հանել նորանց նոցա մոլորութիւնից. այդ օրից Խալսօրայի մէջ սովորութիւն դարձաւ երիտասարդների համար, երբ որ գոքա հասած էին տան և ուրախ հասակի, խնդրն յանձն առնուլ ճանապարհորդութիւն, որ ինձ նման բախտ գտանեն։ Իսկ ես այնուհետև խաղաղ և անդորր կեանք եմ անցուցանում, և հինգ տարին միանգամ ուխտ եմ երթում դէպ ի Մեքքա, որ այն տեղ երկրպագութիւն մատուցանեմ և գոհանամ Աստուծուց, որ ուղարկել է ինձ այս երկրաւոր երջանկութիւնս, և ես և խնդրել նորան, որ իւր երկնաւոր ալքայութեանը արժանացնէ նաւապետը և նորա ընկերակիցքը։

Մի ես օր կատարանը անխափան շարունակեց իւր ընթացքը, և երբ որ հասաւ Լիվանին, օտարական Սկևմ-Խարուքը ասաց Մուէյլին որ վաճառականների մէջ ամենից երիտասարդն էր, Ընդհինդիմ, դու մեր մէջ առաւել մնանում ես, և այդ պատճառով միշտ զուարճ. արի, մի զբօսնացուցիչ բան պատմիր մեզ, ուրախա-

[1] Հաղար և մի գիշեր արաբական բանաստեղծութեան մէջ։ Մի օր յոյս ունինք այս գեղեցիկ գործը ընծայել հայ ազգին «Հիւսիսափայլի» միջնորդութեամբ։

ցրուս մեզ այս տաղտկալի և տօթ ժամանակիս։ «Ես ուրախութեամբ պատրաստ եմ ձեզ ցուցադրել բաներ պատմել, պատասխանեց Մուէյլը, բայց պարկեշտութիւնը երիտասարդի առաջին պարտականութիւնն է։ Պարոն Յալևկոսը միշտ ախուր է և տրտում. ինչ է պատճառը, որ նա չէ կամենում մեզ յայտնել իւր սրտի ցաւերը։ Պարելի է, որ մեզանից մինը կարող էր թեթևացնել նորա վիշտը, և ցաւին դարման տանել։ Ծէհ, այո, հաւատով մին չենք, բայց և այնպէս մեք միշտ պատրաստ ենք օգնել մեր բարեկամին։»

Յալևկոսը, որի մասին խօսումէին երկուքը, յոյն էր ազգով, երեսուն կամ երեսուն և հինգ տարեկան, դեղեցկադէմ, յաղթանդամ և արի, բայց միշտ ախուր էր. թէպէտ նա հաւատով մահմեդական չէր, բայց ընկերները նորան սիրումէին. պատճառ, նորա շարժուածքը և խօսուածքը ազդումէին նոցա մէջ սկատմայ յարգանք և ակնածութիւն դէպ ի նա։ Նորա մի ձեռը կտրած էր, և ամենքը կարծումէին, որ անշուշտ այդ ձեռի կորուստը պիտոյ է լինէր նորա տրտմութեան բուն պատճառը։

Յալևկոսը լսելով Մուէյլի բարեկամական առաջարկութիւնը, պատասխանեց. «Արտանց ընդհակառակ եմ ձեր բարեկամութեան համար. բայց իմ թշուառութեանը անհնարին է դարման տանել։ Նրէկ դուք կամենում էք իմանալ իմ յարատև տխրութեան պատճառը, ես պատրաստ եմ պատմել իմ դէպի անցքը։ այնուհետև դուք ինքներդ կը տեսանէք, արդիօք ունիմ պատրառ միշտ տխուր լինելու։ Դուք տեսանում էք, որ ձախ ձեռս պակաս է, թէև ի ծնէ այսպէս չէի։ Կեանքիս ամենաթշուառ և տոկալի ժամանակն այն է, երբ որ զրկվեցայ այդ ձեռից։ Արդիօք իմ մեղքի ապաժամահաս պատիժն էր այդ, թէ փորձութիւն, վերին տեսչութենից առաքված, չդիտեմ. բայց իմ պատմութենից կարող էք եղրակացնել, թէ ինչպէս իրաւացի տեղիք ունէի ես տրտմելու կտրած ձեռիս վերայ։»

3. ԿՏՐԱԾ ՁԵՌՔԸ.

Իմ ծննդեան տեղը Սուամբօլն է, ուր հայրս արքունի դրան թարգման էր. բայց ի դորանից նա առուտուր ունէր զանազան անուշահոտ իւղերով, օծանելիքով և կերպասներով։ Մեծ խնամք տարաւ իմ դաստիարակութեան վերայ, մասամբ ինքն էր իմ ուսու-

ցիչը և մասամբ մի քահանայ։ Ի սկզբանէ կամենուայի հայրս, որ ես նորա տեղը բռնեմ խանութի մէջ. բայց յետոյ տեսանելով իմ սէրը և ընդունակութիւնը ուսման և գիտութեան, փոխեց միտքը, և մի բարեկամի խորհրդով կամեցաւ ինձ բժիշկ շինել. պատճառ, Սամբօլում ճշմարիտ բժիշկը — կամենուայի ասել այնպիսին, որ գերազանց է նոցանից, որոնք փողոցներում և հրապարակներում ինքեանք են քարոզում իւրեանց գիտութիւնը — միշտ կապրող է մեծ հաստատութիւն ձեռք բերել։

Ա՛ր տան մէջ սովորաբար ժողովրդականին Նէրսէսեանցիք, և նոցանից միևը յորդորից հայրս, ուղարկել ինձ նորա մայրենի քաղաքը, Փարիզ, ասելով թէ այն տեղ բժշկական արուեստը ձիրի և շատ լաւ են ուսուցանում։ Հայրս, որ իւր կեանքումը շատ էր ճանապարհորդել և շատ բան փորձով գիտէր, յօժարեցաւ նորա առաջարկութեանը, և նորա բարեկամ Նէրսէսեանին պատուիրեց ինձ երեք ամիից յետոյ պատրաստ լինել յանձն առնուլ մի երկարատև և հեռաւոր ճանապարհորդութիւն։ Երբ որ լսեցի թէ շուտով երթալու եմ օտար աշխարհ, փոքր մնաց որ խելքս գլխիցս թռչէր, և անհամբերութեամբ սպասումի այն րոպէին, երբ պիտոյ էր ինձ նաւ նստել։ Նէրսէսեանին իւր գործը աւարտելուց յետոյ, սկսաւ ճանապարհորդութեան պատրաստութիւնքը հոգալ։ Ճանապարհ ընկնելուս յառաջընթաց երեկոյին հայրս տարաւ ինձ իւր սենեակ. սեղանի վերայ շարած էին գեղեցիկ հագուստներ և զէնքեր. բայց ես ոչ մի բանի վերայ այնպիսի հիացմամբ չէի նայում, որքան դիւզած ոսկուն, որ նմանապէս սեղանի վերայ կուտած էր. կեանքումն այդքան մեծ արծաթ տեսած չէի։

Հայրս գրկեց ինձ և ասաց. «Ընդհանուր, որդեակ, այս ամենը պատրաստել եմ քո վերահաս ճանապարհորդութեան համար. այս այն հագուստներ ու զէնքերն են, որ ես ստացել իմ հօրիցս օտար աշխարհ գնալուս ժամանակ։ Ես գիտեմ որ դու հմուտ ես սուսերամարտութեան, բայց այս զէնքը այն ժամանակ միայն դործ դիր, երբ որ պիտոյ լինի անձնդ պաշտպանելու։ Տես, որ միշտ քաջ լինիս. թող քո թշնամին սարսափի քո հզօր ձեռքից. բայց աւաղ, որդեակ, ես մեծ հարստութեան տէր չեմ։ Իմ բոլոր ինչքը և ստացուածքը ահա երեք մասն բաժանեցի. մինը այժմ տալիս եմ քեզ. միւսը իմ պիտոյքի համար կը մնայ. իսկ երրորդը նուիրական է ինձ, ես զորան մեռանելու չեմ. այն ժամանակ միայն կը հասանէ նա

քո ձեռքը, երբ որ (Աստուած հեռի առնէ) սաստիկ կարօտութեան մէջ լինիս։» Այս խօսքերն ասելուս աղբիւրի պէս վազումէին արտասուքը հօրս աչքերից։ Դուցէ նորա հոգին վկայումէր, որ յաւիտեան իրեարից բաժանվումենք։ Այնուհետև ես չարժանացայ միւսանգամ նորա երեսը տեսանելու։

Մեր ճանապարհորդութիւնը յաջողակ էր. անմիջապէս հասանք Եւրոպայի ափը, և վեց օրից մտանք Ֆրանսիու լայնատարած մայրաքաղաքը, որ կոչվումէ Փարիզ։ Այն տեղ, եւրոպացի բարեկամս խորհրդով, մի սենեակ վարձեցի. նմանապէս նա պատուիրեց ինձ տնտեսութեամբ գործ դնել ունեցած արծաթս, որ երկու հազար դահեկան էր։ Փարիզում երեք տարի մնացի, և ուսայ այն ամեն գիտութիւնքը որ հմուտ բժիշկը պարտական է ունենալ։ Սուտ ասած կը լինիմ, եթէ ասեմ թէ ժամանակս զուարճութեամբ անցուցի. ոչ։ Այս երկրացոց բնաւորութիւնը, բարքը և ծէսերը ինձ միանգամայն օտար էին. նմանապէս բարեկամներիս թիւը շատ սահմանափակ էր. բայց և այնպէս ամենքն առհասարակ ազնուաբարոյ հրեաասպրդներ էին։

Ա՛ր հրջապէս հայրենիքիս կարօտութիւնը սկսաւ չարաչար տանջել ինձ պանդխտութեանս առաջին օրից մինչև վերջը. ծնողից ոչ մի լուր չունէի. այդ պատճառով, դիպող միջոց պատահելով, խնդրն օգուտ քաղեցի դրանից և տուն դարձայ։

Ֆրանսիայից պատգամաւոր դեսպանը ուղարկվեցան դէպ ի Օսմանեան տէրութիւնը։ Դեսպանի մօտ վերաբոյժ կարգվելով, յաջողութեամբ հասայ Սամսթօլ։ Հօրս տունը հնքած էր. դրացիներս տեսանելով ինձ, ղարմացան, և ասացին թէ հայրս իմ վերադարձից երկու ամիս յառաջ վախճանվել էր։ Ինձ դաստիարակող քահանան բերեց մեր տան փականքը (բանալին)։ Դուռը բացեցի, ներս մտայ, սենեկից սենեակ մտն եկայ ախուր և տրտում. ամեն բան այնպէս էր, ինչպէս հօրս մահու ժամանակը, միայն թէ անհետացել էր նորա թոռնած ոսկին. թէև քահանայի խօսքերին չհաւատացի ես, բայց օդնելու հնար չկար։ Քահանայի ընդդէմ վկայ չունէի. ուրեմն ոչ միայն կարող չէի զանգատել նորա վերայ, այլև պարտական էի շնորհակալ լինել, որ նա հօրս մահուց յետոյ գոնէ նորա տանը և ապրանքին ձեռնամերձ եղած չէր։ Այս էր առաջին տարաբախտութիւնս, և այնուհետև եկան իմ վերայ պէս-պէս այլ անյաջողութիւններ։

Իմ բժշկութեան համբաւը ամենևին չէր տարածվում այն պատճառով, որ ես ամաչում էի միւսների պէս գովասանել իմ արուեստը և դիտութիւնը փողոցներում և հրապարակներում։ Ոչ ոք ինձ չէր օգնում, որ կարողանայի ելումուտք ունենալ իշխանների և մեծատուններին մօտ. ոչ ոք չէր կամենում հոգս տանել խեղճ Յակիմոյի յաւաջադիմութեան մասին։ Հօրս ապրանքն էլ չէի կարողանում վաճառել. մեր ծանօթքը հօրս մահուց յետո դադարեցան երթևեկ լինել մեր խանութը և բան գնել, իսկ նոր ծանօթութիւն և հաւատ ձեռքբերու համար, ինչպէս յայտնի է, երկար ժամանակ պիտոյ է։

Մի օր ներկայ վիճակիս վերայ մտածելով, յանկարծ միտքս ընկաւ, որ Եւրոպայում կան այնպիսի վաճառականներ, որոնք իւրեանց ապրանքը քաղաքից քաղաք տանում են և հրապարակներում վաճառում են, և մարդիկ առհասարակ առնել յօժարութեամբ այդ օտարականներից են գնում ապրանքը, քան թէ տեղացի վաճառականներից. այս կերպ առուտուրը առնելով, կարելի է մի տարու մէջ կրկնապատկել իւր ունեցածը։ Այդ խորհրդով վաճառելի հայրական տունս, նորանից ստացած արծաթի մի մասը պահ տուեցի հաւատարիմ բարեկամիս, իսկ մնացածով գնեցի այնպիսի ապրանք, որ Եւրոպայում շատ խնդրողներ ունէին, այսինքն շալեր, կերպասներ, օճառներից և հոտաւէտ իւղեր։ Յետոյ նաւի մէջ ինձ տեղ վարձեցի և նորից գնացի Եւրոպա։

Հարկ թէ դուրս եկայ Պարսկաստանից, ասես թէ բաղդը նորից սկսաւ ինձ յաջողել։ Մեր ճանապարհորդութիւնը կարճատև և յաջողակ էր։ Եւրոպայի զանազան տէրութիւնների մէջ շրջելով որպէս վաճառական, ամեն տեղ յառաջադէմ էի։ Բարեկամս ինձ անդադար նորանոր վաճառք էր ուղարկում Աստամբօլից և ես օրէ օր առաւել հարստանում էի։ Վերջապէս այնքան արծաթ կարողացայ վաստակել, որ արդէն կարելի էր մի նշանաւոր գործի ձեռնարկել։ Այն էլ պիտոյ է ասել, և բժշկական արուեստս այ սակաւ օգուտ բերում էր ինձ։ Երբ որ հասանում էի մի քաղաք, իսկոյն այս տեղ և այն տեղ տարած յայտարարութիւններ էի ցրվում թէ ահա այս ինչ քաղաք եկել է մի հմուտ յոյն բժիշկ, որ կարող է զանազան ծանր հիւանդութիւններ բժշկել։ Այնուհետև իմ ապերանութիւնով (մահրամ) շատ դահիճներ վաստակում էի։ Այսպէս, տեղից տեղ անցանելով, վերջապէս հասայ Վալաքիա

քաղաք, որ Խաալիայի աշխարհումն է: Ա՛յս քաղաքիս այնքան հաւանեցայ, որ մտքումս դրեցի անտանելական կեանքս թողնել և նորա մէջ առ ժամանակ բնակութիւն հաստատել և հանդստանալ տաժանական աշխատանքիցս: Սանթա-Ռոզէ տասը վիլլայեմ վարձեցի մի խանութ, ապրանքս դասաւորելու համար, և նորա մօտ երկու դեղեցիկ սենեակ բնակութեանս համար. սենեկիս դէմ-դէմ կար մի պանդոկ:

Ա՛յս բաները կատարելուց յետոյ անյապաղ ցրուեցի յայտարարութիւնները, թէ ահա եկել է մի յոյն վաճառական, որ նոյն և բժիշկ է: Հաղիւ խանութիս դուռները բացվեցան, և ահա ամէն կողմից խուռներթայ եկան անհամար գնողներ: Թէև վաճառած ապրանքս թանդագին էր, բայց ամէնքը իմ մօտ էին վաղուց. պատճառ, ամէնի հետ սիրով և քաղցրութեամբ էի վարվում:

Գյօրենտիայի մէջ ժամանակս շատ ղուարճութեամբ էի անցուցանում: Հաղաք հասանելուս չորրորդ օրը, երեկոյեան պահուն, խանութս արդէն փակած, ըստ սովորութեանս, սրբում և կարգի էի բերում շիշերը, սրուակները պէսպէս ապեղանիքով, բալասաններով և ուրիշ դեղօրէքով: Յանկարծ սրուակներից մինի մէջ դտայ նամակ, որ իմ վերայ էր ուղղած, որով ինձ հրաւիրում էին այս գիշեր ուղիղ տասներկու ժամուն ներկայ դտնվել մի կամրջի վերայ, որի անունն էր Պօնթօ-Վ՛եքքիօ: Հ՛ատ ցանկանում էի իմանալ ո՞վ էր դորա գրողը և ի՞նչ պատճառով էր նորա հրաւիրքը: Վերջ, մտքիս մէջ ասացի, այս գաղտնի հրաւիրողը մի հիւանդ մարդ է, որովհետև այդպիսի բաներ ինձ շատ է պատահել: Որոշեցի երթալ այն տեղ, բայց կանխագոյն առայ հետս լուսահոգի հօրս տուած թուրը:

Տասներկու ժամը չզարկած, դնացի սահմանած տեղը և շուտով հասայ Պօնթօ-Վ՛եքքիօ կամրջի մօտ: Պահրջի վերայ ոչ ոք չկար, և ես սպասեցի թէ ինչ պիտոյ է պատահէր: Վրիշերը տաստիկ ցուրտ էր. լուսինը պայծառ լուսաւորում էր, և նորա ճառագայթները բեկբեկվում էին Արնօ գետի մշտածուփ ալիքների մէջ: Ներկեցու աշտարակի ժամացոյցը տասներկու անդամ հնչեց. ես դեպ ի յետ նայեցայ և տեսայ մի բարձրահասակ մարդ, կապիր թիկնոց ուսին ձգած, որի դրօշակով (փիշով) ծածկել էր երեսը:

Ընակնկալ տեսանելով նորան, շատ շփոթվեցայ. բայց յետոյ միաքս ժողովելով, ասացի. «Եթէ դու ես ինձ հրաւիրողը, շու-

տով ասաւ, ի՞նչ է քեզ պէտք»: Ընծանօթը հրամայաբար ասաց ինձ. «Դէկ իմ հետևէից»: «Ձէ, պարո՛ն, պատասխանեցի, մինչև որ չիմանամ, թէ ո՞ր պիտոյ էր ինձ երթալ, ամենևին չեմ շարժ-վելու տեղիցս: Նամանաւանդ պիտոյ է ինձ տեսանել քո երեսը, որ կարողանամ քո բարի կամ չար դիտաւորութիւնը հասկանալ»: Այսմիկ թիկնոցով մարդը ամենևին չշփոթվեցաւ իմ կոշտ պատասխանիս և անընտրողաբար ասաց. «Ծէ չես կամենում հետս գալ կամքը քոն է. մնացիր ուրեմն»: Ասաց և հեռացաւ: Այս լսելով, բարկութենէս բոլորովին կրակ դարձայ: «Դու կարծում ես, բացագանչեցի, թէ իմ նման մարդը ամեն յիմարի թոյլ կը տայ ծիծաղել իւր վերայ. դու կարծում ես, ինձ ղուբ պիտոյ էր սպասել այս ցուրտ ժամանակիս»: Այս ասելով, ընկայ նորա հետևից, բռնեցի նորա կապիր թիկնոցը և թուլս մերկացուցի: Ընծանօթը վախաւ մեռձակայ փողոցը և թիկնոցը ձեռքումն մնաց: Փոքր առ փոքր բարկութիւնս իջաւ, և ես խորհեցի որ իմ մօտ մնացած թիկնոցով կարող եմ այս օտարոտի անցքը պարզել: Ուստի վերս վերայ ձգեցի թիկնոցը և տուն դարձայ: Հազիւ թէ հարիւր քայլափոխ տարածութիւն յառաջ էի գնացել, մի մարդ շտապով մօտիցս անցաւ և ասաց ֆրանսիարէն «Ո՛դնաստ եղիր, կոմս, այս գիշեր ոչինչ չէ կարելի առնել»: Ասաց և անհետացաւ աչքիցս, և ես ժամանակ չունեցայ խնդրս ժողովելու: Առանց այլևայլութեան այս խօսքերը վերաբերվումեին թիկնոցիս և ոչ ինձ:

Միւս օր առաւօտուն մտածումէի թէ ի՞նչ պէտք էր առնել: Նախ կամենումէի յայտնել քաղաքի մեծաւորներին որ թիկնոցը գտել եմ. բայց անծանօթը կարող էր մի մարդ ուղարկել նորա հետևից, և ես նպատակիս չէի հասանելու: Ակայ պինել թիկնոցը և տեսայ որ Վենուայի հաստ թաւիշից էր, գոյնը բայ ծիրանի, ոսկի թելերով ասղնագործած. աստառը սպիտակ աքիսի մորթից: Այս շքեղ թիկնոցի վերայ նայելով, մտքումս մի բան ծնաւ, որ ևս հաստատ որոշեցի գործ դնել: Տարայ թիկնոցը և խանութումն կախեցի, իբր թէ ծախու հանալ, և վերան այնպիսի թանգ գին գրեցի որ, առանց երկբայութեան, ոչ ոք չէր յօժարելու գնել: Այս մտագիր էի լաւ նկատել գնողների երեսները. պատճառ, երբ անծանօթը բացէ երեսը, որ թիկնոցը վայր ձգէր, ես հարևանցի տեսայ նորա դէմքը, որ այնպէս ուժգին ապտակվեցաւ մտքումս, որ այնուհետև հաղար հոգու մէջ ևս կարող էի ճանաչել նորան: Թիկ-

նոցի անչափ դեղեցկութիւնը ամեն կողմից քարշում էր ցանկացողներ. բայց ոչ ոք նոցանից նմանութիւն չունէր անծանօթի հետ, և ոչ ոք չէր կամենում երկու հարիւր դահեկանից առաւել վճարել նորա համար: Այս ամեն տեղ հարց ու փորձ էի առնում: Վերջ ապրդեք Ֆլորինտիայում մի այնպիսի մարդ, որ այս թիկնոցի նմանը ունենար. բայց ամենքը միաբերան ասում էին թէ իւրեանց կեանքում բնաւ տեսած չեն այսպիսի շքեղ և մեծագին զգեստ:

Արդէն սկսել էր պատել, երբ որ խանութից մեզ մի երիտասարդ, որ յաճախ տեսանում էր ինձ և որ այս անգամն ամենից շատ տուեց թիկնոցիս համար: Մեղանից վերայ ձգեց քսակը դահեկաններով լցրած և ասաց. «Յակոբոս, թող աղքատանամ, բայց այս թիկնոցը իմն պիտոյ է լինի» և իսկոյն սկսաւ ոսկիները հաշուել: Այս տագնապի մէջ ընկայ, պատճառ, թիկնոցը կախել էի ոչ թէ ծախելու համար, այլ որ կարողանայի նորանով այն անծանօթ մարդը գտանել: Այժմ այս թէթեւամիտը տալիս էր ինձ մի չլսած դին: Ինձ շատ հաճելի էր դիշերային արկածիս փոխարէն ստանալ այդպիսի մեծ վարձ: Երիտասարդը ձգեց վերան թիկնոցը և դուրս գնաց. բայց հազիւ թէ սեմքից փոքր ինչ հեռացել էր, իսկոյն յետ դարձաւ, ձգեց առաջիս մի կտոր թուղթ և ասաց. «Յակոբոս, առ այս տոմսակը, որ ամրացրած էր թիկնոցիս վերայ, կարելի է դա մի պիտանի բան լինի»: Առայ տոմսակը, և մեծ զարմացքով կարդացի յետագայ խօսքերս. «Այս ԹԷՆԷՔ, այս ԻՆՉ ՃԱՇԸ ԿՒ ՊՇՐԱՆԱ-ՈՂ ԼՒՒՒՆՈՑ ՎԵՐԱՅ, ՀԱՒԱՏ ԲԷՐ ՐՒՒՆՈՑԸ Ե ՂԱՐԱ ՀԱԲԷՐ ԴԱՀԵԿԱՆ ՎԱՃԱՌ ԿՈՓԱՆԱՑ ՆՈՐԱ ՀԱՄԱՐ: Ասես թէ կայծակով զարկածի պէս եղայ. ուրեմն ինքս ինձանից հեռացրեցի բաղդս և չհասայ նպատակիս: Առայ երկար չմնացի այս տարակուսանքի մէջ. հաւաքեցի երկու հարիւր դահեկանը, վազելով հասայ նորա դնողին և ասացի: «Ձեր առ քո դահեկանները և տուր ինձ իմ թիկնոցը, ես չեմ կամենում վաճառել նորան»: Նախ և յառաջ երիտասարդը կարծեց որ ես խաղ եմ առնում, բայց յետոյ տեսանելով իմ խօսքի անկեղծութիւնը, բարկացաւ, յիմար անուանեց ինձ, աղաղակեց, յիշոցներ տուեց և վերջապէս բանը կռուի հասաւ: Այս յարձակեցի նորան, նորա ձեռքից խլեցի թիկնոցս և կամենում էի դէպ ի տուն դառնալ: Առայ երիտասարդը օգնութիւն կանչեց պօլիցիայի պահապաններս: Նոքա վերայ հասան և երկուսիս դատաստանատուն տարան:

Այս գործը ամենին կասկածելի թուեցաւ, և դատաւորը

վճռեց որ Թիկնոցը հակառակորդիս տայ։ Նա առաջարկեցի երի-
տասարդին բայց ի երկու հարիւր դահեկանից սկսեա քան, յի-
սուն, ուրեմն և վերջապէս հարիւր դահեկան, միայն որ յետ
տայ ինձ Թիկնոցը։ Ինչ որ խնդրեցը չարեց, այն կատարեց ար-
ծաթս։ Նա առաւ դահեկանները, իսկ ես հպարտութեամբ տուն
տարայ Թիկնոցը, թէև բոլոր քաղաքացիք յիմար կարծեցին ինձ.
բայց ես իմ օգուտը ճանաչեցի, աշխարհի կարծիքը բանի տեղ
չդրեցի։

Ընհամբերութեամբ սպասեցի դիշերին. երկիր նման, տասն-
երկու ժամուն հետս առած Թիկնոցը, դնացի դէպ ի Պօտա-
վ֊էքքիօ։ Ըսալու թէ աշուադակից դիշերի տասներկու ժամը զար-
կած էր, անծանօթը եկաւ և կանչնեցաւ առաջս։ «Թիկնոցը
հետդ է» հարց տրեց նա։ «Ըհետս է, պատասխանեցի նորան. միայն
խնդրեմ, որ հարիւր դահեկան դնացել է իմ սեպհական քսակից
նորա համար»։ «Նա այդ գիտեմ, ասաց նա. ահա քեզ չորս հա-
րիւր դահեկան. թէ չես հաւատում, համարիր։ Ինձ դէպ ի մի
կողմ տարաւ և ձեռս դրեց առաջարկած դումարը։ Ականները լուս-
նի տակ փայլուելին աչքիս առաջև և նորա փայլը բերկրեցնելուն
հոգիս. աւաղ, այդ բերկրանքը վերջնեն էր իմ կեանքի մէջ։ Գա-
հեկանները գրպանիս մէջ դրեցի և յետոյ կամեցայ մեծապուճութեամբ
նկատել անծանօթի կերպարանքը. բայց նորա երեսը ծածկած էր
դիմակով, և միայն նորա բոցափայլ աչքերն էին երևում, որ բևե-
ռած էին վերաս։

— Ճանաչակալ եմ, պարոն, քո առատաձեռնութեան հա-
մար. այժմ ասա, ի՞նչ էլի կամենում ինձանից։ Այլ յառա-
ջաց ասումեմ, որ ոչ մի առթիւ գործի մէջ չեմ խառնվելու,
ասացի ես։

— Ընկերդ խօսքեր են քո ասածը, պատասխանեց նա,
ուսերի վերայ ձղելով Թիկնոցը. եթէ բժիշկ չլինեիր, ես չէի հրա-
վիրելու քեզ, պատճառ են բժշկի օգնութեան եմ կարօտ. բայց
այժմ ես քեզ ոչ հրամանդի, այլ մի մեռելի մօտ եմ տանելու։

— Ես ի՞նչ գործ ունիմ մեռելի հետ, ասացի զարմանալով։

Նշանացի խնդաց տուեց, որ նորա հետ միասին երթայի, և
ձանապարհին պատմեց ինձ յետագայ անցքը.

— Ես այս տեղ եկել էի քոներս հետ միասին օտար աշխարհից
և բնակվել էի աղգականիս տանը։ Երեք գոյլս մեռան կարճատև

հիւանդութիւն կրելով: Աղգականներս կամենուին վաղուան օրը թաղել նորա մարմինը. բայց մեր ընտանեկան սովորութեամբ հնարկ է, որ մեր ցեղի իւրաքանչիւր անդամը թաղվեր մեր հայրապետական գերեզմանատան մէջ, ուր թաղված են մեր նախնիքը: Մեր ազգականներից շատերը մեռել են հեռաւոր երկիրներում, բայց նոցա զմռսած մարմինքը միշտ տեղափոխվել են այդ գերեզմանատունն: Այս տեղը ազգականքս չեն կամենում, որ քուերս մարմինը տեղափոխվեր մեր հայրենի երկիրը. ես յօժարեցայ նոցա կամքը կատարել այն պայմանով միայն, որ գլուխը տանէի հօրս մօտ, որ գոնէ վերջին անգամը տեսանէր նորան:»

Այս բարբարոսական սովորութիւնը, այսինքն, մեռած ազգականի գլուխը կտրել, զարհուրանք բերեց վերայս. բայց ես չհամարձակվեցայ հակառակել անծանօթին, և ասացի որ ես քաջ գիտեմ զմռսել մեռելի մարմինը, և յօժարեցայ նորա հետ միասին դնալ մեռելի մօտ. բայց չկարողացայ յետ պահել իմ հարցասիրութիւնը թէ ինչո՞ւ համար այդ ամենը գիշերով և գաղտուկ է կատարվում: «Այս ասաց որ ազգականներս չեն հաւանելու այդ անողորմ գործին, ուրեմն ընդդէմ նոցա կամքին պիտոյ էր ծածկաբար ներգործել: Բայց երբ գլուխը բաժանված կը լինի մարմնից, այն ժամանակ նոքա ոչինչ ասելու չեն: Յետոյ յաւելացուց. «Թէև ես ինքս կարող էի մեռելի գլուխը կտրել, բայց այդպիսի գործի անհմուտ և անտեղի լինելով, անհրաժեշտ գարշելութիւն եմ զգում, և ձեռքս չէ բարձրանում քուերս վերայ, թէև նա մեռած էլ»:

Այսպէս խօսելով մնացանք մի մեծ և հոյակապ տան: Ընծանօթը ցոյց տուեց և ասաց որ ահա այս տեղ պիտոյ է մնանենք: Վերևառու մուտքը թողած, մի փոքրիկ դռնով ներս մտանք և անծանօթը զգուշութեամբ փակեց դուռը մեր հետևից: Մութ և ոլորածոյ սանդուղքով բարձրացանք դէպ ի վերին յարկը և մնանք մի կիսալոյս սրահ. այն տեղից դնացինք մի սենեակ, լուսաւորած կանթեղով, որ առաստաղից կախած էր:

Այդ սենեկի մէջ կար մի մահճակալ և նորա վերայ հանգստացած էր մեռելը: Ընծանօթը երեսը դարձուց, և ինձ թվումէր թէ նա իւր աչքի արտասուքը սրբումէր: Մատով ցոյց տուեց մեռելը և հրամայեց, որքան կարելի էր շուտով և ճարտարութեամբ կտրել նորա գլուխը. և ինքը դուրս դնաց:

Հանեցի գործիքս, որ — ինչպէս փորձառու վերաբուժին

կը վայելէր — ամեն տեղ հետս էի տանում, և մօտեցայ մահճակալին: Մեռելը բոլորովին ծածկած էր, բայց ի դէմից ոչինչ չէր երեւում: բայց այդ դէմքը այնքան դեղեցիկ էր, որ ես աստիկ խըղճացի նորան: Ծունկս և խիտ մազերը գանգուրներով կախված էին. երեսը դունաթափ էր, աչքերը փակած: Ինչպէս որ սովորութիւն կայ վերաբերեալ մեռելի մէջ անդամահատութեան ժամանակ, նախ և յառաջ կաշին կտրեցի ես, յետոյ առայ սուր դանակս և իսկոյն կտրեցի կոկորդը: Մեռելը բացեց աչքերը և նայն իսկ րոպէին վաղեց. երեւումէր թէ այժմ միայն ծանր հառաչանքով թռաւ նորա հոգին: Ջերմ արիւնը աղբիւրի պէս բղխեց խոցից: Ես էի այդ վատաբաղդի սպանողը: Իմ տուած խոցը անբուժելի էր. այնուհետև չկար յոյս և հնար փրկութեան. սպանած աղջիկը դրած էր առաջս: Վրանի մի ժամանակ անշարժ մնացի, ասես թէ երկիւղից անդամներս սառել էին. մի գուցէ, կարծումէի, անճանօթը կամեցաւ ինձ փորձանքի մէջ ձգել. կամ թէ նորա քոյրը միայն ուշաթափ էր, և նոքա կարծել էին թէ սրտէն մեռած էր: Ես վերջին կարծիքը առաւել ճշմարտանման երեւեցաւ ինձ. բայց ես չկամեցայ յայտնել եղբօրը, թէ իմ շտապ գործողութիւնը նորա քոյրը քաւեցնելի մահ պատճառեց, և եթէ ուշադրութեամբ զննէի, կարելի էր նորան այդ մահանման թմրութենից արթնացնել: Հօգեվարը ծանր հառաչէց, անդամները քարշքարշվեցան և նա փչից հոգին....:

Սոսկացայ և իսկոյն սենեկից դուրս փախայ: Արահը միանդամայն մուխ էր. լապտերները շիջած էին. անճանօթը անյայտացել էր. պատէ պատ խարխափելով որպէս և իցէ գտայ ոլորածոյ սանդուղքը և վայր իջայ. բայց այն տեղ էս ոչ ոք չկար: Դուռը կիսաբաց էր, և այն ժամանակ միայն կարողացայ սպառ շունչ առնու, երբ որ փողոց մտայ: Խելացնորի նման վազելով տուն գնացի, մտայ անկողինս և աշխատութեամբ մոքիցս հանել այս սոսկալի անցքը. բայց քունը բացէ ի բաց հեռանում էր աչքերիցս: Երբ որ լոյսը ծագեցաւ, հալիս կարողացայ ուշս վերաս ժողովել և ինձ մխիթարել, ասելով. «Զարագործը, որ ինձ իւր սպասաւորի յանցանքը կատարելու գործի շինեց, չէ մտանելու ինձ գատաւորների ձեռքը»: Որոշեցի երթալ խանութս, իմ սովորական գործերովս պարապել և, որքան կարելի էր, հանգիստ երևել: Բայց մի նոր երեսպաշտութիւն կրկնապատկեց իմ երկիւղը: Ես էի խանութում, ուր

էին իմ դանակը, գօտին և դրամը. ամենևին յիշելի չէր ինձ և հաւատալի չէիտէի, սպանած աղջկայ անունովն էին մնացել նոքա, թէ վողոյումն էի կոլցրել: Նրանէ աղջկայ անունովը թողած լինելի, առանց այլևայլութեան, պիտոյ էր ինձ բռնելին և ինչպէս մի մարդասպան դատապարտելին:

Սահմանեալ ժամին բացեցի խանութս: Շատախօս դրացիս ըստ սովորութեան, նկատս մտաւ: «Լսե՞լ ես, ինչ սարսափելի եղեռնագործութիւն պատահել է այս գիշեր,» ասաց նա: Ես ցոյց տուել իբրև թէ ոչինչ բան չգիտեմ: «Մի՞թէ չգիտես, ասաց նա. բոլոր քաղաքումն մի հատիկ մարդ չես գտանելու, որ այդ անցքը չիմանար: Կուսակալի դուստրը, անունը Խանըքա, որ բոլոր Ֆէզլինախայի մէջ ամենագեղեցիկն է, այս գիշեր մի անյայտի ձեռքով սպանվել է: Վաւ ևս երեկ, երեկոյեան պահուն, ուրախ ուրախ տան էր գալիս փողոցներում իւր փեսայի հետ. այսօր ժամադրած էր նոցա հարսանիքը:»

Իմ տագնապը անդադար նորոգվում էր. պատճառ, որ գնացողը մի և նոյն անցքը պատմում էին ինձ. բայց անհնարին է խօսքով պատմել այն, ինչ որ հոգուս մէջ լինում էր այս միջոցիս: Ակօսիան պահուն մի պաշտօնատար մտաւ խանութս, հիւրկրկիս հրամայեց գուրս գնալ, և իմ հետ միայնակ մնացած, ցոյց տուեց իմ կորուսած դրծիքը և ասաց. «Պարո՛ն Յակոբոս, ճանաչո՞ւմես այս նիւթերը: Ես փոքր ինչ միտք արեցի «Լաւ չէր արդեօք, եթէ ասեմ թէ այդ նիւթերը ինձ չեն պատկանում:» Բայց ղրան ծակից նայումէին տանուտէրս և ծանօթներս, որոնք կարող էին տեսս բռնել, և վախենալով, մի գուցէ ճշմարիտը չհաստատվանելով տապալվիմ մեծ վտանգի մէջ ընկնիմ, ասացի. «Այո՛, այդ նիւթերն իմն են:» Պաշտօնատարը հրամայեց ինձ իւր հետևից գնալ, և տարաւ մի մեծ տան առաջև, որ, առանց երկրպագութեան, բանտը պիտոյ է լինէր: Այն տեղ փակեցին ինձ մի առանձին խցի մէջ և հրամայեցին մնալ մինչև վճիռ կը լինէր:

Այդ առանձնութեան մէջ քանի որ մտածումէի, իմ ներկայ դրութիւնը առաւել և առաւել սարսափելի էր երևում: մարդասպանութիւնս — թէև անխորհուրդ կատարած — ոչ մի րոպէ հանգստութիւն չէր տալիս ինձ: Բայց առաւել այն մասին տանջումէր ինձ խղճմտանքիս խայթը, որ ևս ապահովեանէ կուրացած, անմեղութեամբ և անպղտութեամբ վարվելոյս:

Բանտարկութենէս երկու ժամ անցած, ինձ բանտէն դուրս հանեցին։ Կարճ սանդուղքի վերայով հասայ մի մեծ դահլէճ, ուր նստած էին տասն երկու ալէզարդ ծերունիք, մի սեղանի շուրջը։ Երկու կողմից կարդով շարած էին սև փիլիսատրոնի ձևով նստարաններ որոնց վերայ բազմած էին քաղաքի մեծամեծ և պատուաւոր անձինքը. բարձր սրահումը ժողոված էին հանդիսաւոր հանդերձներով խառն բազմութիւնը։

Երբ որ ես մօտեցայ սեղանին, ալևորներից միևը ոտքի ելաւ և վշտագին վեր կացաւ իւր տեղից։ Աստուածն էր դա։ Նա յայտնեց ամենեցուն, որ Թշուառ սպանվածի հայրը լինելով, չէ կարող նորա սպանողին դատել, և այդ պատճառով իւր տեղը և իրաւունքը յանձնում է այս անգամ իւր փոխանորդին։ Այդ փոխանորդը մօտ ինհսունամեայ հասակով ծերունի էր. նորա քունքերի վերայ հազիւ հազ ճերմակել էին քանի մի հատ ճերմակ ու դեղնած մազեր. բայց նորա կրակոտ և կայտառ աչքերը տակաւին չէին կորուսել երիտասարդութեան փայլը. նորա ձայնը պինդ և բարձր էր։ Նա ինձ հարցրեց. «Խոստովանո՞ւմես դու քո մեղադրանութիւնը»։ Ես ենդրեցի, որ ինձ երկայնմտութեամբ ականջ դնէ, և մանրամասնաբար պատմեցի նորան, ինչ որ դիտես անցել էր։ Ես նկատեցի որ իմ պատմութեան միջոցին կուսակալը երբեմն կարմրումէր, երբեմն դունատվումէր։ «Ո՞նչպէս, չարագործ, տարակուսեց նա, քո կատարած եղեռնագործութիւնը միւսների վերայ կամենումես ձգել»։ Փոխանորդը միշեցրեց կուսակալին, որ ինքնակամ հրաժարվելով պատասխան առնելուց, այժմ իրաւունք չունի հարցուփորձ կամ պատասխան առնելու։ Ամենևին յայտնի երևումէր, որ չարագործութեան պատճառը արծաթասիրութիւն չէր եղած, վասն որոյ կուսակալն էս ասաց որ սպանված տղջկայ մէնակից ոչինչ բան չէ պղտցած։ Փոխանորդը ասաց կուսակալին, որ անյապաղ դատելու համար, շատ հարկաւոր էր քննել նորա դատը կեանքի մանրամասն պարագայքը։ Այսպէս ուսուցիչացաւ այն օրի դատաստանը։

Գահերէց տաճկակալը սրահից վեռաց տղջկայ թղթերը. իսկ ինձ ուզարկից բանտ, ուր ես անմեկնելի տադնապով անցուցի օրս, և միայն նորանով էի միխիթարվում, որ դուցէ այդ թղթերից երևի մի յայտարերութիւն տղջկայ և կարմիր թիկնոցով անծանօթի մէջ։ Միւս օր նորից բերեցին ինձ տաճան։ Սեղանի վերայ

դիպած էին զանազան նամակներ։ Գահերէց առնականը հարց արեց ինձմէ «Ո՛ր ձեռքո՞վ են գրած այս նամակները»։ Ուշադրութեամբ նայեցի նոցա վերայ և իսկոյն ճանաչեցի այն ձեռքը, որով գրած էին իմ ստացած երկու տոմսակքը։ Այս իրողութիւնը ծանուցի գահերէցին. բայց իմ խօսքերս ամենևին չօգտեցին ինձ։ Նա ասաց. «Ո՞րթէ կարող չէի այդ երկու նամակքը ես ինքս գրած լինել, մանաւանդ որ նոցա նեղքոյ ստորագրած էր միայն Յ. տառը, որ իմ մականունս ևս սկզբնատառն է։ Այդ երկու նամակքը լի էին պէսպէս սպառնալիքով և նախատինքով արդելումէին սպանած աղջկայ պատկիլը։

Ըստ երևութին, կռատակալը շատ վատ բաներ պիտոյ է պատմած լինէր իմ մասին դատաւորներին. պատճառ, նորա խոտութեամբ և կասկածանքով հարցուփորձ էին առնում։ Գլուխս արդարացնելու համար խնդրեցի, որ տանիցս բերել տան իմ թուղթերը. բայց նորա ասացին ինձ որ այդ բանը և առանց իմ խնդրանքին արել էին, բայց ոչ մի թուղթ չէին գտել։ Երբ որ տեսանը արձակեցին, այլևս փրկութեան յոյս և հնար չէր ճնացել ինձ. և երբ երրորդ օրը մտայ դատաստանի դահլիճը, լսեցի իմ մահուան դատավճիռը, ինչպէս արժանի պատուհաս իմ կատարած մեղադասանութեանը։

Այսպէս ահա օտար աշխարհի մէջ պանդուխտ, ամենից բարձի թողև արած, ծաղիկ հասակիս մէջ, առանց մի յանցանքի, չարագործի մահով կեանքս պիտոյ է վերջացնեի անդութ դահճի սրի տակ։

Այն ահաւոր օրի երեկոն, երբ իմ վիճակը վճռվեցաւ, տխուր նստած էի բանտի մէջ և մտածումէի մահուանս վերայ։ Յանկարծ բանտի դուռները բացվեցան և ներս մտաւ մի երիտասարդ, որ քանի մի րոպէ լռութեամբ նայելով վերաս, ասաց. «Յալևկոս, Ո՞րթէ քեզ համ տեսանում այս տեղ»։ Կանթեղի աղօտ լոյսը թոյլ չէր տալիս պարզ տեսանել ներս մտանողի երեսը. բայց նորա ձայնը զարթեցրեց հոգուս մէջ անցած օրերի յիշատակը։ Սա փարեզի սակաւաթիւ բարեկամներիցս մինն էր — անունը Վ_ալէտոի, որ մի և նոյն ժամանակ ինձ դասընկեր էր, ուսումնարանի մէջ։ Վ_ալէտոին ինձ պատմեց թէ նա եկել է Ֆլորինտիա հօրը տեսութիւն առնելու, և լսելով իմ տարաբաղդութիւնը, — շտապել է այցելութիւն դալ ինձ, որպէս զի վերջին անգամ տեսանելով ինձ և

իմ բերանից լսելով այս սոսկալի անցքի իսկական պատմութիւնը, — եթէ հնար էր, ազատէ՛ ինձ, ասա թէ ոչ, քաղցրացնելով իմ կեանքի վերջին րոպէները, գոնէ բարեկամութեան սրբազան պարտքը հատուցանէ:

Այս մանրամասնաբար պատմելի նորան ամեն բանը: Ալէքսին շատ զարմացաւ և երկիւղութեան մէջ ընկաւ. աղաչեց, պատզամեց, որ նորան, ինչպէս մտերիմ բարեկամի, ամեն բան անկեղծօրէն և ճշմարտապէս յայտնէի: Այս սոսկալի երդումներով հաստատեցի, որ բոլոր պատմածս ճշմարիտ էր, և իմ միակ յանցանքը այն էր, որ արծաթասիրութեամբ կուրացած, — անզգոյշ և անխոհուրդ գտանուեցայ, և ամենևին չկշռեցի այն անհիմն խօսքերը, որ անճանօթը ասաց ինձ: «Ուրեմն դու չէիր ճանաչում Ֆրանքային», հարցրեց բարեկամս: Այս նորան ասացի, որ այն վատաբաղդ պիշերը առաջին անգամն էր, որ նորան տեսայ: Ալէքսին ասաց ինձ. «Այս տեղ մի սարսափելի գաղանիք պիտոյ է լինի, և առեանը շատ շուտ է կապել իւր դատավճիռը. նմանապէս ձայն կայ քաղաքում, որպէս թէ դու վաղուց ծանօթ էիր Ֆրանքայի հետ, և նորա սպանութեան պատճառը եղած է քո նախանձը, որով կամեցած էիր խափանել նորա ամուսնանալը այլ մեսայի հետ»: Այս ասացի որ այդ ամենը պատշաճումի կարմիր թիւնեցով մարգուն, բայց այժմ, տարաբախտաբար, հնար չունիմ նորան պարտաւորելու և իմ անձն արդարացնելու: Ալէքսին շատ ցաւեցաւ և խոստացաւ ամենայն կարելի հնար գործ դնել և ինձ ազատել այս խայտառակ մահից:

Թէև ես հաւատում էի որ Ալէքսին քաջ իրաւաբան էր, և ոչ իսկ արծաթի կամ աշխատանք կը խնայէր, բայց տարակոյս ունէի այն մասին թէ կարող էր ինձ ազատել: Երկու օր անասելի տառապանքի մէջ անցուցի, և այդ երկարատև միջոցին ամենևին չգիտէի թէ ինչ պիտի պատահէր ինձ. երրորդ օրը վերջապէս եկաւ Ալէքսին և ասաց. «Այս քեզ մի փոքրիկ մխիթարութիւն եմ բերել, բայց այդ մխիթարութեան հետ կապած է մի մեծ տարաբախտութիւն: Կեանքդ քեզ կը ճնայ. բայց մի ձեռիպէ պիտոյ է ղրկուիս: Ողջոյս շնորհակալ եղայ բարեկամիս, կեանքս ազատելու համար: Նա ինձ ասաց, որ կուսակալը անողորմ էր և վաճառ գործը նոր ի նորոյ քննութեան տակ ձգել. բայց վախենալով մի գուցէ անարդար երևէր, — թոյլ տուեց, որ քննիչն օրէնս-

քի մատեանքը, ուր արձանագրած էին Գլօրէնեանցի հին քրէական յանցանքները, և ևթէ նոցա մէջ գտանվէր այս դիպուածի նմանը, այնուհետև յօժարելու էր իմ վերայ ևս նոյն պատուհասը կատարել, որ կատարվել է անցած օրերի յանցաւորի վերայ:

Ա՛ստէտն և նորա հայրը ամբողջ օր ու գիշեր քրքրել էին հին դատաստանական մատեանքը և գտել էին մի դիպուած, որ ինձ ևնևին նման է եղել իսկին: Ընդ ժամանակ դատապարտածի վերայ կատարել են այս դատաստիկս. յանցաւորի յետ յետոյ կոչվէր, նորա ինչքը և ապացոյցքը աբեղան գանձարանի սեպհականութեան դատաստանին, և յանցաւորը սուրվէր ցուկանայի գաւառէն: Ուրեմն ես ևս կրելու էի նոյն պատուհասը: Ձեմ նկատողում ձեղ այն սոսկալի լռութիւն, երբ սկսայ էր ինձ անցանել բազմամբոխ հրապարակի միջով. ամենեցուն աչքի առաջև սկսայ էր ինձ բալձրանալ դլխատութեան բեմի վերայ, ձեռս կոձղի վերայ դնել, և ինքս իմ սեպհական արիւնովս շաղախվել:

Ա՛ստէտն առաւ ինձ իւր տուն. մինչև առաջանալս մնայի այն տեղ. յետոյ՝ առաւօրէն տուեց ինձ ամեն հարկաւոր բան, այլև ճանապարհիս ծախքը. իսկ իմ սառացուածքը, որ ես սրինվի քրտինքով վաստակել էի, ընդել էր գատաւորներին և նոցա սպասաւորներին ձեռքը: Ծողկի Գլօրէնեանն և գնացի Սիկիլիա, և այն տեղից նաև նապոլ և Հռոմ Սատմբօլ:

Ես կարծուածէի թէ գտանելու եմ իմ բարեկամն, նորանից կը ստանամ արծաթ, այլև սա ժամանակ մի կը բնակվիմ նորա տանը. բայց ի՞նչպէս նկատադրեմ իմ գործերը, երբ որ նա ինձ հարցրեց թէ ինչո՞ւ եմ կամենում իմ սեպհական տան մէջ բնակվել, որովհետև, ասաց նա. ես դեռ ևս քաղաք չհասած, — մի օտարական իմ անուամբ գնել է տուն այն թաղում, ուր սովորաբար և ըստ մեծի մասին բնակուածն Յոյնք, և դրացիներս յայտնել է, որ ես ևս շուտով գալու եմ: Խարեկամս հետ գնացի այն տունը և իմ հին ծանօթներից մեծ սիրով ընդունելութիւն ստացայ: Մի ծերունի վաճառական տուեց ինձ նամակ, որ գրել էր նոյն օտարականը:

Նամակի մէջ այսպէս էր ասած. «Յակոբոս, այսուհետև կը«կու առաջ ձեռք անձանձիր աշխատելու են քո համար և ինչ որ «քեզ հարկաւոր է, բոլորը կը հասուցանեն քեզ, որպէս զի դու «չսխտասա քու կորուսած ձեռքը: Եւ Տունը — որ դու տեսա«նուժես և նորա մէջ գտանված կարասիքը, բոլորը քեզ են պատ-

«կանուխ, և ամեն տարի կը տառնաս այնքան արծաթ, որ ոչ մի «աղգականիդդ պակաս չտալիս: Երանի՜ կալոզանայիր դու նորան, որ բիւրապատիկ առաւել Թշուառ է, քան թէ դու:» Ես «հասկացայ ու՛ր պիտոյ է լինէր նամակի գլուխը: Ծերունի վաճառականը ասոյց, որ նամակաբերը մի Ցոռանկ էր կալմիկ Թիւինոյ հպատակ: Իմ նոր տունը ամեն կերպ կարասիքով յարդարած էր, իսկ խանութս այնպիսի Թանգագին վաճառքով լցուցած, որոնց նմանը կանքիս մէջ երբէք ունեցած չէի: Եւ այս տասը տարին, որ անցաւ, սկսեալ իմ Թշուառութեան օրից, ես պարապումեմ առուտուրքով սովորութենից աւելի, քան թէ կարօտութենից ըստիպուած: Այնուհետև ոտս չկոխեցի այն աշխարհի մէջ, որ իմ Թշուառութեան պատճառը դարձաւ: Ամենայն տարի առատութեամբ հաղար ոսկի դահեկան, և Թէպէտ յօժար եմ կարծել, որ նորա ուղարկողը ամենևին մտադիր պիտոյ է լինի, բայց ոչինչ կարող չէ Թեւ Թեւացնել այն վիշտը, որ ձ՛նշումէ հոգիս: Տարաբաղդ Ոխանքայի պատկերը, որին անողոքմտաբար ապանեցի, անդադար աչքիս առաջինն է:

Յաղկոսը աւարտեց իւր պատմութիւնը: Ամենքեան կապկպեալ ականջ էին դնում նորան. բայց ամենից առաւել տիրեցաւ անձամնօքը: Վանի քանի անգամ սրտի խորքից հառաչումէր նա. Մուկլը նկատեց նորա աչքերամբ և արտասուք: Երկար ժամանակ լսեցին այս անոյքի վերայ:

«Ա՛ր Թէ դու չես առում այն մարդը, որ այդքան ցաւալի պատասանել է քեզ, որ զրկեց քո մարմինը աներեսպատիւից, և քո կեանքը մերձ ի մահ վտանգի մէջ ձգեց» հարցրեց անձամնօքը: — Ի հարկէ պատահումէ երբեմն, որ ես նորա վերայ դառնամ Աստուծուն. բայց ապօթքս և հառաչս ինձ մխիթարութիւն այդ վշտալից ժամերի մէջ: Քրիստոնէական հաւատը պատուիրեց ներել իւր Թշնամիներին: Բայց նա, որի համար ես այդքան ջարդարանք կրեցի, անշուշտ, հաղարապատիկ աւելի տարաբաղդ պիտոյ է լինի քան Թէ ես: — «Դու ասիր հոգի ունես, ասաց անձամնօքը բարձրաձայն, սեղմելով Յաղկոսի ձեռքը:

Յանկարծ պահապանների առաջնորդը այլայլած դէմքով ներս մտաւ և նոցա խօսակցութիւնը կտրեց, ասելով «Պիտոյ է շուտով ժողովել վրանները և ճանապարհ ընկնել. պատճառ, այս տեղս շատ վտանգաւոր է, աւազակները յաճախ յարձակվումեն

կարաւանների վերայ. բայց ի տղայից յաւելացրեց նա, պահապանները հեռուից տեսել են մի քանի ձիաւոր մարդիկ։

Ընկեր և սարսափից վաճառականների մարմինը քստմնափուշ եղաւ այս անակնկալ և ահագնագին լուրից. անծանօթը միայն ինց անխռով և անշփոթ, այս ընդհանուր աղմկի մէջ, և չէր հասկանում երկիւղն պատճառը և ասում էր, այսպէս պահպանված դղեակ, ինչո՞ւ ահ են կրում մի քանի վրանաբնակ Արաբացոց յարձակման երեսից։

Պահապանների առաջնորդը պատասխանեց. Դէթ մեր վերայ յարձակվողը լինէին վրանաբնակ Արաբացիք, ասելը մինչև աւելորդ է, որ ես երկիւղ չէի կրելու նոցանից. բայց ձայն կայ թէ քանի մի ժամանակից այս կողմերումն նորից յայտնուել է Օրբաստանը, որից անպատճառ պիտոյ է զգուշանալ։

Ընծանօթը հարցրեց. Ո՞վ է այդ Օրբաստանը. և վաճառականների մէջ ամենից ծերը, անունը Ահմէդ, պատասխան տուեց նորան. «Այդ մարդու մասին տարբեր կարծիք կայ ժողովրդի մէջ. ոմանք ասումեն թէ — դա մի չնաշխարհիկ էակ է. պատճառ, շատ անգամ կռւել է նա հինգ վեց հոգու հետ և ամենեցուն յաղթել է. այլք կարծումեն թէ, դա ազգով Ֆրանսիացի է, որ զանազան թշուառութիւն կրելով թողել է հայրենիքը և պատսպարվել է անապատումը. բայց, իմ կարծիքով, դա մի դող և աւազակ մարդ է»։

— Դող է կամ աւազակ, չգիտեմ. այնքան բան յայտնի, է որ ամենիւ մարդ է, սակայ մի ուրիշ վաճառական, Լէգաէ անունով, և իւր ամենութիւնը դործով ցոյց է տուել իմ հայրապետ եղբօրը. մի օր ես կը պատմեմ ձեզ թէ ինչպէս պատահել է այդ անցքը։ Նա մեր գերդաստանին շատ բարերար է գտանվել և քանի որ կենդանի է Օրբաստանը, ոչ ոք չէհամարձակվելու մեզ վնաս հասուցանել։ Ուրիշ աւազակների նման նա չէ կողոպտում, այլ պահանջումէ միայն ապահովութեան հարկը, և ով որ յօժարակամ տալիս է այդ հարկը, — նա կարող է ազատ և համարձակ անցանել անապատի միջով և ոչ մի վնաս չկրել աւազակների ձեռքից. պատճառ, Օրբաստանը անողորմ էշխան է։

Այսպէս խօսում էին վաճառականները վրանի մէջ նստած. բայց պահապանները, որ վրանի բերան կողմը շարված էին, — շատ անհանդիստ էին։ Յանկարծ նոցանից մէկը նեղս մնաս, ասելով

թէ շուտով գալու են աւազակները։ Վաճառականք սկսան իւրեանց մէջ խորհուրդ առնել, արդեօք պիտոյ էր նոցա առաջև երթալ, թէ սպասել, որ թշնամիքը ինքեանք յարձակվին։ Ընդդէմ և այլ երեք վաճառականք արժան համարեցին սպասել և նայել թէ ի՞նչ կը լինի, և այն ժամանակ միայն ընդդիմանալ առնել, երբ որ թշնամիք ինքեանք սկսին կռիւը։ Իսկ կրակոտ Մուլէյը և Յալևկոսը լաւ համարեցին աւազակներին հանդէպ գնալ, և հրաւիրեցին անծանօթին գալ իւրեանց հետ. բայց նա անխոռով դէմքով զրպանից հանեց մի կապոյտ թաշկինակ կարմիր աստղներով զարդարած, կապեց տէգի ծայրին և հրամայեց սպասաւորին, որ առնէ և վրանի վերայ տնկէ։ Այս բանը կառաւարելուց յետոյ, ասաց Ակլիմ-Խաթուքը. «Վերևս կը տամ, եթէ այս նշանը տեսնելով, ձիաւորները չհեռանան մեզանից և մեզ անվնաս չթողնեն։ Մուլէյի սիրտը չը հանգստացաւ այս խոստմանբս. բայց սպասաւորը տնկեց տէգը վրանի վերայ։ Այդ միջոցին ճանապարհորդները պատրաստեցին իւրեանց զէնքը և անհանգիստ սրտով սպասումէին ձիաւորների մօտենալուն։ Բայց, ինչպէս երևումէր, նշանի զօրութիւնը հասկացել էին աւազակները. պատճառ, դարձուցին նոքա իւրեանց ձիերը և բանակի մօտից անցանելով հեռացան։

Վրանի մի բոպէ պապանձած ճնշային ճանապարհորդները. երբեմն նայումէին ձիաւորների և երբեմն օտարականի վերայ, որ հանգիստ կանգնած վրանի դրան առաջև, հեռի նայումէր, իբր թէ ոչ մի բանից տեղեկութիւն չունէր։ Վերջապէս Մուլէյը կարից նոցա լռութիւնը, ասելով. «Ո՞վ ես դու, ով մեծազօր անծանօթ, որի լոկ նշանը սանձումէ անապատի կատաղի որդիքը»։ Ձեր մեծութեան դովասանքը չափից դուրս վեր է, քան թէ իմ սրամտ լսութիւնը» պատասխանեց Ակլիմը։ Վերութենից ազատվելուս ես հետս առայ այս նշանը, որի զօրութիւնը ինձ անյայտ է. այնքան միայն դիտեմ, որի ձեռքումս կայ այսպիսի նշան, նա մի հզօր մարդու հովանաւորութեան ներքոյ է»։

Վաճառականքը շատ գոհ եղան անծանօթից. տալով նորան իւրեանց բարերարի անուն. և յիրաւի որ ձիաւորները այնքան բազմութիւն էին, որ անհնարին էր նոցա ընդդիմանալ։

Հոլորովին միտնավաճ ճանապարհորդները տեղաւորվեցան հանգիստ առնելու. իսկ երբ որ արևը մայր մտաւ և գիշերային քամին սկսաւ փչել, վրաններըը ժողովեցին և ճանապարհ ընկան։

Ա՛իւս օրին նոքա իջևանեցան այնպիսի տեղ, ուստի մի օրի ճանապարհ էր մնում մինչև անապատի վերջը: Երբ որ ամենքը հանգչելոյն մեծ վրանի տակ, այն ժամանակ Ղեգմոն վտճատա՝ կանը սկսաւ այսպէս խօսել. «Դրեկեան օրը ևս ձեզ ասացի որ ա՝ հարկու Օրբասանը մեծահոգի մարդ է. իսկ այսօր կամենում եմ ապացուցանել, որ ասածս ճշմարիտ էր, և այդ պատճառով կը պատմեմ ձեզ եղբօրս դէպի անցքը, Փոխանակ աղտոտելոյն մարդ:»

(Շարունակութիւնը յետոյ առաքելոցակում)

Միխայէլ Վայէլեան:

ՆԱՊՕԼԷՕՆ ՄԵԾԻ

ՓՐԱՆՍԻԱՑԻ ԿԱՑՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

(Շարունակութիւն.)

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Արշաւանքը Իտալիայ և եգիպտոսի վերայ.— Ասլիսպանի մարտը:

Յօնտապարտէնքեան և վեց տարեկան էր, այսինքն այն հասակ՝ ին մէջ, որի մէջ էր Հաննիբալը առաջին Պունիկեան պատերազմի ժամանակ, երբ որ Իտալական զօրքի սպայապետութիւնը ստանա՝ լով, Հռոմի տեղը բռնեց: Դրիեկոօրեան, թէև յարգում էր վերջինիս քաջասրտութիւնը և արիութիւնը, բայց նկատելով որ նոցա յաղթութիւնները միշտ անարդիւն էին մնում, հրաժարեցրեց

նորան այդ մեծակշիռ պաշտօնից, և նորա փոխարէն, ինչպէս ասացինք, Ռօնապարտէին ընտրեց:

Նրբը Ռօնապարտէն հասաւ Ֆրանսիական ջոկքի բանակը, զօրքը և զօրավարքը սահմռկած անբնաւորոշապէս և սառնութեամբ ընդունելին նորա գալուստը, ոմանք չվատահանալով նորա պատեհ բազմական հմտութեանը, իսկ միւսերը նախանձելով նորա յաջողակ բազդին: Նորա անցած քաջագործութիւնը ոչինչ բանի տեղ էին դնում, ասելով թէ Ռօնապարտէն իւր սխրագործութեան հրամանը առացել է յաղթահարելով փոքրագի ապստամբներ և ամբաւկոծելով Փարիզի բնակիչները: Եւ յիրաւի, ի՞նչ ակնկալութիւն կարող էին ունենալ մի դեռահաս երիտասարդից, որի մարմնի կազմուածքը նիհար և տկար էր, որի թշերը փոս ընկած և դուռնաթախ—յայտնի նշանակ նորա տարաժամ վատառողջութեան: «Ինչո՞ դադարեցաւ, ասում էին նոքա, անապէր քաղաքացիների հետ կռուելուց, ինչո՞ւ կամենում այժմ իւր ոյժը չափել Պայսերութեան (Աստրիայի) ընտիր ընտիր զօրավարների և քաջամարտիկ զօրքի հետ: Ո՞ր խելացնորը համոզեց Դիրեկտօրիան այդպիսի զօրապետ ուղարկել Իտալական բանակը: Այս ի՞նչ արհամարհութիւն է, այս ի՞նչ ահռելի քամահանք է, որ հայրենիքը ցոյց է տալիս իւր երեսուն և վեց հազար հոգի անձնանուէր զօրքին, նորա վիճակը յանձնելով մի տկար մարդու ձեռք, նորա փառքը զոհելով Բարրասի սիրականի մտախաւսութեանը և երեխայական հաճոյքին:»

Բայց այդ տրտունջը խնդոյն փարատվեցաւ, երբ որ Ռօնապարտէն սկսաւ իւր հազուագիւտ ընդունակութիւնը խօսքով և գործով յայտնի կացուցանել. այն ժամանակ ամենքը հասկացան, որ այդ տկար մարմնի մէջ մի վսեմ և զօրաւոր հոգի կայ, այդ անշուշան մարդու մէջ կայ տակաւին չզարգացած հանճար, բայց եթէ զարգանայ, մեծամեծ փառքի հասուցանելու է թէ նորան, և թէ նորա հայրենիքը: Օրինակից ընկերները իւր չորս կողմը ժողոված և Ըլպեան սարերի բարձր կատարներից ցոյց տալով Պիեմոնտի և Լօմբարդիայի առատաբեր դաշտերը, ասաց. «Կաջէր, դուք քաղցած էք, դուք մերկ էք, հայրենիքը երախտապարտ է ձեզ, բայց ոչինչ կարողութիւն չունի ձեզ օգնելու: Ձեր համբերութիւնը, ձեր քաջասրտութիւնը, այո՛ պատիւ է ձեր անուանը, բայց չէ տալիս ձեզ ո՛չ օգուտ և ո՛չ փառք: Ես կամիմ տանել ձեզ մի պտղա-

ւէտ աշխարհ, ուր կան մեծաշէն քաղաքներ, ճոխ գաւառներ. այն տեղ կը գտանէք և պատիւ, և փառք, և բաղդ: Խոտորեցան ղենուոլք, մինչեւ կը պակասի ձեր մէջ քաջութիւնը:»

Նաջերի սրտի մէջ մի ուրախ դող ընկաւ, նոցա ցնծութեան բացագանչութիւնը մինչեւ երկինք հասաւ, և ղենուոլք և զօրականք առհասարակ այն բոլորին հասկացան իւրեանց դժբը, և գուշակեցին իւրեանց ապագայ փառքը: Ահա, հանդէս եկան այն քաջազնական գործերի պատերազմողքը, որոնք աշխարհին չտեսած և չլսած տեսարաններ էին ցոյց տալու, և միլետոսոլ մարդերի հիացման ծափահարութեանը արժանանալու:

Ընդհետև Կասօլէօնը ունէր իւր ձեռքում ամեն հնար ու ճանապարհ իրագործելու իւր դիտաւորութիւնքը և իւր, մի ժամանակ, մտքով յղացած գաղափարներին զգալի ձև ու կերպարանք տալու. այնուհետև նորա համար անհնարին բան չկար աշխարհիս երեսին:

Ֆրանսիական զօրքի բանակատեղը Նիցցայումն էր տեղաւորված. նոցա թնդանօթաձիգ գունդը սաստիկ կարօտութիւն էր զգում ձիերի. գրասանների համար ձալակ չունենալով, Հերը զօրապետը տախտակած էր հեծելազօրքի ձիանքը Ոծնի եղերքը ուղարկել, որ այն տեղ արօտ գտանէին: Կասօլէօնի իշխանութեան տակ գտնուած զօրավարներն էին Մասենան Նիցցացի, Օժերօ, որ մի ժամանակ սուսերամարտութեան ուսուցիչ էր, Սերրա-Բէնէ, որ ժառանգ վաշտապետ էր, Լահարպը, հայրենիքից աքսորած շվեյցարացի, Վէնթուրը, հասարակ ղենուորական, Լա և Ժոբերը, Սերվէնի և այլք, որք հռչակված էին իւրեանց պատերազմական քաջագործութեամբք: Այս զօրավարների ձեռքի տակ կար երեսուն հազար պատերազմող զօրք, որք բանակված էին Ալենիենան սարերի այս կողմում. բայց ի դէպ անկից Գարէսիո աւանում (Պիեմոնտում) վեց հազար զօրականքից բաղկացած մի զօրաբաժին կար Ալերոուբիէ զօրավարի առաջնորդութեան տակ, որի պարտականութիւնն էր Պիեմոնտացոց վերայ հսկող աչքով նայելու:

Նկիւս զօրք, մինը Պիեմոնտացոց, Կոլլի զօրապետի իշխանութեան տակ, միւսը Աւստրիացոց, որոնց առաջնորդութեան Քոլլիօ անուանի զօրապետը, դերազանց էին Ֆրանսիացոց զօրքից թիւով, ըստ որում 80,000 հոգուց էին բաղկացած, և թէ պատերազմական կարևոր հանդերձանքով և պաշարով, որովհետև ու-

նէին 200 թնդանօթ և մի պատուական հնձելազօր, այլև վստահութիւն ունէին իւրեանց քաջավարժ մարդերի վերայ. այսպիսի թշնամիների հետ գործ ունէր Ռօզէն մտադիր էր պահեստը գրաւել. իսկ Ռօլիէօն կամենում էր ձանապարհ բանալ դէպ ի ծովի ափերը, որ կարողանար աղատ հաղորդակցութիւն ունենալ Գենուայի հասարակապետութեան և Անգլիայի նաւատորմիղի հետ:

Ռօնապարտէն իսկոյն հասկացաւ, որ, իւր գործը յաջողութեամբ յառաջ տանելու համար, շատ հարկաւոր էր այդ երկու զօրապետները միմեանցից բաժանել, և այդ դժուար նպատակին հասանելու համար, պիտոյ էր Ալպեան սարերը անցանելով, նոցա երկուքի մէջ տեղում կանգնել: Ռօլիէօն հասկացաւ նորա դիտաւորութիւնը. բայց այն շնորհայեցութիւնը որով կամենում էր վարվիլ իւր թշնամիների հետ, նորա կորստեան պատճառ դարձաւ: Նախ և յառաջ Աւստրիացիք յաջողութեամբ վարեցին մի քանի պահակ զօրքեր և տիրեցին մի կոտոր երկրի. բայց չկարողացան Ֆրանսիացոց ձեռքից խլել Մօնտելիջինօ բերդը, որ Մօնտենօտի ձանապարհի վերայ էր. 12,000 հոգի զօրքով Ռամպօն հաղարապետը պաշտպանում նորան: Երեք անգամ Աւստրիացիք յարձակվեցան այդ փոքրիկ բերդի վերայ և երեք անգամ մի բուռն թշնամիք մեծ կոտորած առնելով նոցա մէջ, հալածեցին նորանից: Երբ որ Ֆրանսիացիք տեսան թէ թշնամիների կրակը սաստիկ կոտորած է պատճառում նոցա մէջ, ամենքը միաբերան երդում կեան, որ մինչև վերջին զինուորի մեռանելը բերդը չտան Աւստրիացոց ձեռք. այդ անձնանուիրական ուխտից մեծ քաջալերութիւն ստացան պաշարված Ֆրանսիացիք և այնուհետև անվհեր սրտով ընդդիմանում էին թշնամուն, մինչև պէտեր բանակից օգնութիւն հասաւ նոցա:

Այդ միջոցին Ռօնապարտէն Ասլան քաղաքումն էր. իսկոյն հրամայեց, որ Լահարպը իւր զօրաբաժինն առնու և երթայ, Մօնտենօտի ձանապարհի վերայ տանդայ, իսկ Օժերօն նորան օգնական լինի այդ արշաւանքի ժամանակ: Դոյն միջոցում պատուիրեց Մասսենային, որ իւր զօրքը զարտուղի ձանապարհով յառաջ տանելով, Աւստրիացոց յետադարձը կտրէ: Ապրիլի 22 ին առաջին կիսաերեում պատերազմը հասարակայ դարձաւ: Աւստրիացոց հետևակ զօրքը չկարողացաւ և ոչ իսկ թէթև ընդդիմութիւն տա-

նել, իսկոյն բաց թողեց իւր ամրապինդ կայքը և վախճան դնել ի Դէպօ, թոյլ տալով Ֆրանսիացոց 2000 ից առաւել գերիք, ևս և պատերազմի դաշտը: Եյապէս էր Մօնտենօսի յաղթութիւնը, որ Ռօնատպատէի առաջև բացեց Ալենկինեան սարերի ճանապարհը:

Ընտրիացիք իւրեանց զօրքը սեղմած շարքերով դուսմարել էին Դէդօյի մօտ և բռնել էին Ակքիու ճանապարհը, իսկ Պիեմենտացիք ծածկել էին Ձեվայի և Պիեմենտի ճանապարհը: Ռօնատպատէն իւր զօրքով Ռօմիդայի հովիտումն էր բանակված, ճանապարհը ունենալով Ընտրիացիք, և ձախ կողմամբ Պիեմենտացիք: Դէտ ևս նորա զօրքը դադար չէր առել երեկեան վտառտոյ յաղթութեան վաստակից, նոյն օրին ահա ստիպված էր երկու դաշնակից զօրքերի հետ կռուիլ և յաղթել: Ռօնատպատէն չվհատեցաւ այդ դժուարութիւնքը տեսանելով. անվհեր հոգով հրամայեց իւր զօրքին երկու մասն բաժանված, մինը Օժերնի առաջնորդութեան տակ, վազել Պիեմենտացւոց վերայ, իսկ միւսը Լահարպի և Մասսենայի առաջնորդութեան տակ, հանդէպ գնալ Ընտրիացոց: Օժերն անյապաղ գնաց Պիեմենտացւոց դէմ, ուրոնք պատրաստված էին Մոլեսիմո նեղուցի մէջ, և քաւտատան ութ ժամ չարաչար կռուելոց յետոյ, դուրս ձգեց նորանց այդ տեղից ստատատանարանից: Նոյն ժամայն Լահարպը և Մասսենան իւրեանց սակաւաթիւ զօրքով յարձակվեցան դէպ ի Դէդօ, ուր Ընտրիացիք նորանոր զօրութիւնք ստացած, պատրաստ էին կամակոր դիմադրութիւն առնել. Դէդօն տավեցաւ. բայց Ընտրիացիք գիշերային մթնումը նորից տիրեցին նորան: Միւս օր, պատերազմը անհնարին կատաղութեամբ բորբոքվեցաւ նոցա մէջ. նախ և յառաջ Ֆրանսիացիք դադար առան, տեսանելով Ընտրիացոց քաջասիրտ պաշտպանութիւնը. բայց յետոյ կրկնապատկելով իւրեանց եռանդը և քաջութիւնը, այլև խրախուսելով իրեար, միանգամայն տապալեցին Ընտրիացոց զօրքը, և նոցա ջանքը պսակվեցաւ վատքով. թշնամիքը վախան նոցա առաջևից, և բոլորապտոյտ յաղթութեամբ վարձատրվեցաւ նոցա արիութիւնը:

Մօնտենօսի, Դէդօյի և Մոլեսիմոի պատերազմը շատ թանգ նստաւ թշնամի զօրքին. նոցա կորուստն էր հինն հազար զերի, երեսուն երեք թնդանօթ, բոլոր դրօշակ և բիւրաւոր տպատաճ և վի-

բաւարար զինուորք: Բայց այդ յաղթութիւնքը ոչնչով էին Ֆրանսիացոց աչքում, համեմատելով այն հետեւանքի հետ, որ բղխեցան դոցանից: Յաղթված Պիեմոնտացիք և Աւստրիացիք թողեցին իւրեանց գրաւած տեղերը և միանգամայն հակառակ կողմն փախան, և այդ կերպով Նօնտպարտէի առաջն բաց արեցին այն ճանապարհը, որ նոքա ցանկանում էին: Ընդհակառակն Նօնտպարտէն առնալով իւր առաջ խաղալով, կարող էր տեղափոխվիլ Աւստրիայի վերայ և այն տեղից յառաջ տանել իւր պատերազմական շարժմունքը: Պիեմոնտի և Լօմբարդիայի ճանապարհները նորա ձեռքումն էին. և այսպէս կարճ միջոցում նա ամենի ուշադրութիւնը իւր վերայ դարձուց, զօրապետից սկսած մինչև յետին զինուորը, և բոլորեցան հիացման նիւթ դարձաւ: Երբ որ նորա զօրքը Մօնտ-Ցենիսի բարձրաբերձ Ալպեան սարերը, խոյրն հասկացան իւրեանց երիտասարդ զօրապետի պատերազմական ականաւոր հանճարը, և ինքը Նօնտպարտէն չկարողանալով զսպել իւր սրտի յուզմունքը, բացագանչեց. «Annibal avait franchi les Alpes; nous les avons tourné. (Հաննիբէալը Ալպեան սարերի վերայից ճանապարհ է կոթել, բայց մեք զբնապոյծ անցել ենք նորանց): Ընդ քանի մի ըոսգերի մէջ բոլանդակած էր նորա պարշաւանքի բոլոր դաղտնիքը: Բայց շուտ հասանելու էր այն օրը, երբ Նօնտպարտէն տեղիք ունենալու չէր նախանձելու Հաննիբալի պարծանքին: Իսկի զօրապետը իւր Պիեմոնտական զօրաբաժնով բանակված էր Ձեվումի, բայց շուտով արտաքսվեցաւ այն տեղից և իւր զօրքը տարաւ նախ Կուբաիլիա և ապա Մօնդովի: Բայց այն տեղ էս երկար չմնաց. Ֆրանսիացիք յարձակվեցան նորա վերայ, երիք հաղար հոգի սպանեցին և սաիպեցին հետանալ: Մօնդովի յաղթութեամբ Ֆրանսիացիք սիրեցին Խերասքօ բերդին:

Նօնտպարտէն Խերասքօ բերդումն էր, երբ որ Սարդինիայի թագաւորը լսելով նորա արագընթաց յառաջադիմութիւնը, զարհուրեցաւ և զինադադար խնդրեց: Զինադադարի (nepemmpie) պայմանները այսպէս էին. Թագաւորը պարտական էր Կանի, Տօրտօնի և Ալեքսանդրիա բերդերը, որպէս առհաւատչեայ տալ Ֆրանսիացոց ձեռքը, այլև շատ մեծերանոցներ և ամբարանոցներ, նորա զօրքի համար: Ընդհակառակն Նօնտպարտէն երկիրս չունէր ոչ առվից, ոչ գլուխց և ոչ ուրիշ կերպ կարօտութենից. ամեն հարկաւոր հանդերձանքով և կերակրի պաշարքով ապահոված, և բայ ի

դրանից երեք ամրապինդ բերդերով պաշտպանած էր նորա ղօրքը։ Ռօնապարտէն այն մարդկից էր, որոնց փառասիրութիւնը յա-ղենուամէ թեթև յաջողութիւններով. նորա բնութիւնը ամենևին հակառակ էր իւր հնձած դաղինների վերայ հանդստանալ. իւր ղօրքի սիրտը վառեց նորանոր ապագայ փառքերով և մեծամեծ յոյսերով և յորդորեց նորանց կեանքի թանգագին ժամերը պարապ չանցուցանել։ Յանձնելով Մուրատին, որ նորա աջակիցն էր, քսան և մի հատ դրօշ, թշնամիներից խլած, պատուիրեց որ տանէ դրանց Վիլեքտօրիային և բերանացի պատմէ Ֆրանսիացոց կատարած քաջագործութիւնքը. և ինքն պատրաստվեցաւ դէպ ի նորանոր վտանգներ պատերազմական ասպարէզի մէջ։

Ընդհուպ վերին Իտալիայի դաշտերը բաց էին նորա առաջև. Ռօնապարտէն իւր քամակում թողնելով Պիեմոնտը, դէպ ի Լօմբարդիա դիմեց. Ռօվերէօն կամելով նորան դիմադրաւ լինել, իւր ղօրքը Ակվիայի և Տևսինի մէջ էր ժողովել. Ռօնապարտէն ճարպատար շարժողութեամբ նորա ուշադրութիւնը հեռացրեց իւր ղօրքից և անցաւ գետը, ոչ հեռի Ադդայից։ Առանց պատերազմի դրաւեց Պլեզանսը, Փօմբիօն և Կաղալը։ Մնում էր միայն անցնել Ադդան, որ իւր աղբիւրքը ստանալով Ալպեան սարերից, գալիս է խառնվում Պօ գետի հետ։ Նապօլէօնը քամակը չդարձուց այդ դժուարութիւնների առաջև. իսկոյն իւր ընթացքը ուղղեց դէպ ի Լօդի քաղաքի կամուրջը, որի վերայով մնում էր այդ գետը անցանել։ Երբ որ հասաւ այն տեղ, տեսաւ որ թշնամիքը յառաջուց արդէն գրաւել էին թէ քաղաքը, թէ գետը և թէ կամուրջը։ Մեծ կոտրած առնելով արտաքսեց նորանց քաղաքից. բայց գետի հանդիպակաց կողմում դումարված թշնամիները բոլորովին անեմանալի էին կացուցել կամուրջը. պատճառ, 12,000 հետևակ զօրք, 4,000 պրուձի և քսան թնդանօթ պաշտպանութեան մէջ էին նորան։ Այլ և այնպէս, գետի անցումը Ֆրանսիական զօրքի վրկութեան միակ հնարն էր. ապա թէ ոչ, նոցա առաջև յաւիտեան փակվելու էին Լօմբարդիայի դուռնները։ Պիտոյ էր մի բան որոշել. Ռօնապարտէն անյապաղ հրամայեց առաջ, որ արշաւանքը սկսվի. թշնամիների ռումբերը և դնդակները կարկտի պէս թափվեցան նոցա վերայ, Ռօնապարտէն շուտ հասկացաւ այդ ձեռնարկութեան դժուարութիւնը և իսկոյն փոխեց յարձակման եղանակը. հնձելազօրքին հրամայեց, որ քաղաքի վերին կողմից ճանճաղ տե-

զովը անցանեն Ազդա գետը: Մի և նոյն ժամանակ ընտիր զօրքը. 10,000 հոգի, Մասենայի առաջնորդութեան տակ, հրաման առացաւ սեղմած շարքերով արագաքայլ յառաջ գնալու դէպ ի կամուրջը: Այս քաջերի դէմ դարձուց Թշնամին իւր հրաշունչ թնդանօթների բերանը և անհնարին կոտորած առնելով, առ ժամ մի յետ մղեց նոցա ընթացքը. բայց Ֆրանսիացոց երկիւղը կարճ տեւեց. իւրեանց զօրավարների օրինակից և խրախուսական ձայնից քաջալերուած, կրկնապատկեցին իւրեանց ջանադրութիւնը, կուրծքերն յարձակվեցան Թշնամու մարտկոցների վերայ, կոտրեցին թնդանօթաձիգները, բայոնեաներով ջարդ ու փշուր արեցին նոցա հինաւուրց հետևակ զօրքը. մի և նոյն ժամանակ Ֆրանսիացիքն հեծելազօրը դէպի հունը (ծանծաղ տեղը) գտանելով, անցան նորա միւս կողմը, յարձակվեցան Թշնամիների վերայ, դէպ ի վախուստ դարձուց, և այդպէս լիակատար յաղթութեամբ պսակվեցաւ այն օրի Ֆրանսիացոց յաղթութիւնը:

Յօդիւս պատեաղմը Ֆրանսիացոց ձեռք ձգեց Կրեմոնը և Պավիան. բայց Ռօնապարտէն իւր ընթացքը ուղղեց դէպ ի Մայլանդ (Միլան): Նորա գալուստը լսելով Ղրիդուքսը, (Էրց-Հերց) արուսաւուքը աչքին թողեց այդ մայրաքաղաքը և հեռացաւ. Ֆրանսիացոց կուսակիցքը, որոնք Իտալիայի մէջ յեղափոխութիւն էին դրդռում, անպաշտպան տեսանելով քաղաքը, տիրեցին նորան, և երբ որ մօտեցաւ Ռօնապարտէն, նոքա փոխանակ դիմադարձութիւն առնելու և պատերազմելու, ընդունեցին նորան ինչպէս իւրեանց ազատիչ: Արշաւանքի սկզբից հազիւ մի ամիս անցած, Նապօլէօնը մտաւ Մայլանդ, մայիսի 15 ին. ժողովուրդը անթիւ բազմութեամբ, ցնծալի աղաղակով և մեծամեծ յոյսերով եկաւ նորա յառաջ, իւր շնորհակալութիւնը յայտնելու: Ամենքը շտապում էին իւրեանց աչքով տեսանելու և ընդունելու երիտասարդ զօրավարի վերայ, որ քանի ամիս յառաջ անյայտ և աննշան մարդ էր, իսկ իւր սխրագործութեան առաջին օրերից սկսած, արդէն հասանում էր Ֆրանսի քաջազունների: Մայլանդ մտած, Նապօլէօնի առաջին գործն այն եղաւ, որ իսկոյն իւր նուաճած երկիրներում նորանոր օրէնք սահմանեց, իբրև փոխարէն իւր պատերազմական ծախքին, բնակիչների վերայ 20 միլիոն Ֆրանկի հարկ դրեց: Մօդենայի Դուքսը իւր անձը երկանիկ էր համարում, որ կարողացել էր սմբալի գինադադարը արծաթով դնել. Պարմայի Դուքսը անտրը-

տունջ հնազանդվեցաւ և նորա ուզի տակ դրեց իւր գլխիը. օրէ օր ապաստանէին, որ նորա օրհնակին հետևէին Հռոմը և Կեսարօ-լնսը։ Ալ ժամանակ Հօնապարտէն իւր յաջողութիւններով սրբե-ցած, մի նոր յայտարարութեան թուղթ դրեց իւր գլուխորնկերին, որ այս խօսքերովն էր վերջանում. «Ձեր յաղթութիւնը մի օր ձեր «յետնորդներուն համար արժանայիշատակ դարաղլուխ կը դառնան. «դուք անմահ վառք կ'ունենաք նորանով, որ պատճառ եղաք նո-«րագոյն ամենազեղեցիկ աշխարհի երևսը կերպարանափոխելու։ «Ֆրանսիայի աղատասէր և աշխարհի առաջև անձնաճելի ազգը «տարաբ է Եւրոպային մի վառառոր խաղաղութիւն. և երբ որ դուք «կը մտանէք ձեր տան յարկի տակ, ձեր քաղաքակից քը, մտով «ցոյց տալով ձեր վերայ, կասեն. «Դա Նա Իտալիան ջբրեցն էր։»

Հօնապարտէն ուղեղ դէպ ի Ազիք էր դիմում, երբ որ մի ա-նակնկալ դէպք սաիպեց նորան յետ դառնալ։ Լօմբարդացի ժո-ղովուրդը Ֆրանսիացոց դէմ անհնարին կատաղութեամբ վեր կացաւ. մղեռանդ խաժամուժ ամբոխը ահ ու դողով նայու-մէր Ֆրանսիական զօրքի վերայ և կարծումէր թէ նա իւր յաղթու-թիւնքը դէպ ի չարը գործ դնելով, կարող է վտանգի տակ ձգել նոցա պաշտած հաւատը և հնուց եկեղեցական ծէսերը։ Ընդուա-կանները կամենումէին յետ դարձուցանել իւրեանց կորուսած ա-տոմութիւնքը, եկեղեցու սպասաւորքը երկիւղ ունէին, մի գուցէ Ատուծոյ խորանը ամենակոս լինէր նոցանից. պատրաստների մաք-մինը քաոմնափուշ էր լինում, երբ լսումէին, իրը թէ նոցա նուի-րական սրբարանները պղծվում և ապականվումէին Ֆրանսիացոց ձեռքով. ամենքը միաբերան ասումէին թէ Դիրէկտօրիայի պաշ-տօնատարքը բարբարոսաբար կողոպտումեն տապանակների ոսկին, արծաթը և մեծագին գոհարները. պատմումէին թէ հաւատարմա-պետութեան պատկերամարդանները ջախջախել են սուրբ Ամբրոսիո-սի մատնատուփերը. նոքա սուգ և ողբ էին առնում եկեղեցւոց սրտաբաց քահանաների վերայ, և ստոփիկ դժկամակումէին, որ Սալիսեաուիոս և նորա նման ամբարիշտների հրամանով նոցա սուրբ տաճարների մէջ նորոգվել են այն արբեցութիւնքը և շուայտու-թիւնքը, որ Ազգային ժողովի (Convention) ժամանակ պղծել էին Ֆրանսիայի սրբարանները և Ատուածածնայ Պայր-Դիեզեցու (Notre-Dame de Paris) սեղանը։ Բայց Հօնապարտէն լաւ անգամ չէր, որ նորա զօրքը երբ և իցէ այդպիսի անբարեպաշտ գործ կատարած

լինէր, և այդ պատճառով ամենևին անկարծելի էր նորան, որ նա-
յա ջրբի դէմ այդպիսի դատաստան ներդուԹիւն պատրաստած լի-
նի, որ պիտոյ է նորոդէր Սկիպիոնի աղետալի երեկոն։

Ժողովրդի խռովութիւնը տիրել էր բոլոր Իտալիային և
Հնեաղի շրջակայ դաշտաւներին. ապստամբութեան միջակէտը
ընտրած էր Պավիա քաղաքը, և 1796 Թուականի մայիս ամսի
մէջ Պավիայէ և նորա շրջակայ գեղերէն ստոփիկ շփոԹ ծագեցաւ
ժողովրդի մէջ առհասարակ։

Ապստամբներուն ջրբը ժողված էր Ալեսսանդրիոյ և Պավի-
ոյի։ Ալեսսանդրեցին դուցա հետ վարվեցաւ մեծ խստութեամբ։ Ի-
նոնց գեղը կրակի բաժին եղաւ. իսկ Պավիան ապշաւակի ա-
բատեցվելով, մնաներեցաւ ապստամբութեան և յանիշատակու-
թեան. գրատաւնն (լիբերտի) անգամ չերկրկիցաւ այդ ապականու-
թենէց. միայն համալսարանը, Ապալեացինոս և Վոլտայի տունները ազատ
մնացին այդ թշնամութենէց։ Ելյսկս, Ալեսսանդրեցին իւր վրէժ-
խնդրութեան մէջ անգամ, օրինակ էր ընտրում նախնի դարերի
աշխարհակալները, որ ամբողջ քաղաքներ կրակի ու սրի կերակուր
դարձուցանելով, խնայութիւն այն տուներուը, որոնց յարկի տակ
ծնել էին մեծամուն բանաստեղծներ և հոյակապ փիլիսոփաներ։

Ելյս վտքրկի արշաւանքը ի սպառ խեղդեց ժողովրդի մէջ խռո-
վարարութեան հոգին, և Ալեսսանդրեցին պատեհ միջոց համարելով
այդ ժամանակաւոր խաղաղութիւնը, տուեց Իտալիոյն մի նո-
րաձև կառավարութիւն, որ կոչվեցաւ «Հայսկոյս Ելպերի Հան-
րապետութիւն»։ Ելյս վտանգաւոր վտքը բացեց Նապօլէօնի
աչքերը, և նա պարզ հասկացաւ որ ժողովուրդը պրպան և տկար
ու տակաւին լինէր քան Թէ Թշնամին, և վերայ այդը տեսնայ-
նի, մեծամեծ վնասներ կարող էր հասուցանել նորան, եԹէ Թշնա-
մին ձեռնամուխ է լինում նորա պաշտած օրէնքը ոտնակոխ առնել
և կամ ազգային հպատակութիւնը խռովարկեցնել։

Յետոյ Նապօլէօնը ոտք կոխեց Իտալիոյ հին հանրապետա-
կան հոգի վերայ. այն տեղի կառավարութիւնը չհամարձակ-
վեցաւ նորան յայտնի ընդդիմանութիւն առնել. Թէ այս, և Թէ այն
կողմերից քանի մի բարեկամական նշաններ իրեանց ցոյց տալով, շա-
տացան և բաժանվեցան։ Բրեսչիայից վերադարձին զրբը դնաց
դէպ ի Մինչիս, և մի նշանաւոր յաղթութիւն կատարելով, հա-
սաւ Ռոմգատաս։ Ռոմիլիս զրբագլուխը ամեն տեղ յաղթված, ամեն

տեղից հալածված, Թողից Երէսչեան և իւր զօրքը գումարեց Տիւրօրումը: Կօնտպատէն իւր յաջողակ կացութենից օգուտ քաղելով, իւր բոլոր պատերազմական զօրծողութիւնքը մի տեղ ժողովից Ադիլի մօտ: Յետոյ մտադիր էր յառաջ տանել Մանտուայի պաշարումը: Ադդ քաղաքը, ինչպէս յայտնի է, պատած զոլով ծովակով և անառնալի ձահճով, ամեն կողմից աղատ է կացութեանտեղ թշնամու յարձակմունքից. Կօլլէօն այն տեղ ամրացած էր իւր 13,000 պատերազմողներով, որ միացել էին նորա բազմաթիւ զօրքից. Թող այդ բանը, նա ունէր իւր ձեռքում 400 թնդանօթ. բայց արդէն Վուրմսեր մօտեցաը և Մելաս զօրապետը երկու զօրաբաժինքի գլուխ անցած, որոնց թիւը մինչև 100,000 էր հասանում, մտել էին Տիրօլ, քանի մի օրում կարողացել էին Ցիրանի սարոց ձեռքից յետ խլել Երէսչեան, և Մասսենայի զօրքին յաղթել և հալածել: Այս թեթև յաղթութեամբ հպարտացած, շտապում էին նորա Մանտուային օգնութիւն հասանել: Վուրմսերի համբաւը արդէն տարածվել էր բոլոր Իտալիայի մէջ. Իտալացիք խանդավով նորա մօտենալը, արդէն կարծում էին իւրեանց անձը ազատված Ֆրանսիական լծից: Վենետկի հասարակապետութիւնը արդէն աւելորդ էր համարում, ինչպէս յառաջ, իւր չարամիտ յօժարութիւնը թագուցանել դաւաճանութեան դիմակի տակ: Նէապօլսի արքունիքը, որ իւր անձը երջանիկ էր համարում, նախատականի վճռագործար ձեռք բերած լինելով, այժմ մոռացաւ իւր խոստմունքը և զօրքը դէպ ի Հիւսիս խաղացուց: Հռոմի մէջ Ֆրանսիական պաշտօնակալների պատիւը անարգված էր. ամեն տեղ սպառնալիքով կրկնում էին հնուց միացած պատմական առակը թէ Դոլչան Փրանչեսցոց գերեզմանն է:

Այս չարագուշակ լուրերը Ցիրանիս հասած, Դիրեքտօրիան սաստիկ պատուէր ուղարկից Նապօլէօնին, որ նա իւր բոլոր ոյժը և ճիզը գործ դնէ, և Պապի աշխարհական (մարմնաւոր) իշխանութիւնը ոչնչացնէ: Ի ծնէ կորսիկացի Նապօլէօնը հասարակաթեական խառնութիւնների մէջ անարատ պահպանել էր սրտում իւր մօր բարեպաշտ խրատները և այն կրօնական տպաւորութիւնքը, որով վառված էին նորա հայրենակից լեռնականքը. Թէպէտ նա իւր հոդու խորքում յարգում էր Պապին, ինչպէս գլուխ հռոմէական եկեղեցու, բայց և այնպէս նորա սրտում միտքը քաջ գիտէր Պետրոսի փոխանորդի և աշխարհական թագակալի մէջ խոիր

առնել. և այդ էր պատճառը, որ նա առանց մեծամեծ զօրաց հրաման տուեց Օժերօ զօրապետին ապստամբել Թոռին պատկանած տեղեաց վերայ, և զօրապետը անմիջապէս սիրեց Ռօբէնին, Ուլրիխին և Ֆելդրաբային: Ոչ Ֆրանսիացոց անունը Հռոմի մէջ սաստիկ ահ ձգեց, այնպէս որ Պապը առանց մի խօսք ասելու, իւր Թշնամիների հետ բանակցութիւն սրեց և խաղաղութեան դաշինք դրեց: Մեծ դժուարութեամբ ստացաւ Պապը մի նախատական վճռագրութիւն. նա պարտական էր Ֆրանսիացոց քան և մի միլիօն Ֆրանկ հարկ վճարել, հիւսիսային գաւառները նոցա ձեռք յանձնել և Վատիկանի հսկողութիւն զարդերից մեռ հանել Ֆրանսիայի Թագաւորի համար:

Ընտրիացիք ամենայն տեսակ արդելքների յաղթելով արագագաթ յառաջ էին խաղում, հետ չնետ տիրելով զանազան նշանաւոր բերդերի և ամրացուած տեղերի, որդին սպառնում էին Վենետին և փակել էին Ռօնապարտէի յետադարձը դէպ ի Այլանդ քաղաք: Ֆրանսիացիք մեծ վտանգի մէջ էին. ոչ ապաստանարան ունէին և ոչ հնար անվնաս յետ դառնալու: Ընդ առաջին անդամն էր, որ Ռօնապարտէն իւր զօրապետները ժողովելով, նոցա հետ խորհուրդ արեց առաջիկայ վտանգի մասին: Ընդերը պնդում էին, որ պիտոյ էր յետ դառնալ. Օժերօն այն կողը եռանդով լցուած, որ ոչ վտանգից երկնչել գիտէ և ոչ փոքրոգութեամբ յետ փախչել, պնդում էր որ պիտոյ է հանդէպ գնալ Թշնամուն: Ռօնապարտէն իւր կարծիքը ոչըն չյայտնած, վերջացուց այդ պատերազմական առեանը. բայց նորա կարգադրութենից երևում էր, որ միտք ունէր պատերազմ մղելու: Աստիպողական հարկից բռնադատուած, դադարեցրեց Պադուայի պաշարումը, թենանօթներ զէպ զօրքի հանդիպելքանքը Թողեց հրազարակի մէջ, թնդանօթների սայլակները հրամայեց պրել, իսկ վառօդը ջուրը ձգել: Ընտ գործը լցուցած, դէպ ի յետ գնացին Վիլաֆանովիչ զօրապետի հանդէպ, որ առաջնորդելով Թշնամի զօրքին, Գարդա ծովակի ափունքը բանակուած էր և կամենում էր Ֆրանսիացոց ճանապարհը կտրել, դէպ ի Մինան քաղաքը հասանելու: Մի քանի յաջողակ պատերազմ նոր կատարելով Ֆրանսիացիք, գրաւեցին Վօնատօ. միւս օր, այսինքն Յունիսի 14 ին, Օժերօն Թշնամիների ձեռքից յետ խլեց Ռիվոչհան և հալածեց Ընտրիացիքը, որ նոցանից մեծ վնաս կրելով, յետ քաշուեցան: Ռօնապարտէն արհամարհեց այն վտան-

պը, որ սպառնում էր նորան Վլադիսլավիչը, և իւր բոլոր ուշադրութիւնը դարձնում Վ. ուրմների իշխանութեան նկատմամբ զօրքի վերայ:

Ժամանակը սոխակողական էր: Ընդհն Վ. ուրմներ զօրապետը Ադիջ և Մինչիօ գետերն անցած, յամրմանակով մտել էր Պադուա քաղաք: Ռօնապարտեն Վիւօ զօրապետին ուղարկից պետի Յօզօ, որ այն տեղ Վլադիսլավիչի զօրքին դադար չտար. նոյն միջոցին Օժերօն խորհուրդ պետի Պասսիլհանէ, Մասսենան պետի Լօնատօ, որին թշնամիքը նորից տիրել էին: Մի արիւնահեղ կռուից յետոյ Լօնատօն ընկաւ Ցրանսիացոց ձեռքը. այս յաղթութիւնը նախապատրաստեց Պասսիլհանէի յաղթութիւնը, ուր Օժերօի սերտագործութիւնը հրադործեց Նապօլէօնի դիտաւորութիւնը, այսինքն Վ. ենօային առումը և բոլոր Իտալիայի գրաւելը: Վ. ուրմսերը և Վլադիսլավիչը հետ ձգելէ տեղի տալով Ցրանսիացիների զօրքի քաջաքաջ յառաջադիմութեանը, վերջապէս ի սպառ յաղթվեցան և դեպ ի վախուստ դարձան: Ասյս հռչակաւոր արշաւանքը հասաւ թէ վեց օրի մէջ կատարվեցաւ: Ասյս կարճառև միջոցում 50,000 Ասորիացիք ցիր ու ցան կամ ջարդ ու կոտոր եղան: Մի միայն Վ. ուրմները կորցրեց քան հազար հոգի, որոնցից ութ հազարը սպանված կամ մերձ ի մահ խոցված էին, իսկ մնացածը գերի էին ընկած Ցրանսիացոց ձեռք. ինքը իւր զօրքի խղճալի մնացորդի հետ փախել ու պատսպարվել էր ամրերի մէջ: Վլադիսլավիչը մեծ դժուարութիւններ կրելով, իւր զօրքը անցուց Պադուա քաղի մեւս կողմը: Ասյսպէս, Ցրանսիացիք չետ ստացան իւրեանց բոլոր կորուսած երկիրները ու բերդերը. իսկ Ասորիացիք ահ ու դողով վախչումէին նորա առաջեւից:

Ահա այս պըրնթաց արշաւանքի ժամանակն էր, երբ Ռօնապարտէի անձը մի մեծ վտանգի ենթարկվեցաւ, որից ազատից նորան իւր քաջասրտութիւնը և մտքի հնարիմաստութիւնը: Երբ որ մտաւ նա Լօնատօ, իւր իշխանութեան նկատմամբ հաստիք հոգի ունենալով, յանկարծ չորս հազար Ասորիացիք ամեն կողմից պատեցին նորան: Թշնամիքը պատրաստուր ուղարկեցին, պահանջելով, որ նա և նորա զօրքը անձնատուր լինէին: Խոհեմ հրամայեց Ռօնապարտէն, որ նորա տասիճանատուրքը, ինչքան որ կային, ձիաւորվէին. այս կատարած, հրամայեց, որ պատգամաւորը ներկայացնեն իւրեան և նորա աչքի կապանքը բանան: Պատգա-

մնալորը տեսանելով այդքան բազմաթիւ պաշտօնակալներ, սասիկ զարմացաւ: Իսկ Ռօնապարտին գալաւ դէպ ի նա և ասոյ բարձրաձայն. «Ծշուառականներ, մի՞ թէ չգիտէք, որ դուք կանգնած էք սպարապետի և նորա բոլոր զօրքի առաջև: Գնա՛, ասա քեզ ուղարկողներին, որ ես նոցա հինգ լուսէ ժամանակ եմ շնորհում: Եթէ այդ միջոցում անձնատուր լինիք — կապրիք, ապա թէ ոչ, այն Թշնամանքի համար, որ ինձ հասուցիք այդպիսի նախատական առաջարկութիւն առնելով, ամենեցուն սրի բերան կը տամ:» Եւ իսկոյն հրամայեց Թնդանօթների բերանները Ասպրեացւոց վերայ դարձուցանել, որ անյապաղ սկսանեն ռմբակոծել նորանց: Չարհուրած պատգամաւորը շտապով դնաց և իւր տեսածն ու լսածը պատմեց իւր զօրապետին, և դորա հետևանքն այն եղաւ, որ ջրոս հազար սպառազինեալ Թշնամիք իւրեանց կինքը գրկելին մի բուռն Ֆրանսիացւոց ոտքի տակ: Եթէ այս խորհրդակ հնարքը չյաջողվէր և Ռօնապարտին իւր դնդի հետ միասին պիտի լնկնէր, անկասկածելի է, որ արշաւանքը մի ամենևին այլ հետևանք և վախճան կը ստանար, և գուցէ այս հրաշալի տղամարդի կեանքը պիտոյ է զոհ լինէր մի վտրիկ և անօգուտ դիմադարձութեան և մի անհշան կռուի:

Միևչ այս միևչ այն, վ՚ուրմները Թէև դէպ ի Տիրօլասան հալածմամբ, բայց և այնպէս բաւական ոյժ ունէր Թէ պաշտպանելու իւր անձը և Թէ քաջ դիմադարձութիւն առնելու: Միևչ դեռ Ֆրանսիական զօրքը, իւր կատարած յաղթութիւններից ակաբացած, այլև հալ ու մնաց եղած այն հիւանդութիւններից, որ սասկել էին Մանտուայի ձահճներում, աշխատութիւն լսուցանել իւրեանց պահապարը, վ՚ուրմները լուսի նպատ և Թևին սասցած, մտադիր էր մտանել Ադիջին: Ռօնապարտին ժամանակ չէնելով, նոյնհետայն մի տրիկ զօրապաժին Թողնելով վ՚երօնայում, իւր առաջնորդութեան տակ քսան և ութ հազար հոգի առած, երեք զանազան ճանապարհներով ուղղ դէպ ի Տիրոլ վազեց:

Ֆրանսիական զօրքը գնում էր մի նեղ և խոր հովիտի միջով, որ օձապտոյտ շրջելով ձգվում էր Ադիջ գետի և գահավէժ սարերի մէջ: Սեպտեմբերի 4ին Ֆրանսիացիք բուռն յարձակմամբ տիրացին Սան-Մարկո նեղուցին և Մօրտ պատնիշապատ բանակին, որ օրին վ՚ինսօր զօրապետը իւր անվհատ քաջասրտու-

թիւնը բազում ապացոյցներով հաստատուեց. առաջնորդելով երկու հազար հոգու, խլեց Թշնամու ձեռքից նեղուցը և ապահովեց Ոսվեեդոյ քաղաքը: Միւս օրին Տրիւնտը, որ Տիրոլի մայրաքաղաքն է, Ոսնապարտի իշխանութեան տակն էր: Հետևեալ օրին Ֆրանսիացիք միաձայն վերայ դրաւեցին Պրիմոլանու պատնէշապատ բանակը և Կոլլօ բերդը. Թշնամին յաղթված Բրունեթի և Ռասանի մօտ, մինչև ամրոցաքաղաքը հալածվեցաւ. այս յաջողակ յաղթութիւնները Ֆրանսիացւոց ձեռք ձգեցին Պադուան և Վիչենցան: Սեպտեմբերի 10ին Ֆրանսիացիք Ոսնքօի մօտ անցան Ադիժի վերայով: Միւս օր Մասենայի զօրքի առաջապահքը Ձէրէյայի մօտ զարկվելով Վուրմսերի բազմամբոխ զօրքի հետ, մասամբ կոտորած սաացաւ. այս կորուստը լիովին փոխարինվեցաւ, երբ որ Օժերօն Վենետոյի մօտ հանդիպելով Թշնամիներին, յաղթեց և հաղար ու վից հարիւր հոգի գերեց: Սեպտեմբերի 19ին Ոսնապարտն հանդիպելով Վուրմսերին, բրդդեց նորա զօրքը և սաիպեց փախչել և Մանտուա պարսպի քառակուսի ամրանալ:

Եյսպէս, երկու զօրքը որ Աւստրիան ուղարկել էր Մանտուան ազատելու, բնաջինջ եղան. բայց Աւստրիայի խորհրդապահը, որ քաջ ճանաչումէր այդ բերդի ծանրակշիռ կարևորութիւնը, առանց վհատելու շտապեց չորրորդն ևս ուղարկել (մեզ յայտնի է որ երրորդ զօրքը Վօլլեա և Ռօլեէօի առաջնորդութեան տակ կոչնանվել էր Ֆրանսիացոյց ձեռքով) Ռոալիա: Եյդ զօրքը, 40,000 զօրականներից բազկացած, Պաւիպոմիչի և Ելվինչեա իշխանութեան տակ էր դանվում: Ոսնապարտն իւր սովորական պատերազմային հմտութեան կանոններին հաւատարիմ մնալով, մտադիր էր նախ և յառաջ Ելվինչեան ջարդել և ապա Պաւիպոմիչին ոտնակոխ առնել. բայց զանազան դէպքեր արգիլք եղան նորան այդ առաջարկութիւնը իրագործելու. վասն զի բազուկը պատրաստել էր նորան մի փառաւոր գործ, որ պիտոյ էր նորան թանգ գնով ստանալ. ամբողջ երեք օր ու գիշեր անվասատակելի կռուելով, նորանոր փառքով պսակեցին Ֆրանսիացիք իւրեանց զէնքը:

Ֆրանսիական զօրքը հասել էր վերջին յոգնահատութեան, մի կողմից Թշնամական զօրքի բազմութեամբ և նորա զօրագլուխների ճարտար վարչութեամբ և միւս կողմից յամառ կռիւներով, որ գրէթէ օր ընդ մէջ պատահումէին նոցա հետ, այլև ստէպ ստէպ տեղափոխվելով և հազար ու մի զանազան կարօտութիւնք կրելով,

այնպէս որ նոցա բնական քաջութիւնը շատ անգամ կորչումէր ամենևին անպտուղ։ Օրերը սկսել էր արդէն տրտնջել իւրեանց զօրապետների վերայ, և Ռօնապարտէն բռնադատված էր այսպիսի բանդագութեամբ նամակ գրել Դիրեկտօրիային. «Մեր բոլոր «սուագ սատիճանաւորքը, մեր բոլոր ընտիր ընտիր զօրավարները «սատրիկ վերքով պատած, այլևս կարողութիւն չունին պատերազ«մելու. մեր հզօր և մարդաշատ իտալական բանակը այժմ անօս«պացել և հալ ու մաշ է դարձել։ Միլլեսիմոյի, Լօդիու, Կաս«տելիոնի և Բասսանոյի հերոսները կամ մեռել են դաշտի մէջ, հայ«րենիքի պատիւը պաշտպանելով, կամ մերձ ի մահ դրած են ան«կեանոցներում։ Մեր զօրքը, բայ ի փառքից ու պարծանքից, «ամեն բանից զուրկ է։ Յուբէրտը, Լաննը, Լաստրը, Վիկտո«րը, Մուրատը, Շառլօն, Դիւբիւիսոնը, Ոսանգօնը, Պիժօնը, «Մէհառը, Շաբռանը — կարևվէր խոցոտված են։ Մեր Խոտա«լիայի խորքերում անօգնական թողած ենք. իսկ որոնք ողջանպատ«են ճնացել, անվէհեր սրտով սպասումեն մահուն։ Գուցէ քա«ջասիրտ Օժերօի և անվեհիւղ Մասսենայի օրհասն էս հետի չէ։ «Ես մնածութիւնը սոխակում ինձ զգաստ լինել. այսուհետև «չունիմ ես համարձակութիւն հանդիպ վաղել մահուն, մի գուցէ «իմ մեռանելովս զօրքը վհատի, այն զօրքը, որ ես սիրումեմ սրբո«տից։» Բայց յետագայ դէպքը մեզ կ՚ապացուցանէ, որ նա, ընդ«դէմ իւր խոստմանը անվեհեր սրտով վազեց մահու առաջև, ար«համարհելով նորա սպառնալիքը։

Նոյն իսկ օրի գիշերին, երբ գրել էր այս նամակը, Ռօնա«պարտէն հրամայեց զօրքին վերստին անցանել Ադիջ գետը Վ՚երօնայի կամրջի վերայով և գնալ դէպ ի Մայլանդ։ Ես մի կեղծ յետադարձ էր։ Վ՚երօնայից փոքր ինչ հեռացած, Ֆրան«սիացիք դարձան դէպ ի ձախ կողմը և չորս մղոն տարածութիւն անց կացան, հետևելով Ադիջի ընթացքին, և Ռօնքօնի մօտ նորից անցան այդ գետը։ Զօրքը, թուով 13,000, գտանվումէր Ըրքօլ գեղի և Ադիջի մէջ մի լայնածաւալ ճախճախուտ վայրում, ուր միայն մի նմայաստակ (շօսէ) ճանապարհ կար. այդ նմայաստակ ճա«նապարհին տիրելով նորա արդէն, երկիւղ չունէին թշնամու յար«ձակմանից, ոչ առջ և ոչ ձախ կողմից, և Ըրքինչեռու բազմախուռն զօրքը մի ճակատից միայն կարող էր յարձակվիլ նոցա վերայ։ Ուշ հասկացաւ Ըրքինչեռն, որ չէր պիտոյ անխնամ թողուլ այդ ճահ-

ձայնն ձանապարհը, որ նորա կարծելով անպիտան էր Ֆրանսիա-
կան զօրքի համար, բայց արդէն հնար չկար միանգամ ապաց սխալը
ուղղելու.

Ընթօլէ գիտը հիմնած է մի ձահճուտ, որի խորութեանը և
ընդարձակութեանը անտեղեակ էին Ֆրանսիացիք: Ամբոխ շրջակայ
գաշտերը ակօսած են վտակներով և որոնցից ամենամեծը Ընթօնն
է. այդ վտակի վերայ մի վայրապշէն կամուրջ կայ, որի միւս կող-
մում տեղաւորված էին Աւստրիացիք, իւրեանց բանակոցը տաք
բարձրացած հողակոյտ պատնէշներով և տակալի մարտկոցներով:
Ֆրանսիական հեռւակ զօրքը փորձ փորձեց կամուրջը անցանելու.
բայց նորա քաջութիւնը ինաց ապարդիւն. մի ամրողջ օր ժամա-
վաճառ եղան այդ անպտուղ փորձերով, և թշնամիքը ամեն անգամ
մեծամեծ կորուստներ պատճառելով, դէպ ի յետ մղեցին նորա
իւրաքանչիւր քայլափոխը. երբեմն Աստուծոյ էր առաջնորդում
զօրքին, երբեմն Ղանոնը և մերթ Ռիվէլտրը, և իւրեանց անձնա-
նուէրը քաջութեամբ աշխատութեանն քաջալերել պատերազմողքը.
բայց նորա աշխատութիւնը, ըստ երևութեին, մի անպատշաճ ձեռ-
նարկութիւն էր, մարդկային կարողութենից վեր. նահանապետ Օ-
ժերօն ի զուր առաջ դրօշը և քաջալերական խօսքեր ասելով յոր-
դորում էր զօրքը հետևել իւրեան. թշնամու անապատելի կրակը
թաւալգլոր արեց Ֆրանսիացոց դունդերը և ով որ կենդանի մնաց,
ահու դողով շտապում էին զառնալ: Ղէրմանիս Ռօնապարտին
ինքն եևս զօրքի առաջև, առաջ դրօշը. «Օ՛ֆիցէրնե՛ր, ասաց նա,
մի՞թէ դուք չէիք Ղօդիու մեռ յաղթողքը. եկեցէք ուրեմն իմ
հետևից»: Ես ասելով, թաւալ դնդակների և ռումբերի կարկտի
մէջ: Ղանոնը որ արդէն խոցոտած էր, բայց և այնպէս կամեցաւ
իւր ապարանքի օրինակին հետևել, վաղեց նորա քառակից, բայց
երեք նոր վէրք առանալով, Ռօնապարտեի աչքի առաջև դէպ ի գե-
տին դլորվեցաւ: Ակօսը (Ռօնապարտեի ապակիցը) տեսանելով
անխոնջելի վտանգը, որ պիտոյ է կարձէր ապարանքի թանգա-
գին կեանքը, շտապեց իւր մարմնով պատսպարել նորա գլուխը թըշ-
նամու մահաբեր գնդակից, և ինքը շնչասպառ դէպ ի գետին թա-
ւալվեցաւ: Ռօնապարտեն այս աղնիւ ապտակին անձնուրաց քա-
ջութեամբ ակնարկ մահից ազատված, արդէն հասել էր կամրջի
միւս ծայրին, բայց թշնամիքը վերստին և առաւել առատիկ կրակ
թափեցին իւրեանց թնդանօթներից և արձակեցին ռումբերը. Ռօ-

նապարտէն իւր ձիով միասին ձահճի մէջ ղլորվեցաւ։ Երկրորդ անգամ նորա կեանքը մերձ ի մահ վտանգի մէջ էր. բայց Ֆրանսիական պատերազմողքը իւրեանց սպառապետը տեսանելով նեղի մէջ. «Փրկենք մեր սիրական զօրապետը» ասացին, և արհամարհելով ակնյայտնի մահը և թշնամոյ սպառնալիքը, վազեցին օգնելու նորան և ազատեցին։ Բայց Ֆրանսիացոց այդքան քաջութիւնը անպտուղ կորաւ. Ռօնապարտէն տեսանելով իւր ձեռնարկութեան անյաջողութիւնը, ի գուր մեղադրութեր իւր զօրականներին, ասելով «Ֆրանսիացիք չէն, որոնց ես առաջնորդեմ։»

Գիշերը վերայ հասաւ. Նապօլէօնը հրաժարվելով այդ տեղից Ըլպօնի վերայ, որոշեց անցանել նորա գետաբերանը։ Երկու օր յետոյ, Ֆրանսիական զօրքը շտապով մի կամուրջ շինեց, անցաւ Ըլպօն վտակը և հալածեց թշնամին դէպ ի Ըրբօլէ։ Ըլվենցին և երկու զօրաբաժինք, փախչելով Ֆրանսիացոց զէնքից, խրվեցան ձահճի մէջ և մեծ կորուստ կրեցին։ Միւս օրին պատերազմը նոր կատաղմամբ սկսաւ. յաղթութիւնը երկու կողմից էս անորոշ էր. բայց մի աստիճանաւոր, հետը քանի այրուձի և տասներկու վոզայ առած, գնաց թշնամիների քամակը և սկսաւ յետադարձ հնչեցնել. վողի ձայնը լսելով Աստրիացիք, կարծեցին թէ թըշնամին նոցա քամակից է կամենում յարձակվել նոցա վերայ, վհատեցան ամենևին, սկսան յետ ու յետ քաշվիլ, շփոթվիլ, իրեարով խառնվիլ և վերջապէս փողոսվին դէպ ի փախուստ դառնալ։ Այսպէս, մի աննշան դիպուած վճռեց Աստրիացւոց ամբողջ զօրքի ճակատագիրը։

Երեք օր անընդհատ պատերազմելուց յետոյ, Ֆրանսիական զօրքը յաղթանակով մտաւ Վ_էրօնա։ Դաւիդօվիչը, երկու դունդ իւր զօրքից կորուսանելով, գնաց և սարերի մէջ ապահովվեցաւ։ Այսպէս, Ռօնապարտէի իշխանութեան տակ գտանված տասներեք հազարաւոր զօրքը ընդդիմացաւ քառասուն հազար հոգի Աւստրիացոց և վերջապէս ստիպեց նորանց յանձն առնուլ մի նախատական պարտութիւն։ Բայց այս պանծալի յաղթութիւնը, Ֆրանսիական զօրքի շարքից պակասեցուցին եօթն հազար հոգի, թէ սպանված, թէ կարեվէր խոցոտած և թէ թշնամու ձեռքը գերի ընկած։ Բայց և անտակէլ ու անպատմելի էր Աստրիացւոց զարմանքը, երբ որ նոցա անվերկրայելի յաղթութիւնը մի ծիծաղելի պարտութիւն դարձաւ։

Պատերազմի գործը վերջացաւ. Կոնտարտոսէն ամեն տեղ յաղթող հանդիսացած, տարաւ իւր զօրքը դէպ ի Ֆէրանտոյ. բայց այս հանդիսաը երկար չտեւեց: Մինչ այս մինչ այն, յաղթութեան համբաւը հասաւ Փարիզ և ժողովրդին ընդհանուր ցնծութիւն պատճառեց, և Դերբեքաօրիան վճռեց, որ այն երկու դրօշները, որ Ալքօլե կամուրջը անցանելով, ձեռք էին բերել Օժելօն և Կօնտարտոսէն, ազգի կողմից ի նշան շնորհակալութեան, նոցա պարգև լինին: Երանելի կը լինէր Ֆրանսիան, եթէ նորա որդիների պատասխանատուութիւնը հերիքանար այդ համեստ վարձովը:

Այդ միջոցին Կոնտարտոսէն ժամանակաւոր չէր լինում. նա անմիջապէս սկսաւ իւր ձեռք բերած յաղթութիւնները ամրացնել, իւր դաշնակիցներին հետ ապահով պայմաններ կապել, այլև հնարս սիսայէն Խալիայէն տուեց մի կերպ քաղաքական կեանք: Երդէն նա երկու նոր տէրութիւն կազմել էր Պօ գետի տահմանում, որոնցից մինի անունն էր Յայսկոյս-Պատանեան և միւսին Յայնկոյս-Պատանեան հասարակապետութիւն: Ալպեան սարերը մաքրից այն սրիկաների և աւազակների խումբերից, որ այս աղմկալից միջոցին յառաջացել էին և մեծամեծ վնասներ էին պատճառում ճըլանսիական զօրքին: Նէապօլսի թագաւորի հետ հաշտութիւան դաշինք դրից, և զօրք ուղարկելով դէպ ի Ալեօնս (Ալէքսանդրիա), Ենդղլեացոց ձեռքից յետ խլեց Աղոսիկա կղզին: Ալ կրկին, կարողացաւծի չասի, լցուց զօրքի պակասորդը, և Խալիական նորաշէն հասարակապետութիւնից սկսաւ զօրք դումարել և միաւորել իւր զօրքի հետ:

Ասարխացիք մի քանի յաղթութիւններ կատարելով Ռէյն գետի մօտ, ոգի առան և քաջալերվեցան, և սկսան պատրաստել մի ուժգին արշաւանք: Ալ լիենոայի խորհրդարանը, կարող օգնական դտնդեր ուղարկից Ալվինայի զօրապետին. Գերմանացոց աղնուականների որդիքը ամեն կողմից դալես, խանդավառեին այս ճնշուած իշխանութեան տակ և անհամբեր սրտով սպասում էին օր մի յատուկ իւրեանց ոյժը ցուցնելու Ֆրանսիացոց հետ, և ազնիւ հպարտութեամբ իւրեանց առաջնից տանում էին այն դրօշը, որ կայսերուհին նոցա համար իւր մատներով ասղնեղործել էր: Նմանապէս և Պասլը իւր կողմից հինգ վինչև վեց հազար զրահապատ ուղարկել էր նոցա օգնութիւն: Ծչնամին այսպիսի ահեղ զօրքով, սպառազինութեամբ, ամեն տեսակ պատերազմական հան-

դերձանքով ձոխ, պրեթէ կրկնապատիկ գերազանց էր Ֆրանսիացիներից: Աւստրիացոց բոլոր ուշը և միտքը դարձուցած էր դէպ ի Մանտուայի ազատութիւնը:

Նիվոզ ամսու 23ին Աւստրիացոց զօրքը վեց ճիւղ բաժանված, արագաքայլ յառաջ էր խաղում: Օ. օրքի ձախ թեւը հասատաված էր Մանտուայի, աջը — Վ. երծնայի վերայ· իսկ կենտրոնը, Ալվինցիու առաջնորդութեան տակ, Ադիջի հովիտի վերայից գնալով, պիտոյ է դուրս գար սարերից և մտանէր Ռիվոլիու դաշտավայրը: Առաջին անգամ Յուբէրտը ստիպվեցաւ իւր ամրացած տեղից դուրս գալ և յետ քարշվիլ· բայց Ռօնապարտէն հրամայեց նորան յառաջ խաղալ դէպ ի Ռիվոլի, և ինքը շտապեց նորան օգնութիւն հասանել: Ռիվոլիու մօտ հասած, Ֆրանսիացոց պատերազմող զօրքի թիւը հազիւ հասանումէր մինչև 20,000 հոգի, մինչ Աւստրիացիք նոցանից կրկնապատիկ բազմաթիւ էին. բայց, տարաբաղդաբար, նոցա ձիաւորքը և թնդանօթաձիգքը տակաւին չէին միաւորվել դէնուաղ զօրքի հետ: Ռօնապարտէն այդ միջոցը պատեհ համարեց յարձակման համար. միւս օրին միայն, նոր լոյսը ծագած, հրամայեց սկսանել կռիւը որ, ինչպէս կը տեսանենք, վերջացաւ դէպ ի Ֆրանսիացւոց օգուտը:

Ալվինցին, որ սաստիկ վատահ էր իւր բազմաթիւ զօրքի անպարտելի քաջութեանը և իւր խոհեմ անօրինութեանը, շուտով ստիպվեցաւ կրունկը դարձուցանել և դէպ ի Պիւաէ փախչել. իսկ նորա թնդանօթաձիգ հանդերձանքը այն ժամանակ հասան, երբ որ Աւստրիացիք արդէն փախել, հեռացել էին, և Ֆրանսիացիք առանց դժուարութեան տիրեցին նոցա: Այս կռիւը կէս օր աւելց. Ռօնապարտէի տակ շատ ձիեր սպանվեցան կռուի մէջ, բայց ինքը ազատ մնաց վնասից: Ռօնապարտէն չհետիքացաւ այս պանծալի յաղթութեամբս, այլ հրամայեց Յուբէրտ զօրապետին, որ մինչ ի սպառ հալածէ և ցիր ու ցան առնէ Ալվինցիու զօրքը, և ինքը շտապով խաղայ Պռօվէրա անուանով զօրապետի հանդէպ, որ աջակողմեայ գնումէր Մանտուային օգնութիւն հասուցանելու: Պռօվէրան հանդիպելով Օժերոյին, իւր զօրքի մի մասը կորցնից կռուի մէջ, իսկ մնացորդը միաւորելով Ռուսմանովի զօրքի հետ, յարձակվեցաւ Ֆրանսիացոց Ֆաւորիտա զօրապետի վերայ: Ո՛չ մի տեղ Ռուսմանովի զօրքը յաջողութիւն չունեցաւ, և միանգամայն ոտապրացած, փակվեցաւ Մանտուայի մէջ: Իսկ Պռօվէրան, միայնակ

ճնայած, ղէնք ու զօրքով անձնատուր եղաւ Ֆրանսիացոց։ Այս-պէս, ուրեմն մէջ, Աւստրիացիք երկու բազմամբոխ զօրք կորցրե-ցին, երկու կռիւներէն պատուհասն կրեցին, 35,000 զօրքից (որոն-ցից 25,000 հ. գերի ընկաւ), 50 թնդանօթից զրկվեցան, և նոյն-քան նոցանից խլած դրօշներ Օժերօն, որպէս յաղթանակ, տա-րաւ Փարիզ և ներկայացրեց Նէրվիկտօրիային. իսկ քանի մի օր անցած, Վ՚ուրմսերը Ֆրանսիացոց ձեռք տուեց Մանտուա բեր-դաքաղաքը։ Այս յաղթութիւնների հետևանքը այն եղաւ, որ անվիջապէս հետ գնետ նուաճվեցան Յոմանիան, Ընքօնայի և Ուբրինի դքսութիւնքը, այլև Պապը բռնադատվեցաւ Տօլենտինու հաշտութեան ծանր դաշինքը ստորագրել։ Բայց, տարաբախտա-բար, պիտոյ է խոստովանել, որ այս յաղթութիւնքը դեպ ի ջարդ դրծ դրեցին Ֆրանսիացիք և նոցա վարչապետութիւնը յաղթված թշնամիների հետ չէր ամենևին անպախարակելի. հասարակապե-տութեան զօրքը անարդար խղճանելով պաշարված, քանի քանի անգամ անիրաւ դործեր կատարեց, և հալածահարեց տկար ժո-ղովուրդը. և Նապլեան հնծեծելով ըսկց այն չարագուշակ բօթը, թէ նոցա հին ազնդութեամբ և ժողովրդի բարեպաշտութեամբ սրբազանած Յօրետեան Աստուածամօր տաճարը կողոպտվել է թշնամիների ամբարիշտ ձեռքով։ Բայց չէ պիտոյ մոռանալ այն դովելի դործը Նապօլէօնի, որ նա բռնադատելով Պապին Տօլեն-տինու ծանր դաշինքը ստորագրել, դոյն միջոցին չմոռացաւ այդ դաշնադրի մէջ մուծանել և այս պայմանը, որ Ֆրանսիացի կղե-րականք, որ քաղաքական յեղափոխութեան ժամանակ կամ յօ-ժարակամ դուրս էին եկած կամ թէ բռնի աքսորված էին իւրեանց հայրենի երկրից, անխնամ և անտէրունչ չմնային, այլ Հռոմի սեմոռնին պատկանած վանքերում դտանէին իւրեանց ամեն հար-կաւոր պէտքը։ Դժբախտաբար չհամարձակվեցաւ մերժել կամ պախարակել այս դործը, որ այն ժամանակներում ներհակ էր նոցա անկրօնական խղճանքին. պատճառ, արդէն Նէլսոնան դարձու-ցել էր Նապօլէօնի վերայ իւր ուշն ու միտքը. և հետևաբար Յո-նապարտէն այս իւր ամենիւ գործով ստիպեց ժողովուրդը քաղցր աչքով նայել իւր վերայ, և այդպէս դրաւեց հասարակայց սէրը և յարգութիւնը։

Նոր յիրաւի, ինչպէն կարելի էր, որ մարդիկ Յոնապարտէի վերայ չնայէին որպէս մի քաջամղեական դատու հերոսի վերայ, երբ

նա իւր ընդ ամենը չիտուն և հինգ հազարաւոր զօրքով չարդեց, խորտակեց Թշնամոյ չորս ահեղ և բազմաթիւ զօրքը, որ քանի քանի անգամ իւր աւերածքը նորոգել էր բազմախտմբ դունդերով: Այս զօրքը, որի չիշատակը յաւիտեան անմոռանալի է մնալու պատմութեան էջքերի մէջ, այս զօրքն, եմ ասում, ինն ամսու մէջ ոչնչացրած սպառնալից ջնջեց երեսուն հազարաւոր Խոսլական և երկու հարիւր հազարաւոր Աւստրիական զօրքը, իննսուն հազար դերի առաւ և երեսուն հազար սպանեց կամ վիրաւորեց պատերազմի դաշտում: վաթսուն արիւնահեղ կռիւներում չաղթող հանդիսացաւ և տասներկու մեծ և կտրական պատերազմ տուեց, որոնց ամեն մինից կախած էր արշաւանքի օրհասը, այլև անցաւ բարձրաբերձ սարեր, նեղ կիրճեր — թշնամու ահեղ մարտակոյնեւրով ծածկած, խորայատակ և ըսչեածաւալ դետեր, որոնց յանդիպակայ եզերքը երբեմն ամրասնդած և պաշտպանած էին բազմաթիւ զօրքով: Այս անթիւ քաջագործութիւնների համբաւը թռնաւալով որոտաց աշխարհի բոլոր տեղերում, և Եւրոպան ակամայ դարձուցանելով իւր աչքը Ռօնապարտեի վերայ, դուշակումէր արդէն այն պանծալի գործերը, որ բաղդը պահել էր իւր սիրականի համար:

Աւստրիացիք իւրեանց խայտառակութիւնը ծածկելու և կրած ձախորդութիւնները փոխարէն տալու, հինգերորդ անգամ զօրաժողով եղան և զօրք ուղարկեցին Ֆրանսիացոց ընդդէմ: Այդ զօրքը յանձնած էր Արքիդուքս Կարոլոսին, որ Գերմանացոց ազնուական զօրավարներից մինն էր և իւր անձը նշանաւոր էր կացուցել Ռէյնի արշաւանքում: Ռօնապարտէն ևս Աստրակապետութեան կողմից տասներկու հազարաւոր օգնական գունդ ստացաւ, որին առաջնորդումէր Ներնադոտթէ զօրապետը: Կարոլոս իշխանը, իւր հրամանի տակ ունենալով Տիրօլտան և յուսալով Վենեակեցոց օգնութեան վերայ, դիմաւորապէս ամրացած էր իւր զօրքով Տալեամենտօի և Ֆրիուլի մէջ. իսկ Ռօնապարտեի զօրքը դրաւած ունէր Աբիցիա գետի ձախակողմեան ափը մինչև նորա գետաբերանը Ադիջի հետ, ևս և Պիաւէ գետի աջակողմեան ափը, Վերոնան սարերից բռնած մինչև Ադրիական ծովը:

Պատերազմական գործը սկսան Ֆրանսիացիք Վ անուոզ ամսու 19 ից դրաւելով Ֆիլտրը և Ելօզոն: 20 ին երկու հակառակ կողմերը կռուեցան Պիաւէ գետի ափին. 22 ին Ֆրանսիացիք երկու

զանազան տեղերից անց կացան վերոյիշեալ գետը և շատ մանուր կռիւներում թշնամին յաղթվեցաւ. 25 ին Աստրիական զօրքը դուքս Պարոլոսի իշխանութեան տակ նորից յաղթվեցաւ և փախաւ դէպ ի Տալեամենտո. երկու օր անցած, այսինքն. 27 ին, Ֆրանսիացիք բուռն յարձակմամբ առան Պալմա-Նօվան, Սան-Դանիէլն, Օզօպօն և Ջեմոնան. 28 ին անցան Լղնեցօն և առան Գրաձիական. 30 ին մի արիւնահեղ կռուից յետոյ առվեցաւ Գօրլիցը: Յերմինալ ամսու 2 ին Ֆրանսիացիք յաղթանակով մտան Թրիեստ, և այսպէս, Աստրիական Ֆրիուլը յաւելացուցին իւրեանց տիրապետած խաղերի վերայ: Երկու օրի մէջ ութ կռիւ տուեցին և ամենուրեք էս յաղթող հանդիսացան. 3 ին նեղս մտան Տիրօլի կիրճը. 8 ին շատ փառաւոր յաղթութիւններ կատարելով, գրաւեցին աստրիական Խորիան, Ֆրիուլը, Կարնիօլը, այլև Տիրօլի և Կարինթիոս մի մասը. իսկ 10 ին Բօնապարտէն իւր դիւանատուր բանակեցաւ Կլագենֆուրտում: Ընդհատ, տասն օր չանցած Ընքի-Դուքսը կորցրեց իւր զօրքի կէս մասը. իսկ Բօնապարտէն լուռնագօտին անցանելով, ոտք կոխեց Աստրիայի տիրութեան նեղքը: Յերմինալ ամսու 12 ին Ֆրանսիական զօրքը յառաջ խաղաց և սիրեց Նեւմարքին, Ֆրէյբուրգին և Կայսերսին. 14 ին Ռաստիդմարքի մօտ յաղթելով Աստրիացոց, գրաւեց Կինդֆելդը, Մուրանը, Նէնդինբուսը և Կէֆֆլինգը. 14 ին սկսաւ հարաւային հալածել Ընքի-Դուքսին, որ Տիրօլը թողած, փախել էր այն ճանապարհով, որ դէպ ի Վենետիկ էր տանում: Հաղիւ երեք օր անցած, Աստրիացիք սաստիկ տապնապի մէջ գտանվելով, լռնապահեան Բօնապարտէի առաջև և զինադադար խնդրեցին, և նա վերհանձնութեամբ ընդունեց նոցա խնդիրը: 28 ին հաշտութեան դաշինք կապվեցան Ֆրանսիացոց և Աստրիացոց մէջ:

Ի վաղուց հետէ Բօնապարտէն անհանգիստ աչքով նայում էր Վենետիկ կառավարութեան վերայ, որի ընթացքը վերաբերութեամբ դէպ ի Ֆրանսիացիք շատ կասկածելի էր: Թէև ակօր և անզօր, ի վերայ այդը ամենայնի Վենետիկը միշտ կարող էր յիւսուն հազարաւոր սպառազինած զօրք ոտքի վերայ կանգնեցնել նորա ընդդէմ և ամենևին արդելաւոր լինել նորա յետադարձին: Նախ և յառաջ Բօնապարտէն կասեցաւ ժողովրդի մէջ հաստատակատարեան ազատասիրա իդէաներ տարածելով, բաժանել նորան կա-

ռամարութենից. բայց նորա ձեռնարկութիւնը այդ մասին ան-
պատրաստ գտանվեցաւ. պատճառ, քաղաքների և գեղերի միմեանց
հաւատարիմ մնալ Իտալական և Վենետկի անկախ ազգային կա-
ռավարութեանը. ամեն տեղ սկան դատաճանութիւններ և ապ-
ստամբութիւններ ծագիլ նորա ընդդէմ, Ֆրանսիական զօրքի ապա-
հովութիւնը մեծ էր վտանգի մէջ ընկնելու, և եթէ մի փոքրիկ
անյաջողութիւն պատահէր նորա որ և իցէ գերմանական հողի վը-
րայ, ապա Ֆրանսիացոց առաջև յարիաեան վակվելու էին այն
ճանապարհքը, որ Լօմբարդիայի և Պիեմոնտի վերայով տանու-
մէին դէպ ի Ֆրանսիա: Մինչ Բօնապարտէն այս դժուար խնդրի
լուծման մէջ էր, յանկարծ մի սարսափելի խռովութիւն ծագեցաւ
Վերոնայում Ֆրանսիացոց ընդդէմ: քառասուն հազար Իտալացի
շինականք, ով ինչով ասես զինաւորված, եկան պատեցին Ֆրան-
սիացոց պահակ զօրքը. քառնելի ամբարշտութիւնք յարաջացան.
խոցոտած հիւանդները անկելանոցներից դուրս հանելով, անխնա-
յաբար կոտորեցին փողոցների և հրապարակների մէջ: Այս բարբա-
րոսական գործը, Ֆրանսիական զինուորների անմեղ արիւնը արագ
և խիստ վրէժ էր պահանջում. այս եղեռնագործութեան արժանի
պատուհասը եղաւ Վենետկի կորուսանելը իւր ազատ ազգային
կառավարութիւնը:

Վենետիկը, ինչպէս յայտնի է, ցամաքահողից ծովով բա-
ժանված, ևս և (այն ժամանակ) իւր սեպհական ծովային և ցա-
մաքային զօրքով պաշտպանված, այն, երկարատև պատերազմ կա-
րող էր մղել թշնամու հետ և նորա պատնէշ պաշարմանը ընդդի-
մանալ, և դիւրութ թէ անվախճելի էր նորա կործանումը, բայց այդ
կործանումը կը լինէր գոնէ պատուով, և քաղաքացիք անաչառ պատ-
մութեան մէջ մի անմահ յիշատակ կը թողնէին. բայց, աւաղ,
նորա վատթարաւիտ և երկչոտ կառավարիչները աւելորդ համա-
րեցին այդ աղնիւ պարտականութիւնը, և դիւրաւ անձնատուր եղան
Ֆրանսիացոց. Փետրուար ամսու 27 ին Բօնապարտէն յանդիման-
կով մտաւ Վենետիկ և սատակապէս հրամայեց նորա, այնուհետև
իւրեանց յոյսը դնել Ֆրանսիական խնամակալութեան վերայ: Այս-
պէս, Վենետկի աշխարհահռչակ ազատապահպանութիւնը տասն
և երեք դար անկախ տևելուց յետոյ, ի սպառ շինջաւ:

Մի ամիս անցած, այսինքն 1797 ին յունիսի 13 թուականին ընկաւ և Գենուայի ազատապահպանութիւնը. [illegible]

ցաւ. քաղաքի խաժամուժ ամբոխը, Ֆրանսիացոց հետ վիրացած, խորտակեց հռչակաւոր Ընդրէաս Դօրիայի արձանը և աւերեալին ոչնչացրեց տէրութեան նախնի կառավարութիւնը. յառաջացաւ մի նորաձև կառավարութիւն, որ Ֆրանսիայից կախումն ունենալով, ստացաւ անունս Լէփուբլիկան Հասպակոզիոնալէն:

Ի սկզբանէ անտի Աստրիացիք անարի դոլով պատերազմի դաշտի մէջ, միշտ յաջողակ են գտանվել բանադնացութեան սպարէզի մէջ. նմանապէս և այս անգամս աւստրիական և Ֆրանսիական դեսպանները Կամպօ-Ֆօրմիացում ժողոված, վեց ամիս անպտուղ վիճռումէին հաշտութեան դաշինքը հաստատելով, և եթէ Խօնապարտէն, տեսանելով նոցա այդպիսի խորամանկութիւնը, ստիպակ ահ տուած չլինէր, հաւանական է, որ այդ բանադնացութիւնքը երբէք վերջ ստանալու չէին. Աստրիայի զարհուրած դոժակալները շտապեցին որպէս և իցէ վախճան տալ գործին, և հոկտեմբերի 17 ին հաշտութեան դաշինքը ստորագրվեցան յետագայ պայմաններով. Աստրիացիք պարտական էին Ռուսաբանտը թողուլ Ֆրանսիային և հրապարակով յայտնել Մայլանդացոց անկախութիւնը: Ջուսիային Վոալեայում կազմվեցաւ հասարակապետութիւն, որից կախումն ունէին Մանտուան, Մօդենայի դքսութիւնը, Վենետիկ երկրի մի մասը և Ջոմայ քահանայապետին պատկանած գաւառներից երկքը. Ֆրանսիան իւր բաժին առաւ միայն Վօրֆիուն (Սորկիւրա կղզին) և Սլբանիայի մի մասը. իսկ Աստրիան որպէս վարձ իւր կրած վնասների և ըրկանքի, ստացաւ Վենետիկը:

Այսպէս Խօնապարտէն Ֆրանսիական հասարակապետութեան համար մի փառաւոր հաշտութիւն կապելուց յետոյ, պյլ ևս աւելորդ համարեց երկար ժամանակ մնալ Գերմանիայի մէջ, ուստի շտապեց վերադառնալ Ֆրանսիա, ուր ամենքը անհամբերութեամբ սպասումէին նորան: Ուր որ երևումէր նա, ամեն տեղ ժողովրդի բազմութիւնը վազումէր նորա հանդէպ և ցնծութեամբ շնորհաւորումէր նորա յաջողակ և քաջառողջ վերադարձը: Ջասպարակապետութեան կուսակիցքը տեսանելով ժողովրդի վեճապանքը դէպ ի Խօնապարտէն, շատ ուրախանումէին. իսկ դորա հակառակ, Գերեկոզիայի անդամները տրտմում և նախանձումէին. նորանց անհանգստացնումէր այն մտածութիւնը, թէ Խօնապարտէն յառաջ կամ յետոյ իւր պատերազմական հանճարը և իւր

ձեռքում գտանված զօրութիւնը կարող էր չարաչար գործ ածել, դարձուցանել ընդդէմ հասարակապետութեան և նորա կուսակիցների. բայց այդ մասին գեռ ևս ոչոք իւր կարծիքը յայտնի չէր ասում, այլ միայն զգուշութեամբ մրմնջում էին միմեանց ականջում։ Նա ունէին իրաւունք. պատճառ, Բօնապարտէն իւր ծաղիկ հասակում արդէն դևմոկրատական գործեր կատարած, կարող էր արդեօք նորա փառասէր հոգին շատանալ մի անպատճառ քաղաքացու անունով. Ընդհանդիսի, Լանկիբալէ, Վեսարի օրինակները իւր աչքի առաջև ունենալով, այլև տեսանելով իւր հայրենիքը, այն բոլոր Նուպտան մի զարտուղի և անբնական ընթացքում, կարող էր, հալցանուանեմ, անընտրող հանդիսական մնալ։ Ա՛յ. ուրեմն նա գնաց այն ճանապարհը, որ դարերով յառաջ պատրաստած էր նորա համար Նախանձոտութեան անտեսանելի ձեռքով. Բօնապարտէն ուրիշ գտտուր չունի, բաց ի այն մարդկից, որոնք երկրորդ Բօնապարտ էին։ Լանճարի գնահատողը հանճարն է։

(Շարունակութիւնը յետոյ)

Մխոյեր Վայելչեան։

ՀԱՏՎԱԾ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ, ԿԱՄ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՒ ԴԱՐԸ.

(Շարունակութիւն.)

Սահակ Պարթեւացու և Մեսրոպ Մաշթոցի արժանաւոր աշակերտներից մինը էր Կորիւն Աբանչելին, ինչպէս երևում է, ազգով վրացի և հալիկոպոս Վրաստանի վիճակում: Սա Գևոնդէսի հետ միասին յօժարակամ գնացել էր Կոստանդնուպոլիս, երբ որ արդէն Յովհէփը և Եղիսէը Աղրիանոսի վերայով յառաջուց ուղարկված էին այն տեղ Մեսրոպ Մաշթոցի և Սահակ Պարթեւացու հոգաբարձութեամբ: Կորիւն աբանչելին թողել է մեզ մի գրուած, սուրբ Մեսրոպի վարքագրութիւնը, որ կարևոր է համարել երախտապէտ աշակերտի մեծարական սիրու յիշատակ դեպի իւր վարդապետը: Ահա գործը յանձն է առել Կորիւնը, ոչ թէ իւր սիրելի վարդապետի գովութեան պարծանքը հանդիսացնելու, որով հետև, ինչպէս ինքը ասում է, աստուածասէր ընտրեալների գովութիւնը Տիրոջնէն է և նորա հրեշտակներից, այլ, որ նորա հայրենասիրական վաստակաւոր կեանքը օրինակ ու կանոն դառնայ յետոյ եկածների համար: Ահա տեղ կարդում ենք մեք երանելի Մեսրոպի վարքը, կենդանացնելով մեր հոգու աւաջև այն հոյակապ մարդու պրաւիչ պատկերը և նորա օրերի մէջ եղած խմացական աշխատասիրութեան հանդէսը Հայաստանի մէջ: Որքան տխուր մղձութեամբ պղտորվում Հայոց պատմադրի հոգին, զգալիս ցնորվով իւր հայեացքը նեղկայ սերունդի կենդանագրութիւն անշարժութեան վերայ, այնքան էլ քաղցր ու պարարիչ է մեր սրտին, լսել

Կոլխիսի բերանից այն օր ու դիշեր ալպիւնակատար ձգնողական կեանքը, որ յանձն է առնում սուրբ Մեսրոպը ազգային ուսման և մանուկների դաստիարակութեան համար, որպես մի հոգաբարձու ։ այր, որպես մի ճանապարհորդ ուսուցիչ, որպես մի առաքեալ — որպես մի մարդ, Պաւղոսի համառպատիւ և զուգակից:

Կոլխիսի դրուածը երկու անթռուածան և նօսրագիր, բայց հին և վաւերական համարուած օրինակների համեմատութեամբ, ինչպես հաւատացնում են ազգագրողքը, թէպէտ ամենևին անկրկնելի և շատ տեղ կցկտուր, գուշակելը քան թէ հասկանալի, տպած է ի Վենետիկ 1833 թուականին, Մատրէ ի Աբծանոզի և Դաւիթ անյաղթի գործերի հետ միասին: Ինչ օգուտ ազգին այդպիսի տպագրութիւնից. ինչպես միւս արտադրութիւնքը ։ այդց հնախօս մատենագրութիւնների, նոյնպէս և Կոլխիսի վարքագրութիւնը սուրբ Մեսրոպի միութիւն մինչև այսօր մի թաղած գանձ ազգի համար, այո՛ անկորուստ, բայց ոչ ուամ պիտանացու, բաց ի մի քանի ուսումնականներից. թէպէտ և դոքա այս լոպէիս այլ բանեղով են պատրաստած, քան թէ ։ այական հնութեան գրուածքը բանալով այժմեան ։ այերի աւաջև. ով կարող է մեզադրել դոցա այնպիսի ազգի մէջ որ սովոր է միշտ կաղապի եղի ցուցքը կապել, թէպէտ շատերին ցանկալի էր իւրեանց ցոլեանը իստակել յարդից: Պրպտ և է այդ ալդպրայի դանդատը, թող ։ իւսիատասլը, ինչքան ձեռնհաս է այս լոպէիս, լցուցանել իւր հայրենասիրութեան պարտքը, ծանօթացնելով այս տեղ մեր ազգը Կոլխիսի վարքագրութեան հետ: ։ նախօս բնագիրը լինելով շատ ճապաղ և ամենևին գուրս եւրոպական ժողով ու ամիսոի ոճից, կարող ենք միայն ծաղկաքաղ առնել այդ գրուածի բովանդակութիւնը և յոյս ունինք որ այդպէս առնի կենդանութիւն առանց ընթերցողի առաջև ազգի ականատես ազամարդի բազմաստակ ազգաշէն կեանքը:

Կոլխիսը պատմում չէ մեզ սուրբ Մեսրոպի եւեհոյական տարիների հանգամանքը, այլ նորա այրական հասակի արդիւնաւորութիւնքը, և այդ է նորա իսկական կեանքը, որին արժան է մեզ նուիրել մեր ուշադրութիւնը:

Մեսրոպ Մաշթոցը ծնած է Տարօնի գաւառում, ։ այնկեայ գիւղի մէջ, որպէս որդի մի երանելի մարդու, ով ։ արշան անուն: Մանկութեան հասակում հօր հոգաբարձութեամբ վարժած լինելով յունական գպրութեան մէջ, գալիս է Ընշակունեաց թա-

դաւորների գաւառը, ազգունական դիւանի մէջ սպասաւոր լինելու այն միջոցին, երբ Հայոց աշխարհի վերայ հաղարապետ էր մի Աուսան անունով իշխան: Աշխարհական կարգերին տեղեկանալով, և հմուտ լինելով զինուորական ուսուեատին, գլուխ իւր զօրականների սէրը. ուշադիր պարապելով աստուածեղէն գրքերի ընթերցանութեամբ, շուտով լուսաւորվում և ճանաչում աստուածատուր հրամանների հանդամանքը և այդպէս ամենայն պատրաստութեամբ լցուցանում իւր պարտականութիւնքը իշխանների սպասաւորութեան մէջ:

Ա՛ի վոքը յետոյ Աեսրոպը փոխում իւր կեանքի ասպարէզը, մերկանում իւր աշխարհական ցանկութիւնքը և նուիրում իւր անձը մարդասէր Հատուածոյ ծառայութեանը: Ղ՛ումինք Աղուիանի բերանից, թէ Աեսրոպը այս միջոցին տառանձնանում մարդկային ընկերութիւնից և տալիս է իւր անձը լիառնակեցութեան, քաղցի և ծարաւի, մինչև բանջարաճաշակութեան, անդոյս արդելանքի, խարտեաղգեստ և գետնատարած անկողիններին, շատ անգամ դիշերի հանդիստը և քնի հարկը ոտքի վերայ և մի լուսէի մէջ վճարելով: Այս բաների մէջ պատկերանում միայն այն ժամանակի հոգին, երբ կացած է սուրբ Աեսրոպը: Թող մի մտաւով և նա, իբրև հոգևոր անձն, հասուցած լինի իւր հարկը այն մեծաւ տեսութեանը թէ պիտոյ էր տանջել և սպանանել մարմինը, հոգին կենդանեցնելու համար, բայց միւս մտածով պիտոյ է ասել, առանձնակեցութիւնը ունոյց մարդկի մէջ ինչ ինչ պայմանների տակ շատ հարկաւոր է եղած: Յողովրդի բազմութեան խռովալից շրջակայքը միշտ հալածել է դէպ ի անապատ այնպիսի մարդիկ որ ասես թէ թուխս էին նստած իւրեանց խորհուրդների և դաղափարների վերայ. մտախոհ, և մեծ առաջարկութեամբ յղի մտքերիկ հնութեան դարերում միշտ խնդրած են դաշտ և անապատ. դոյն բանը երևում Յովհաննէս կարապետի մէջ, Ա՛րիստոսի երկրաւոր կեանքում. դոյն բանը ցուցանում են ազգային լուծքի մատուցների վարքը: Ա՛այց սուրբ Աեսրոպի անապատական կեանքը չէ տեւում երկար. դա լինելով նորա մէջ մի փոխանցական միջոց, իւր կենսական ոգևքը ժողովելու և ամրապնդելու, ասես թէ աշխարհի խռովալից տրտունջից հեռաւոր լռչեանի մէջ մի քանի ժամանակ շունչ առնելով և դադարելով, որ ապա նորոգեալ աւելի զօրացած և լիաշունչ թոքերով — վերջանում շուտով. քան որում խնայի

Մեսրոպը քաջ գիտէր, որ իւր գործառնութեան ասպարէզը չէ մեռեալ անապատը, սար ու ձորը, այլ մարդկային ընկերութիւնը, ուր միայն կարելի է աւաքինանալ, ուր միայն կարող էր Մեսրոպը աւետարանական սերմի վարուցանք առնել: Եւ այսպէս տեսանում ենք Մեսրոպը դուրս գալով իւր առանձնութենից իջանել դէպ ի Վաղձան գաւառը, ուր հիւանդասիրութեամբ հանդիպ են դիմում նորան գաւառի իշխանքը: Երանելի Մեսրոպը, ինչպէս ասում էր Կորիւնը, իսկոյն ձեռք առնելով աւետարանական ալուհատը, Վաղձան իշխանի ստացութեամբ, բոլոր ժողովուրդը հեթանոսական դիւապաշտութենից դարձուցանում դէպ ի Քրիստոնէութիւն:

Այդ և այս տեղ ժողովրդի քրիստոնէական դաստիարակութեանը աւելի ամուր և ապահով հիմք տալու համար, շրջանկատ Մեսրոպը խելամուտ է լինում իսկոյն, որ իւր ձեռքում եղած հնարքը սակաւ ու թոյլ էին, քանի որում աւետարանի վարդապետութիւնը թուղթի խոպքով միայն կարելի էր տալ ժողովրդին, դեռ ևս պրատուղ ուսումն չլինելով Հայերի մէջ, որովհետև չկային հայկական նշանագիրք: Այս իրողութիւնը պատճառ է տալիս հայ բնասէր աղնիւ Հոդևորին ասել հառաչելով «Տրտմութիւն է ինձ և անպատում ցաւք սրտի իմոյ վասն եղբարց իմոց և ազգականաց:»

Մի քանի ժամանակ այսպիսի տրտում հոգսերի և խորհուրդների մէջ լինելով Վաղձան գաւառում, դիմումէ ապա դէպ ի մեծ Հայքի կաթողիկոս Սահակ պարթևացին և գտանում նորան պատրաստական ձեռնտու լինելու նոյն խորհուրդների կատարմանը: Նկեղեցու պաշտօնեայքը գումարվում են յօժարութեամբ և շատ օրեր աղօթք ու պատարագ են վերուղղում առ Աստուած, խնդրելով Հոգիների համար Քրիստոսաբեր փրկութիւնը, այսինքն Քրիստոսի աւետարանը հայկական դրով: Ամենապարի Աստուծոյ հաճանում նոցա պարզևական լուսաւորութիւն. ժողովուրդն մի աշխարհահոգ խորհուրդ երանելի միաբաններից, քննում են հարցուփորձով, արդեօք կային Հայաստան ազգի մէջ որ և իցէ նշանագիրք, և ապա ծանուցանում են խնդրելի գործը Իւրեանոյ Թադեայ Վրաստանի:

Վրաստանը պատմում նոցա թէ նա տեղեկացած էր մի ասորի եպիսկոպոսից, Դանիէլ անուն, որ ասում մնալ գտանվում էին Հայոց լեզուի ալփաբետքի նշանագիրք: Եկեղեցականք խնդրում են

վոյթ տանել այս պիտոյքին, և նա պատուէր տալով ուղարկուէ մի Ա՛ահելիճ անուն մարդ մի եկեղի մօտ, որին ասուէին Հարկ, որ յիշեալ տարի Դանիէլի ազգական էր։ Թագաւորական հրովարտակը հասանելով Հարկեան, սա անյապաղ դիմուէ Դանիէլի մօտ, տեղեկանալով նորա մօտ եղած նշանագրերին, սանձուէ նորանց և ուղարկուէ Թագաւորին դէպ ի Հայոց երկիրը։ Այս բանը լինելէ Ա՛ամշապուհի Թագաւորութեան հինգերորդ տարում։ Երանելի հոգաբարձուքը այս յանկարծագիւտ յաջողութեան վրայ ուրախանալով, սանձուէն Թագաւորից մատաղ մանուկներ և սկսանուէն դործ դնել նորագիւտ նշանագիրքը, յարմարեցնելով հայկական լեզուի ձայներին։ Երկու տարի տևուէ այս դործը, մինչև վերահասու են լինում, թէ Դանիէլեան նշանագիրքը բաւական չէին Հայոց լեզուի վանկերը և կապերը պատշաճապէս բայցատրելու. այս պատճառով կրկին անդամ անձնատուր են լինում հոդսերի և աշխատութեան դատանել դործի եղքը։ Երանելի Մեսրոպը առնուէ իւր հետ մի փոքրիկ բազմութիւն մանուկներ և երթուէ դէպ ի Եդեսի կողմերը, այսինքն երկու Ասորեստանի քաղաքները Ուռհայա և Ամիդ, ուր հանդիպուէ Բարլեայ և Ակակիոս եպիսկոպոսներին, որ քաղաքի կղերականներով և իշխաններով ընդունուէն նորան։

Աշակերտասէր վարդապետը իւր հետ տարած մանկունքը բաժանուէ երկու դաս. մի մասը կարդուէ աշակերտավելու ասորի դպրութեան, միւսը յունականին. Ապա Մաշթոցը պատրաստվուէ դնալ դէպ ի Սամոսատա (մի ամուր մայրաքաղաք Ասորեստանի, Ադամգինէ գաւառում, Եփրատի արևմտեան եղերում), և այս միջոցին տալով իւր անձը անդուն աշխատութիւններին և աղօթքին, իւր ապրելու օգտելու համար, վերջապէս ամենաշնորհուն Աստուած պարգևուէ նորան վիճակ, հայկական տառով ճոխանել մի նոր և աբանդելի ճոխութ, այսինքն հայերէն լեզուի նշանագիրքը։ Նորա հնար տուէրին իսկոյն տալես է անուններ և կարդուէ նոցանից վանկերը և կապեր հայկական բառերի։ Ինչքան կարելի է մեզ հասկանալ Աորիների ճառագայ խօսքերից, յիրաւի թագը յաւուրց յաւուրց հետ կապելով, պիտոյ է ասել, որ Մաշթոցը իւր պանծալի պիտոյ վառուակուէ նոյն իսկ Եդեսի աշխարհաւանը կամ Եդեսիայի կամ թէ Ամիդի մէջ. որովհետև լսուէինք, թէ նա այնու հետև հրաժարվելով յիշեալ երկու եպիսկոպոսներից, իջանուէ դէպ ի Սամո-

ստուա [1]): Ահա տեղ գտանելով Մեսրոպը մի գրիչ հելլենական դպրութեան, Հռոմանոս անունով, սորա ձեռնատուութեամբ կարգադրութիւն որոշելով հայկական նշանագրերի ներքագրները, կարճ ու երկայնը, պարզը և կրկնաւորը: Ահա բառերը Կորիւնի իրաւունք են տալիս մտածելու, որ այդ Հռոմանոս Յոյնը չէ աշխատել միքենայարար, այլ բանագիտութեամբ, փորը ի շատէ տեղեակ լինելով հայերէն լեզուին, դորա ձայնաւորների երկայնութեանը կամ կարճութեանը, բաղաձայնների պարզութեանը և կրկնաւորութեանը: Գիտութեան առաջև ոչինչ կշիռ չունի մի նեղսիրտ հայրենասիրութիւն. գիտութեան խնդիրը է վերահասու լինել ճշմարտութեանը, թէև դա պիտոյ է կորճատել մի քանի հայրենասիրական քաղցր նրաշներ: Հայերը և դորա մէջ մեր գիտնական բարեկամ Նշմինը [2]) կարծում են թէ Հռոմանոսի օգնութիւնը Մեսրոպին եղել է մի վայելուչ գրչի օգնութիւն, որով նա ձևակերպել է լոկ, հայկական տառերի կերպարանքը. Մաշթոցը հնարում էր այդ նշանագիրքը, բայց Հռոմանոսը իրրև քաջ գրիչ ձևակերպում դորանց. դորա մի փորը մութ խօսքեր են. պատճառ, ով որ տառերը հնարել էր, նա էս պարտ էր կատարանել ձևակերպել նորանց, և այդ գործի մէջ հարկաւոր չէր իսկոյն մի վայել-

[1]) Զարմանալի բան է, որ մեր հեղինակները ամենևին ժամանակակից միմեանց, ամեն մինը այլապես են պատմում Հայոց նշանագրերի գիւտի հանգամանքը. մի անգը, որին պիտոյ էր նոցա անհիմնապար և ճշտութեամբ տեղեակ լինել: Ղազար Փարպեցու պատմագրութեան մէջ, երես 98, կարդում ենք գանազան տեղեկութիւնք, որ չունի Կորիւնը: Ղազար Փարպեցին տառերի մեզ թէ Մեսրոպը նդեսիայի մէջ հանդիպում մի Գրաման հեթանոս Ճարտասանի և սորա հետ խորհրդակից լինելով, անպատեղ է մնում. բայց Ճարտասանը տառերի Մեսրոպին թէ ինքը ունեցել է մի շատ հատու վարդապետ, Եպիփանիոս անունով, որ կարող էր օգնական լինել Մեսրոպին խնդրելի գործի մէջ: Ապրուհետև Մեսրոպը Փիւնիկիայի վերայով երթում Սամս խնդրելու Եպիփանիոսին, բայց սա մեռած է լինում, թողնելով մի աշակերտ Հռոմանոս անունով, շատ հմուտ հելլէն գրչութեան: Սորան ևս հանդիպելով Մեսրոպ և սորանից ևս անշահ մնալով, տպատրնում աղօթքի. և այս միջոցիս ոչ քնի և ոչ արթնութեան մէջ տեսիլ է տեսանում, այլ Հոգին սրբոց ալ ձեռքի ինաթը նորա սրտի գործարանի վերայ երևութանալով, գծագրում նշանադիրքը որպես թե քարի վերայ, և գործի հանդամանքը որպես մի ամանի մէջ հատաքրում Մեսրոպի մտքումը: Ահա, յանկարծակի Հոգով աղօթքից գթասանալով Մեսրոպը, սանդ-ձանում նշանագիրքը գարձեալ «Գործադրութեամբ Հռոմանոսի» օրից անշահ էր մնացել: Բայց Հռոմանոսը այնու ամենևին Մեսրոպի առաձնն պատրաստ դիրը ձևակերպումէ (չէ վայելչագրում), փոխադրելով Հայոց ալրու բնիքը, հետևելով հելլենական վանկերի անախտ յարմարութեանը: Ասիական գեղեցիկ պատկերախօսութեան մէջ, Մեսրոպի յանկարծակի Հոգով մտապատութիւնը և նորա հետս յանկարծակի պայծառակերպութիւնը տատանաձուղն լուսով, հրաշքի կերպարանք է տալիս, առանց մի բան յանկարծ ենթադրելու բանի բուն խորհրդի վերայ:

[2]) История Арменіи Моисея Хоренскаго. Москва, 1858. երես 375—376.

չարուհաստ յոյն գրիչ։ Ա՛իսա դնելով հայկական նշանագրերի ձևա-կերպութեանը, այլև այն ակնարկութիւնները, որ գտանում են մեր հին ձեռնարկների մէջ, դուցէ պիտոյ էր մեզ իմաստասիրել թէ Ա՛աշ-թոցը յոյն Հռոփանոսի հետ միասին յարմարել է հայերէն լեզուի նշանագրերը, աչքի առաջև ունենալով յունական ալփաբետի ձևա-կերպութիւնքը. այս տեղ բանի զօրութիւնը վայելչագրութեան մէջ չէ, այլ Հայոց նշանագրերը ձևակերպելու յունական ալփա-բետի օրինակով. և այս գործը աւելի հեշտ էր մի յոյն քաջողակ գրչէ, քան թէ հայ մարդու։ Ա՛հարոպեան տառերը մեծ և խոշոր նշանագրեր էին, այժմեան գլխագրերի նման և գրվում էին ար-կաթով, և այդ պատճառով աստուած են երկաթագրեր. այդպէս գրած են և յունական ու հռոմէական մատեանքը հին մատաղաթ-ների վերայ. բոլոր և մանր գիրը վերջին ժամանակների գործ է։

Նշանագրերի գիւտը յատաջանալով, լսումենք Կորիւնից, որ Ա՛աշթոցը իւր երկու աշակերտներով, առաջինի անունը Յով-հան, Նկեղեայ գաւառից, երկրորդինը Յովսէփ Պաղնատական տա-նից, ձեռնամուխ են լինում թարգմանել սուրբ գիրքը, սկսանելով Սաղմոսի առակներից։ Այս թարգմանութիւնը գրվում էր նոյն Հռոփանոս գրչի ձեռքով, որ և ուսուցանում մանուկներին հայ-կական դպրութեան արուեստը։

Ա՛աշթոցը կատարելով հայերէն լեզուի նշանագրերի գիւտը, հոգևից ուրախութեամբ վերադառնում իւր ընկերակիցներով դէպ ի Հայաստան, Վաղարշապատ Թագաւորի կառավարութեան վե-ցերորդ տարում։ Կորիւնը ասում մեզ մի փոքր ձեռագասանական ձևով, թէ Ա՛ովսէս մեծը ոչ այնքան զբաղմունքի իջանելով Ա-նէական սարից, բերելով իւր հետ օրէնքի տախտակը, ինչքան Ա՛աշթոցը Ամսխատանից դէպ ի Հայաստան, բերելով իւր հետ Հայոց նշանագրերը։ Պատճառ, Ա՛ովսէսը բերելով Խարայէլացոց ազգին աստուածային հրամանը, գտանում նորանց տիրադրուժ, իւրեանց ձուլածոյ կուռքին երկրպագու, որ և լինում պատճառ բարկութեան և խորտակելու օրէնքի տախտակները։ Ասայց երանելի Ա՛աշթոցը ոչ այսպէս. այլ ինքն հոգևոր մխիթարութեամբ լցուած, հանդիպում նոյնպիսի յօժարական և ուրախ սրտի ընդունելու-թեան իւր ժողովրդի կողմից։ Եւ արդարև, Հայոց ազգը գրելով իւր դպրութեան գիւտի մեծախորհուրդ հետևանքը, — ազգային դպրութեան, որով հայկական իմացականութեան վաստակը պի-

ոյ է մշանջենաւորվէին և դարուց դար աւանդվէին յետոյ գալոց սերունդին — Հայոց ազգը իւր տաւերի դիւտը Մեսրոպ Մաշ-թոցի աշխատասիրութեամբ համարել է աստուածառաք պարգև, մեծահանդէս կերպով տօնակատել է նորան որպէս մի նոր խորհրդա-ւոր դարագլուխ Հայաստանի համար:

Ընդհուպհեւ թագաւորից հրաման է տանում հոգևոր ուխ-տը դաստիարակել ժողովուրդը հայկական դպրութեան մէջ: Ըս-կանում են գործը Մարաստանի խոշորացնելու ժողովրդից, որին Արիւնը տալիս է դիւական տատանայակիր բոլոր ճիւաղութեան և յատկացուցիչ բառս «դժուարամատոյցք», ըստ որում իւրեանց խոշոր և անճոռնի լեզուախօսութեան պատճառով և անհասկանալի էին և դժուար դաստիարակելի: Ընդ տեղ գործ ունէին դաստիա-րակիչքը ոչ միայն հետ թեքելի մանուկների, այլ հատակաւոր կո-պիա մարդերի հետ. բայց լսում են Արիւնի բերանից, որ պար-զախօս ուսուցիչների աշխատութեամբ այդ բարբարոս ծնունդքը կրթվելով, կացուցանվում էին աստուածատուր իմաստութեան ծը-նունդք. մինչև որ մանրամասնաբար տեղեկանալով օրէնքի պատ-գամներին, ամենևին հրաժարվում էին իւրեանց բնական խոշորու-թենից: Ընդհուպհեւ հոգևոր ուսուցիչքը սկսանում էին թար-գմանել և գրել և ուսուցանել, կատարելով վրկչատուր հրամանը. «Եղէք ընդ ամենայն ազգս» և թէ «Պատրաստեցէք աւետարանս ընդ ամենայն տիեզերս:» Ընդպէս և երանելի Հայրքը համարձակութիւն առած, երևելի և արդիւնաւորապէս յուցանում էին իւրեանց մշա-կութիւնքը աւետարանի այգեգործութեան մէջ:

Այն ժամանակին — դեղեցիկ հոգեզմայլութեամբ բարբա-ռում Արիւնը — երանելի և ցանկալի Հայաստանը յուցանում էր մի սքանչելի տեսարան. յանկարծ Մովսէսը մարգարէական դաստ-հետ, և յառաջադէմ Պաւղոսը առաքելական գնդով, և Քրիստոսի աշխարհակեցոյց աւետարանը հայաբարբառ խօսում էին Հայաս-տանու ժողովրդի մէջ:

Ընդհուպհեւ Հայաստանը, որ ըստ ևս չէր համբառը այն կողմերի, ուր եղել էին բոլոր աստուածագործ սքանչելիքը, իսկոյն խնամուա էր լինում բոլոր եղած իրողութիւններին, ոչ միայն ժա-մանակով պաշտած սրտորոգութիւններին, այլև յառաջուց, մար-գարէների բերանով գուշակած գալոց բաներին և յետոյ եղածների

սկզբին ու կատարածին և բոլոր աստուածատուր աւանդութիւն-
ներին: Ընդհետև հոգևոր ուսուցիչքը արձակ համարձակ սկսա-
նումէին ուսուցանել և թելքել նորադիւտ վարդապետութեան ա-
շակերտքը և կրթել նոցանից քարոզիչք անդէտ մարդերի համար:
Նոյն իսկ ժողովուրդը Հայաստանի կողմերից և դաւառներից ջեր-
մեռանդութեամբ հաստատումէր դէպ ի Աստուծոյ գիտութեան բա-
ցած աղբիւրը Երարատ գաւառի մէջ, ուր էր թագաւորների և
քահանայապետների կայքը: Ապա եկեղեցու սիւները միջամուխ
ձեռքով սկսան գործել Քրիստոսի աւետարանիչների գործը, ժո-
ղովելով Հայաստանի զանազան տեղերում և դաս դաս որոշելով
ճշմարտութեան աշակերտվածքը և արդէն ի կատարումն գիտու-
թեան հասածները, որ կարող էին ուսուցանել միւսներին: Սոցա
առաջև կանոն և օրինակ դնելով իւրեանց յատուկ վաստակները,
պատուիրեցին հաստատ մնալ նոյն կանոնի մէջ: Եւ իւրեանց մե-
տակայ արքունիքը բոլոր աղատագունդ բանակովը դաստիարակու-
մէին աստուածեղէն իմաստութեան մէջ: Երանելի Սահակ պար-
թեւացին առաւել փութով պարապեցնումէր Քրիստոսի վարդա-
պետութեանը Մաժիկոնեանց տան որդիքը, որոնց մէջ առաջինը
ասվումէր Վարդան կամ Վարդիկան. նմանապէս հոգածու էր նա
ամենայն անձն ուսուցանել, կրթել և հաստուցանել ի գիտութիւն
ճշմարտութեան:

Ապա երանելի Մաշթոցը հաւանութիւն առաւ լինել արդի-
նակատար այսպէս. որ տէր եպիսկոպոսը (Սահակ պարթեւացին)
քարոզէ աւետարանը Հայենական կողմերում, այսինքն մայր արա-
թաւեան աշխարհի մէջ, իսկ Մաշթոցը կեանքի բանը սերմանէ
շրջակայ ցանուցիր սփռած հեթանոսների մէջ: Ընդ այսպէս, Մաշ-
թոցը իւր երկու օգնականներով, որոնց առաջինը ասվումէ Տիրայր,
Խորձենական գաւառից, երկրորդը Մուշէ, Տարօնու նահանգից,
այլև միւս սպասաւորներով աւետարանի, ճանապարհորդելով իջա-
նումէ դէպ ի Գողթան աշխարհը, ուր արդէն եղած էր միանգամ:
Ընդ սեղ իւր սովորական վարդապետութեամբ ուսուցանելով ժո-
ղովուրդը, լսուցանումէ այն գաւառը Քրիստոսի աւետարանի ոչ
ջունով. այս առաքելեղի մէջ գործակից է լինում նորան մի բարե-
պաշտ մարդ, Շաբաթ անուն, և յետոյ սորա որդի Գիւտը ամենե-
րին հայրաբարոյ գտանվելով, իրրև որդի հօրը հաւասար, շատ
սպասաւորութիւն է նտնում Վարդապետին:

Ա՛աշԹոցը ԳողԹան աշխարհից ելանումէ դէպ ի սահմանակից Ա՛իւնիք, և գտանումէ այն տեղ աստուածասէր հնազանդութեամբ ընդունելութիւն երկրի իշխանից որ ասվումէր Վ՛աղենակ. սա ցուցանումէ նոյնպէս շատ օգնականութիւն, Ա՛աշԹոցի դիտաւորութիւնքը յառաջ տանելու: Ա՛աշԹոցը ժողովումէ մանուկներ որպէս նիւթ իւր վարդապետութեան, առաւելապէս գազանամիտ և վայրենաբարոյ կողմերից և այնպէս մեծափոյթ, գայեկաբար սնուցանումէ և գաստիարակումէ նորանց, որ սոյն իսկ վայրենի մարդերից կարգումէ եպիսկոպոսներ տեսուչք Ա՛իւնեաց եկեղեցու վերայ, որոնց մէջ յիշումէ Կորիւնը մի Ընանիաս, սուրբ և երևելի մարդ:

Ընդ միջոցիս Ա՛իւնեաց իշխանութեան աԹոռը յաջորդումէ քաջ Ա՛իսական Վ՛ասակը, մի խոհական, հանճարեղ և յառաջիմաց մարդ Ընտուծոյ շնորհատուր իմաստութեամբ: Ընդ Վ՛ասակի մեծապէս նպաստութեամբ յառաջադէմ է լինում Ա՛աշԹոցի աւետարանական վարդապետութիւնը Ա՛իւնիք աշխարհի մէջ:

Ա՛ի քանի միջոց սորա վերայ անցանելով, Ա՛աշԹոցը մտածումէ բարեկարգել և դրացի բարբարոսական կողմի, այսինքն Վ՛րաց աշխարհի կրօնական դրութիւնը. և որովհետև այս ձեռնարկութիւնս անկարելի էր առանց դաստիարակութեան, առանց գիր և դպրութիւն տալու ազգին, Ա՛աշԹոցը, ինչպէս երևումէ վերը ի շատէ տեղեակ լինելով Վ՛րաց լեզուի ձայներին, հնարումէ և կարգումէ նշանագիրք Վ՛րաց համար. և ի քանիքը իւր լաւագոյն աշակերտներից առնելով իւր հետ, գալիս է Վ՛րաց աշխարհը, և յանդիման լինելով Թագաւորին որ ասվումէր Վակուր և աշխարհի եպիսկոպոսին, Ա՛ովսէս անուն, գտանումէ այն տեղ ընդունելութիւն և գործունէութեան ասպարէզ:

Ա՛աշԹոցը իւր խորհուրդը մի ՚ի ՚աղայ անունով, վրացերէն լեզուի Թարգմանի ձեռքով ծանուցանումէ Թագաւորին. այնուհետև Վ՛րաց իշխանը Վակուր հրամայումէ իւր Թագաւորութեան խառնիճաղանջ գաւառներից ժողովել մանկունքը և յանձնել եւ կաւոր վարդապետին: Ա՛աշԹոցը ձգումէ դորանց իւր վարդապետութեան բովի մէջ և մաքրումէ ամենայն կեղտից և ապականութենից իւրեանց հայրենական անուսումնադործ սովորութեան:

Ընդապէս, Ա՛աշԹոցի անվաստակելի արդիւնաբերութեամբ ընտազան ազգեր մտանաւոր և բաժան բաժան լեզուներից, միակ

աստուածաբաղձաւ աւետարանի ջօրութեամբ կապվումեն մի ազգ և շինումեն մի Աստուծոյ փառաբանիչք: Սոցա վիճակի եպիսկոպոս եղած է և իմ անարժանութիւնը — ասումէ Պօղիւնը — բայց առաջին վիճակաւորը այս տեղ եղած է Յամուէլ, ալքումնական եպիսկոպոս: Երբ որ Մաշթոցը արդէն կարգել էր աստուածպաշտութեան գործը Վրաստանի ամենայն տեղերում, այնուհետև հրաժարվելով վերադառնումէ դէպ ի Հայաստան և պատահելով Սահակ կաթողիկոսին, պատմումէ բոլոր եղածների ողջութիւնը, փառաւորելով ամենայն յաջողութեան պարգևատուն Աստուած:

Այս դարձեալ տեսանումենք երանելի Մաշթոցին առաքելագործ հոգաբարձութեամբ եղանել շրջելու Հայոց աշխարհի գաւառների մէջ, որ աշակերտվածքը հայկական ուսման քաջալերէ, նորոգէ և հաստատէ: Եւ երբ որ ամենայն տեղերը Հայաստանի լցուցել էր Աւետարանի քարոզութեամբ և զգուշացուցել էր ամենեցուն հեռի մնալ ամենայն արատաւոր գործից և վարել կեանքի ձանապարհը, այնուհետև խորհուրդ է առնում վանն Հայոց կիսաբաժնին, որ Հոռոմների իշխանութեան տակ էր: Մաշթոցը ձանապարհ է ընկնում դէպ ի Յունաց աշխարհը բազմաթիւ աշակերտներով. նորա գերազանց բարեգործութիւնների համբաւը, յառաջուց արդէն հռչակված լինելով այս կողմերում, աշխարհի եպիսկոպոսքը միամտութեամբ և ընտանեբար ընդունումեն նորան. պատվումեն նորան իշխանքը և գաւառականքը, մանաւանդ աշխարհի սպարապետ Անատոլիոսը, որ և գրով ծանուցանումէ կայսր Թէոդոսիոս երկրորդին (Արկադիոսի որդուն) Մաշթոցի գալուստը: Կայսրը հրամայումէ վայելուչ մեծարանքով ընդունել սուրբ Մեսրոպը և անուն կոչել նորան Ակումիտ, ինչպէս գրումէ Պօղիւնը (գուցէ սխալմամբ, փոխանակ Էնկոմիոս ἔγκώμιος, այսինքն ընտանի, երկրային մարդ):

Մաշթոցը իւր աշակերտքը տանելով Մելիտինէ քաղաքը, յանձնումէ նորանց քաղաքի Ակակիոս անուն եպիսկոպոսի հոգաբարձութեանը, և կարգումէ նոցա գլխաւոր, Վ. Լևոնդէսը, մի հաստատամիտ և ճշմարտասիրտ մարդ: Անկով իւր հետ Դերջանու եպիսկոպոսը, որին ասումէին Վռնեթ, հասանումէ նա Թադասու բակաց քաղաքը Կոստանդնուպօլիս. և յանդիման լինելով կայսեր տանը և հայրապետին, որ ասվումէր Ատտիկոս, ընդունվումէ մեծարական ընդունելութեամբ: Մաշթոցը մի քանի ժա-

մանակ ապրումէ այս տեղ, վայելելով յունական եկեղեցու, պալատի և քաղաքի իշխանների հիւրասիրութիւնը։

Սուրբ Մեսրոպը պասկի տօնը կատարելով Կոստանդնուպոլսի մէջ և իւր ազգային պիտոյքը յայտնելով Թադեւոսին, հրաման ու հրովարտակ է առնում կայսրից Ժողովելու Հայոց կիսաբաժնի մանկունքը վանն աշակերտութեան, եկեղեցիների հաստատութեան, և սուրբը վարդապետը ամենայն տեղ պատուով և մեծարանքով ընդունելու մասին։ Մաշթոցը իւր ընկերակիցներով յաջողութեամբ վերադառնում է Հայոց ազգի կիսամասը յունաց իշխանութեան ներքոյ, և յուցանելով կայսերական հրովարտակը Հայոց սպարապետին, այնուհետև հրաման է արձակվում Յունահայքի գաւառների մէջ Ժողովել մանուկների բազմութիւնը պատշաճաւոր տեղերում և ուղիկ կարգել նոցա պահպանութեան և դաստիարակութեան համար։ Ապա երանելի Մեսրոպը գործ դնելով իւր վարդապետութիւնը, քաղցրացնում է մանուկներին հայկական ուսումը և դպրութիւնը։ — Երբեք այս Հայերը, մեր հարազատ եղբայրքը Յունաց հողի վերայ և Յունաց իշխանութեան տակ իրենց եղան. արդեօք այդ դժոխքի աշխատասիրութիւնը Մեսրոպի — որին յաւիտենական պարծանք — տևողացել պղտաբիր եղաւ և փրկեց մեր ազգը յունական ազգի ձուլող և կլանող ազդեցութենից։ Այ. Թէև Հայք դաստիարակվելով Լեւոնց Լեզուի մէջ, փորը ի շատե պահեցին իւրեանց հայախօս բարբառը, մնացին այո անուանքը Հայ, բայց հոգով ու սրտով դարձան յոյնք, այլև արեանաբբու Թշնամիք հայկական եկեղեցու, մինչև շատ անգամ դոյն իսկ Հայերը ռամիկ ժողովրդի մէջ ուրացան անգամ իւրեանց ազգակցութիւնը Հայերի հետ։ Այ կարող է միշտ մեղադրել Հայերին. այդ կը լիներ մի մեծ անիրաւութիւն. և ասիական աշխարհի անցքերը, ազգի անցնող աշխարհագրական դրութիւնը, միշտ սարկական վիճակը այլազգի իշխանութեան տակ, կարող չէին այլ հետևանքներ յառաջացնել քան թէ իրողապէս յառաջացուցել են։

Յունաց բաժնի մէջ հայկական ուսման դպրոցք հաստատուելոյ յետոյ, սուրբ Մեսրոպը ձեռնամուխ է լինում քննելու բարբառիանոս դժպատահ և կամակոր աղանդը, և ոչինչ հնար չդտանելով դեպ ի ուղղութիւն ածել այդ աղանդաւորքը, գործ է դնում Թշնամացուցիչ գաւազան, բանտ և տանջանք. անպտուղ մնա-

լով և սոքա, աղանդաւորքը խայտառակութեամբ տարապիր են լինում աշխարհից: Ով ոմ են այս բարբարիանոսեան աղանդաւորքը և ինչպէս էին դոցա կրօնական մոլորութիւնքը, ոչինչ տեղեկութիւն չէ տալիս մեզ Մեսրոպի վարքագիրը:

Այս բազմաշխատ կեանքի մէջ, որի պատկերը հանդիսացնում մեր առաջև Կորիւնը, Մեսրոպ մաշէթոցը մի վաստակ լրացանելով և վճարելով, և ահա ձեռնամուխ է լինում մի այլ վաստակի: Յունաց բաժնումն ձեռք բերելով Մեսրոպը բազում շնորհագիր մատեանք եկեղեցու ՚ասց, սկսանում ծովացնել վարդապետութեան խորութիւնը, այսինքն թարգմանելով և մշակելով հայերէն:

Այս միջոցին հանդիպում նորան մի երէց մարդ Ղազան ազգով, Ռևեհամին անուն: Մեսրոպը հարցանելով և քննելով սորա բարբարոս աղուաներէն խօսուածքը, իւր վերնապարգև շնորհով հնարում նշանագիրք և այս լեզուի համար: Կարդալով այսպիսի ծանօթութիւնք Կորիւնի մէջ, պիտոյ է ասել թէ Մեսրոպը ունեցել է մի առանձին աջողակութիւն հնարելու նշանագրեր զանազան այլահնչիւն լեզուների համար, Ասիայի մէջ: Այս բանը մանաւանդ պիտոյ է հեշտացած լինի Մեսրոպին, նոյն իսկ հայերէն լեզուի առատ և բազմահնչութեամբ ձայներով որ ունէին և ունին մեծ համեմատութիւն այլազգի ասիական ձայների հետ. ուրեմն և Մեսրոպին հարկաւոր էր միայն միանգամ հնարած հայկական նշանագրերի գանձարանից մի քանի յաւելուածներով կարդել և յարմարել միւս ասիական լեզուների տառեր: Ակնյայտ է, յայտնի է մեզ որ Սեմիտեան և ՚Նդկա-Եւրոպական լեզուների նշանագիրքը են այնպիսի դիւտեր, որ արած են միանգամ և ոչ թէ բազում անդամ: Սեմիտեան լեզուների ալիւբետքը, ինչքան և որոշվէին միմեանցից, այնու ամենայնիւ յառաջացած են զանազան կերպարանափոխութեամբ Արամէականից որ առաւել հին սեմիտեան լեզուն է, և պարսիկ ու տաճիկ լեզուները, թէպէտ այլ արմատի շառաւիղք, ունին հաստատակաց ալիւբետք Սեմիտեան արաբականի հետ: Փիւնիկեցի Կադմոսի ձեռքով Յունաստան բերած նշանագիրքը են աղբիւրը յունական և լատինական ալիւբետքի, ուստի յառաջացել են նոր եւրոպական լեզուների տառերը: ՚Այդոց նշանագրերը ունին ազգակցութիւն քաղդէականի, ասորի և յունական ալիւբետքի հետ. դորա վերայ պիտոյ է յաւելցնել իբրև

արմատական հիմք հին պարսկական, կամ Ք. ենգեան ալիաբեանքը, որ Մ՝եսրոպը անպատճառ սխալ է ունեցած լինի իւր աչքի առաջև, երբ որ կարդումէր ՛այկական նշանագիրքը։

Այնուհետև Մ՝եսրոպը հրաժարական ողջոյն տալով յոնական աշխարհի եպիսկոպոսներին, իշխաններին և եկեղեցիներին, այլև ՛այոց հաւատացեալներին վերակացուք թողնելով երկուսը իւր աշակերտներից, Ենովք և Դանան, կրծատուր մարդիկ և սեւ ատրանական սպասաւորութեան մէջ յառաջադէմ, վերադառնում մեծ ՛այքի կողմերը։ ՛ասանելով նոր քաղաքը (Վաղարշապատ) յանդիման է լինում Սահակ Պարթևին, ՛այոց թագաւոր Արտաշէսին և նորա բոլոր բանակին, պատմելով նոցա իւր գործերը, ինչպէս դրքա յաջողուած էին Աստուծոյ շնորհով։ Մ՝եսրոպը մնում այն տեղ մի քանի օր, լսուցանելու հոգևոր կարօտութիւնը և մխիթարվելու իւր սիրելիների կենակցութեամբ։ Այնուհետև ճանապարհորդում դէպ ի Աղուանից կողմերը և հասանելով թագաւորական տեղերին, տեսանում Աղուանից եպիսկոպոսը Երեմիա անուն, և նոցա թագաւոր Ելիսաղը։ Սոքա հպատակութեամբ ընդունելով եկաւորը, խնդրում նորա գալստեան խորհուրդը, և թագաւորն ու եպիսկոպոսը զուգանալով միմեանց հետ, յանձն են առնում հնազանդել մեսրոպատուր դպրութեանը։ ՛Լսանան է արձակվում, գաւառներից ու տեղերից ժողովել մանուկների բազմութիւնը և ուսուցանել նոցա դպրութեան արուեստը։ — ՛արցախ սիրութեան արժանի բան է, հարևանցի պարզել այս տեղ այն խընդիրը, թէ ինչ ազգից էին այս Աղուանք և ինչպես էր նոցա լեզուի հանգամանքը։ Աղուանից աշխարհի (որ օտար ազգերի մէջ տավում Ալբանիա) բնակիչքը շառաւիղած են ՛այկազն Միսակի զաւակներից։ այս Միսակը էր Դեղամ նահապետի որդին, որ բնակութեամբ լցուց այն աշխարհը որ տավում Միւնիք։ Բայց Միսակի սերունդի մի հատուածը անցանելով Կուր գետի միւս կողմը, բնակութիւն հաստատեց այն մեծ դաշտի մէջ որ յետոյ տավեցաւ Դաշտ Աղուանից։ Եւ այս Աղուանից աշխարհը, Մ՝ովսէս խորենացու ստորագրութեամբ նորա աշխարհագրութեան մէջ, ձգվում դէպ ի արևելք, Կասպից ծովից մինչև Կուր գետը, ուր լինում ամենամեծ ՛այքին. իսկ դէպ ի հիւսիսակողմը մինչև Սարմատիա, Կովկասի մօտ։ Ուրեմն, Աղուանից բնակիչքը են ՛այաստանի հին և մեծագոյն գաղթականներից մինը, որ շառաւիղելով

երևելի հայկազն տոհմից, որպիսի էր Արսակը, բազմանալով, կա-
ցուց մի առանձին թագաւորութիւն: Այս պատմական հիմքի վե-
րայ հաւանական է լինում եզրակացնել, թէ Աղուանից լեզուն,
որպէս Այասատանից դուրս գնացած գաղթականների լեզու, կա-
րող չէր լինել մի այլ լեզու արմատաբար, քան թէ հայկականը,
թող դա հեռանալով ազգային կենտրոնից, զանազան պայմաննե-
րի տակ, անցմամբ ժամանակի շատ փոփոխած լինէր և այլան-
դակված, ինչպէս սովոր է պատահել ազգերի մէջ, որ դէպ ի զա-
նազան կողմեր ցան ու ցիր եղած, ունէին մայր աշխարհի հետ կամ
շատ փոքր կամ ոչինչ հաղորդակցութիւն, և այս, դարատար ժա-
մանակներով: Այսպէս կարող էին Աղուանքը ընդունել այն լու-
սաւորութիւնը, որ Մեսրոպը իւր գալութեան ձանապարհով բե-
րել էր նոցա:

Ազգունական հրամանը արդեամբ և գործով կատարվելով —
այսինքն Աղուանից մանկունքը ժողովել և կարդել գպրոցների մէջ
և հոգալ նոցա դաստիարակութիւնը — այնուհետև Եբեմիա ե-
պիսկոպոսը գործ է դնում աստուածային գրքերի թարգմանու-
թիւնքը. որով, ասես թէ, մի լոպէի մէջ «Աղուանից դատարկա-
սուն և վայրենաբարոյ աշխարհը լինում էն մարգարէագիտք, առա-
քեալածանօթք, աւետարանաժառանգք, և բոլոր Աստուծոյ սուն-
դանեների ոչինչ բանով անհետեակք:» Եւս առաւել, Աստուծուց
երկիւղած Արսակ թագաւորը Աղուանից, աստիկ հրաման էր
արձակում այն «սատանայակիր և դիւամոլ ազգին» թողուլ և հրա-
ժարվիլ սնոտի հնացած կրօնից և հնազանդել Քրիստոսի ամե-
նահեշտ լծին:

Սուրբ վեսրոպի ձեռքով լուսաւորութեան սերմերը ձգվելով
Աղուանից աշխարհի մէջ, դորա թագաւոր Արսակը և Եբեմիա
եպիսկոպոսը վեսրոպատուր դպրութիւնը գործ դնելով ուսումնա-
րաններում, և աստուածային գրքերի բարբառը հնչելով ժողովըր-
դի մէջ, լուսաւորվումեն հեթանոսական խաւարով պաշարված
հոգիքը. նոր վարդապետութիւնը յաւաջադիմութիւն է գտանում
Խաղասանական կողմերում, սուրբ Մուշեղ եպիսկոպոսի ձեռն-
տուութեամբ: Այնուհետև Մեսրոպը հրաժարվելով Աղուանա-
կան կողմերից անցանում է դէպ ի Վրաց աշխարհը. հաստատելով
Վարդմանական ձորին, հանդէպ է գալիս նորան Վարդմանից իշ-
խանը, Խոսրս անունով, և հիւրասիրելով նորան աստուածասէր

երկիւղածութեամբ, առաջարկում էր նրան վարդապետութեանը, վայելում նորա քարոզութեան հիւթը և պատարագութիւնը և ապա ձանապարհ է ձգում երանելի վարդապետը դէպ ի ուր երթալու էր նա:

Մեսրոպը հասանում Վ. յաստան, Ըռձիւղ (Ըռձիլ) թագաւորի օրերում, որի պաշտպանութեան ներքոյ առաւելապէս պայծառանալով ծաղկում էր Քրիստոսի վարդապետութիւնը: Մեսրոպը իւր աշակերտներով շրջում էր ամենայն տեղ Վ. յաստանի մէջ, պատուիրելով հաստատ մնալ ճշմարտութեան վերայ: Տաշրացոց իշխանը, Աշուշա անունով, մի պատուական և աստուածասէր մարդ, անձը իւր բոլոր գաւառով հանդերձ տալիս է նորա ձեռք. և Մեսրոպը ամենայն տեղ սփռելով իւր վարդապետութիւնը և ոչնչ պակաս արդիւնակատար գտանվելով քան թէ միւս գաւառների մէջ, հաւատացեալքը յանձնում Սահակ եպիսկոպոսի խնամքին և վերադառնում դէպ ի մեծ Հայք, ուր և այսուհետև մնում ուղղակես, Սահակ Պարթևի հետ միասին հոգալով Հայոց ազգի հոգևոր և իմացական պիտոյքը:

Լսում ենք Կորիւնի բերանից, թէ այս երկու հոյակապ մարդիկը Հայաստանի, Սահակ մեծը և Մեսրոպը ուշ դնելով առաւել յարդել և դիւրացուցանել իւրեանց ազգի դպրութիւնը, Սահակ պարթևացին, ինչպէս նորա սովորութիւնն էր, ձեռնարկում թարգմանելու և գրելու: Եւ յայ միջոցին պատահում երկու եղբայք իւրեանց աշակերտներից ուղարկել դէպ ի Ասորոց կողմերը, Եդեսացոց քաղաքը (առաջինի անունը Յովսէփ, երկրորդին Ենձնիկ, Ընտրատեան գաւառի Կողբ գիւղից): Սոցա պատուիրած էր Ասորոց հարց գրուածքը թարգմանել հայերէն և ուղարկել Հայաստան:

Յովսէփը և Ենձնիկը իւրեանց վարդապետների հրամանը լսելուց յետոյ, ուղևորվում են դէպ ի Յունաց կողմերը, ուր ուսանելով և տեղեկանալով, կարգվում են ապա թարգմանիչք հելլենական լեզուի: Մի քանի միջոց սոցա վերայ անցած, իւրեանց յօժար կամքով դիմում են Հայաստանից դէպ ի Յունաստան միւս եղբայրք. սոցա առաջինն էր Դաւնդէս (Դիոնիսոս), երկրորդն ևս Կորիւնս, որ հասանելով Կոստանդնուպօլիս, միացան Ենձնիկի հետ իբրև իւրեանց առաւել ընտանի մտերակցի հետ, և միաբան աշխատութեամբ հոգալով ազգի հոգևոր պիտոյքը, լսուցանում էին

այն խնդիրը որ դրած էր նոցա վերայ. այսինքն ձեռք բերել առաջատուր դրքերի հաստատուն օրինակներ և շնորհագիր եկեղեցական հարց առնդրութիւնքը, այլև Նիկիայի և Եփեսոսի տիեզերական ժողովների կանոնադրութիւնքը հատուցանել դէպ ի Հայաստան:

Երանելի Սահակը վաղուց արդէն եկեղեցական դրքերի ամբողջութիւնը յունական լեզուից դարձուցել էր դէպ ի հայերէն. այլև աւելի շատ, սուրբ հայրապետների ճշմարիտ, խնամատուր գրուածքը: Երբ որ աստուածաշունչ դրքերի ճշմարիտ օրինակները բերած էին Հայաստան, Սահակ մեծը Եզնիկի հետ միասին ձեռնամուխ եղաւ յառաջուց, յանկարծ և շտապով արած թարգմանութիւնքը ստուգել և հաստատել, այլև թարգմանել սուրբ դրքերի մեկնութիւնք: Այսպէս ահա, երանելի հարքը օր ու գիշեր անցուցանում էին սուրբ դրքերի ընթերցանութեամբ, և այդպէս ծաղկելով և պտղաբերելով, նախանձաւորութեան բարի օրինակ էին լինում իւրեանց ուսումնասէր ընկերներին. մանաւանդ որ ունէին ղգուշացուցիչ պատուիրանք աստուածաճակարդ պատգամաւորներից, որոնցից առաջինը հրամայում է. թէ «Յօրէնս Տեառն խորհեսցիս ի տուէ և ի գիշերի. և երկրորդը նմանապէս պատուիրում է, թէ» Սիա դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան. մի՛ անփոյթ առնել ընդորհագդ որ ի քեզ են. յայդ խորհեա և ի դոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես, և զանձն ապրեցուսցես և զայնոսիկ որ քեզն լսիցեն:» Այլև Մաշթոցը ձեռնարկեց դրելոյ բազմադիմի ճոխաբան, դիւրապատում և շնորհագիր ձառեր մատղաշական դրքերի լուսաւորութենից և հիւթից, ձաւեր աւետարանական ճշմարիտ հատատի ամենայն ճաշակներով լի. որոնց մէջ յառաջ է բերում շատ նմանութիւնք և օրինակներ այս աշխարհի անցաւոր բաներից, առաւելապէս վասն յարութեան յոյսի հանդիսանալոյն. որպէս զի դոքա հեշտընկալ և դիւրաւ հասկանալի լինէին ամենայնիվին և մարմնական բաներով զգացական լինէին ախտերին, սթափելով, զարթուցանելով և հատատհիմն քաջալերով նոցանց դէպ ի խոստացեալ աւետիքը:

Երանելի Մաշթոցը իւր կեանքի բոլոր ժամանակը անցուցել է ճանապարհորդելով Այոց, Վրաց և Աղուանից կողմերում, ամառն ու ձմեռն, օր ու գիշեր, անվհատ և անյապաղ ամենայն սերմանելով Աստուծոյ բանի սերմը, իւր աւետարանական և ողջա-

պատում գնացքով, թագաւորների և իշխանների, հեթանոսների և անընդդիմանալի հակառակնորդների առաջև կրելով իւր մէջ Ա-մենափրկիչ Յիսուսի անունը: Նա ամենայն ոգի վառել է քրիս-տոսպգեստ և հոգեղէն զօրութեամբ, շատ բանտականների, կալա-նաւորների, և բռնաւորների ձեռքից ջարդուվաճճների համար ճա-լել է թողութիւն և ազատութիւն, ահաւոր զօրութեամբ Քրիս-տոսի. նա պատռել է անիրաւութեան շատ մուրհակներ, բա-զում սպաւորների և կարճամտաճճների մէջ իւր միխիթարական վար-դապետութեամբ նորոգել է և հաստատել է հանդերձեալ կեանքի հրանուէտ ակնկալութիւնը և, կարճ ասեմ, ամենայնը միանգա-մայն փոխել է դէպ ի աստուածպաշտութեան պայման:

Երանելի Մեսրոպը, միտ դնելով այն ժամանակների որպի-սութեանը և ազգի պիտոյքին, լինում էր շինող վանքերի և մենաս-տանների շէն ու անշէն տեղերում, դաշտերում և անապատներում, և ժողովում էր դոցա մէջ անհամար բազմութիւն վանականների: Այսպիսի վանքեր և սո անձնական տեղեր, ինչպէս Տարօնոյում, Նոյնպէս և Այրարատ մէջ լինելով սկզբում քրիստոնէական դաստիա-րակութեան, ուսման և դիտութեան օճիւանններ, ոչ որպէս մեր օրերում, դասարկապրտ տգիտութեան և անգործութեան կե-րակրանոցք, շատ օգտակար են եղած Հայաստանի համար որպէս պատսպարանք հայկական դիտութեան և քրիստոնէական ուսման, մանաւանդ վտիտորկալից դարերի մէջ և Հայաստանի քաղաքա-կան նաւաբեկութեան և Հայերի հոգմացրիւ տարուբերութեան միջոցին աշխարհից աշխարհ: Նոյն ինքն Աորիւնը շատ դեղեցիկ բառերով ակնարկում է մեզ Մաշթոցի ձեռքով հիմնարկած վան-քերի և վանականների սկզբնական խորհուրդը (որ այժմուս ամե-նեին անհետացել է) այսպէս ասելով. «Այնուհետև լինում էին տեղ չարքենալ դինով, այլ հոգով, և պատրաստել իւրեանց սիր-տը հոգևոր երգերով ի փառս և ի գովութիւն Աստուծոյ: Էին տեղ լինում կրթութիւն քաղցրաւոյց ընթերցուածների հո-գևապատում զրքերից, քաջալերութիւն յորդորական վարդապետու-թեան, յառաջադէմ լինելու դէպ ի ընտրութեան քրիստոսադիր կեաց նպատակի: այն տեղ եռում էին հոգիքը աստուածպաշտ ծառայութեամբ, կատարվում էին աղերսալի ապօթք և հաշտեցու-ցիչ լանպրուածք առ Աստուածք, ամենեցուն կենաց համար. ինքը Մաշթոցը իւր հոգևկան արուեստով ապրում էր շատ օրեր անա-

պատ տեղերում։ Երբ որ երիցունքը տեղեկութիւն էին տալիս նոր ան թէ այն կողմերի եկեղեցիների համար կային հարիւրաւոր հոգա լիք, և պիտոյ էր օգնութիւն. այնուհետև Մաշթոցը անյապաղ իւր գործակիցներով իջանուէին թիֆլունք լինելու պատահած դէպքերի մէջ, և վճարելով գործը, յորդորադին և պարարտագին ոճով և անփակ բերանով բղխեցնում էր վարդապետութեան վտակները լսողների սրտի մէջ։

Այս բոլոր բաները առնում էր Մաշթոցը ամենայն ժամանակ, թէ իւր և թէ աշխարհի համար. ըստ որում, ինչպէս ասում էր Նոր լինը, ճշմարիտ վարդապետները սովոր են իւրեանց առաքինու թիւնը կամն ունել աշակերտներին. մանաւանդ յուշ առնելով (միտ բերելով) տէրունական խօսքը. «Կանչի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել։»

Այս միջոցներում երևեցան Հայաստանի մէջ մի Թէոդիտոս անուն հոռոմի սուտապատում, ընդունայնախօս աւանդութիւնք։ Եկեղեցիների սիւնհոդոսական հայրապետքը այս մասին տեղեկու թիւն տուեցին Սահակ և Մաշթոց ճշմարտահաւատ փառաւո րիչներին. սոքա ճշմարտասէր փութով իւրեանցից դուրս մերժե ցին այդ աւանդութիւնքը, որ ըստ աւուր վարդապետութեան մէջ չհաստնվի ոչինչ աստուածայական ծուխ։

Որանից յետոյ պատահումէր երանելի Սահակին նոյն ճշմար տութեամբ, լցուած օրերով, աստուածաբեր բարի պտուղներով վայելչացած, վճարել իւր երկրաւոր կեանքի ասպարէզը Յազկերտի որդի Վռամ (Բահրամ) թագաւորի առաջին տարում, Քաղ լևանդ գաւառի Ռլոցոյց գիւղի մէջ, Նաւասարդի վերջում (Սեպտեմբերի տասին)։ Նորա ձեռնատուն աստուածասէր սրաշ ուծնեայքը, որոնց գլխաւորը ասվումէր Երեմիա, մի սուրբ և բա րեպաշտուն մարդ, մի աստուածասէր լշխանակնոջ հետ, Դուստր անուն, որ Վարդանի կինն էր, այլև մեծ սրբախոտմբ ժողովրդով վեր կալնելով հանդուցեալը առնուէին Տարսն, իւր բուն գիւղը Աշ տիշատ և առիւծուէն այն տեղ մարտիրոսական խորանի մէջ սուրբերի արկղումը։

Իսկ նորա երանելի զուգականը, Մաշթոցն եմ ասում, լսելով Սահակ մեծի վախճանը, շատ անձկայրեաց տրտմութեամբ և ար տասուալից սրտով պաշարված էր. վասն զի, դեղեցիկ խօսում էր նո րինը, եթէ Պատրոս առաքեալը չդատանելով իսկոյն իւր ընդհակից

Տիմոթէոսին, անհանգիստ էր լինում հոգով, ապա ոչքան ևս առաել պիտոյ է համարվի ճնացածների ցաւը ամենևին հրաժարվածների վերայ: Բայց թէպէտ միայնաւորութեան սրտմտութիւնը չէր թողում Աստուածին զուարթանալ, սակայն աւետարանական ընթացքը և սուրբ եկեղեցու վերակացութիւնը առանց պակասութեան տանում էր առաել փութով աշխատութիւնը յորդորել ամենեսեան դէպ ի քաջութիւն բարի բաների մէջ: Ձէր տալ նա ոչ քուն աչքին և ոչ նիրհ արտևանունքին, օր ու գիշեր պահելով և աղօթելով, աստուածաշունչ պատուիրանների հրամանը յիշեցնելով և զգուշացնելով մարդկերին, այլև գժուարութեայ վարքերը կրթելով:

Նա մինչ դեռ նա այսպէս իւր մերձաւորների հոգևոր եռանդը արծարծումէր, բազում խրատներ և զգուշացուցիչ թղթեր ուղարկումէր ամենայն գաւառները, նոյն տարու մէջ, երանելի Սահակի վախճանից վեց ամիս անցած, երբ որ Հայոց բանակը սուրբ վարդապետովը դառնալումէր արարատեան Նոր քաղաքի մէջ, նոյն հոգևկրօն վարքով հասաւ նորան քրիստակոչ կատարումը, սակաւօրեայ հիւանդութենից յետոյ, Մեհեկանի (փետրվարի) տասներեքին: Երբ որ պիտոյ էր նորան հրաժարվել իւր ձեռնասուն աշակերտներից և խառնվել Քրիստոսեան դնդի հետ, ցաւիցը թևթևացած ու սթափած, նստեց կանգուն, ժողովի մէջ և ձեռքերը տարածելով դէպ ի երկինք, յանձն արեց բոլոր ճնացեալքը Աստուծոյ շնորհին:

Նորա մտհգի մեծ ժողոված գլխաւոր աշակերտները սոքա էին. առաջինը Յովսէփ, որ յիշեցինք վերևումը. երկրորդը Յովդիկ. զգաստ մարդիկ և իւրեանց վարդապետի հրամաններին զգուշացողք: Օ՛ինուորական կողմից, առաջինը Վահան, Ամատունեաց ազգից, որ հազարապետ էր մեծ Հայքի. երկրորդը Համակ, Մամիկոնեան տոհմից. պատուական մարդիկ, երկիւղած հրամանատարք վարդապետական պատուէրների: Եւ Վահանը և Համակը եղան նոյնպէս, որ դիմալարդելով հանգուցելու մարմինը, աշխարհական ամբոխով, սաղմոսով ու օրհնութեամբ առան տարան դէպ ի Օշական (մի գիւղաքաղաք մեծ Հայքի մէջ, Վաղարշապատ քաղաքի հիւսիսակողմում) և այն տեղ ամփոփեցին մարտիրոսապանումը: Երեք տարի անցած, յաջողվեցաւ Ամատունի Վահանին մի վտաւաւոր, տաշած քարերով խորան կառուցանել

Ա՛հաւասիկ հանգստարանի վերայ, ոսկով և արծաթով և պատուա-
կան քարերով պատրաստելով նորա սեղանը:

Արիւնը աւարտումն իւր վարքագրական ճառը այսպիսի խօս-
քերով. ոչ եթէ հին համբառնելոյ տեղեկացած, մատենագրեցինք
այս բաները, այլ մեք ինքներս ականատես լինելով այն հոյակապ
տաճարին կերպարանքին, մնաւակաց դառնալով նորա հոգևոր գոր-
ծերին, լաւ լինելով նորա շնորհատուրմ վարդապետութեանը
և արբանեակ նոցա, ըստ աւետարանական հրամանների: Ոչ ստա-
պատում ճարտարախօս լինելով, խօսք ու ըղձայ արեցինք մեր հօր
մասին, այլ փախչելով յամբաստանութենից, կարգեցինք նորա
կերպարանքի համառօտիկ յատկանշանքը, որ ոչ եթէ միայն մեզ, այլև
ամենեցուն, որ կարդումեն դիւանական մատեանքը, յայտնի են:
Եւ կարող իսկ չէինք նորա բոլոր, կտակով մեզ աւանդած գործերը
մի ըստ միոջէ յառաջ բերել, այլ մնալով դիւրագոյն և հեշտագոյն
ասելիքի սահմանի մէջ, ծանօթութիւն տուեցինք շատ հարկաւոր
բաների մասին միայն: Եւ այս ոչ ի պատիւ Աստուծոյ սուրբերի,
որ ամենապարծ և կենդանատուր խաչովը ծանուցված յարգվեցան,
այլ որպէս քաջալերիչ օրինակ նոցա հոգևոր ծնունդների և նոցա,
որ նոցանով պիտոյ է ուսանին և աշակերտվին ազգերից մինչև
ազգերը:

(Շարունակութիւնը յետոյ.)

Ս. Նազարեանց:

ՆՈՒԻՐՎՈՒՄԲ ՑԻՉԱՏԱԿԻ ԹԱԳՈՒՀԻ ՕՐԻՈՐԴԻ ՓԱՆԵՄԱՆՑ։

Ո՜նչ արտասուք, սրտի կսկիծ քեզ նուիրեն
քո մայր, քոյրեր, քո հայրախնամ հոգաբարձու.
Ա՜յն խոր ցաւին, այն խիստ վէրքին, որ ձեռն մահու
պատրաստել է, դեղ ու դարման ո՛ւր որոնեն։

Որպէս ծառը իւր ծաղկի մէջ չորանումէ,
Որպէս ծաղիկ կոկոնի մէջ թառամումէ,
Ո՜հ, դու այդպէս անժամանակ ցամաքեցար,
կեանքիդ հիմքը խոր փորելով որդն ի չար։

Վէրք հարսնական թագ յօրինել մի ժամանակ
Ցուսով էին քո մայր, քոյրեր, բարեկամներ.
Ո՛վ մեղանիչ կարէր մտքով լինել գուշակ,
քո հարսնութեան ծաղկելու չեն այս տեղ օրեր։

Մեր յոյս, մեր լոյս, ուրախութիւն խլեցիր, տարար
քո հետ միասին գերեզմանում ամփոփելու.
Այս աշխարհի երկմիտ կեանքով շուտ յագեցար,
քեզ ընտրեցիր սուրբ օթեւան ընակելու։

Տէրը քո հետ, դու նազելի, մեր սիրական.
Դու չես մեռած մեր հոգու մէջ. դու կենդանի
Միշտ, հանապազ, ծաղիկներով յիշողութեան,
քանի որ կան քո սիրելիք, քո ընտանի։

Ս. Նալբեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Լնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր դանազան ֆիզիկական յայտնագործութեանների, հասարակախօս Աստեղագիտութեան, ֆիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերաբերեալ բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդաղօգուտ գիւտերի և յայտնագործութեանների մասին։

3. Լարդական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ձանկացողքը սոսնալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցեով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ. 20 Іюня 1860 года.

Цензоръ В. Бекетовъ.